Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

25. 8 35

1/1

334
И-27

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՄԻՈՒԹ.
,,ՀԱՅԿՈՈՊ"-Ի № 4

ՄԱՆՈՒԿ

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՈՒՂԻՆԵՐՈՎ

(ԱՌԱՋԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ)

Архивное Управление МВД Арм.ССР НАУЧНО-СПРАВОЧНАЯ БИБЛИОТЕКА

Բնակչության № 66

Այժմ մենք պետք է գիտակցենք և գործով ցույց տանք, վոր այն հասարակական կազմը, վոր մենք պետք է պաշտպանենք սովորականից ղուրս՝ կոոպերատիվ կազմն է։

ԼԵՆԻՆ

ՅԵՐԵՎԱՆ
Տպարան Առաջին Տպարան
1923

25835
24 JUN 2013
6047-2011

Պատվեր № 872

ՑԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գրքույկումս զետեղված հոդվածաշարը տպված լինելով 1923 թ. ընթացքում, մեր պարբերական մամուլում՝ այժմ բարեփոխված և նոր ձեռագիր հոդվածներով ու տվյալներով լրացված է լույս ընծայվում։

Սույն հրատարակության նպատակն է տալ մեր կոոպերատոր-գործիչներին և տնտեսական հարցերով հետաքրքրվող ընթերցողներին կոոպերացիայի դերի, նշանակության և հերթական հարցերի մասին ամփոփ ու պարզ բնորոշումներ։

Խորհրդային Հայաստանի վերածնվող կոոպերացիան վորոնում է կազմակերպչական նոր ուղիներ, փորձում է ստեղծել ծավալվելու և խորանալու հնարավորություններ։

Մեր յերկրի արտադրող ու սպառող զանգվածները բռնել են կոոպերացման ընթացքը և աստիճանաբար ընդգրկում են Միտասկոոպը՝ դարձնելով նրան իրենց տնտեսական ու հասարակական կյանքի զորեղ խթանը։

Հայաստանում ազգաբնակչության մասսայական կոոպերացման հարցն ավելի քան հասունացած է ու հրամայողական։

Կոոպերացիայի զարգացման ու պատվաստման հարցը զբաղեցնում է վոչ միայն կոոպերատիվ որգաններին ու բջիջներին, այլ և մեր պետական, տնտեսական և հասարակական բոլոր հիմնարկներին ու մարմիններին։

Մեզանում կոոպերատիվ գրականության կատարյալ սով է։ Հայաստանի կոոպերացիա'' ամսագիրը՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով՝ հազիվ չորս ամիսը մի անգամ է հրատարակվում։ Պարբերական մամուլը հնարավորու-

թյուն չունի լայն չափով արծարծել կոոպերացիայի խնդիրները և լուսաբանել զուտ կազմակերպչական հարցերը։

Հայաստանի կոոպերացիայի կազմակերպչական ձևերի, շինարարական ուղիների, ընթացիկ հարցերի ուրվագծերը տալիս է գրքույկս, որ նվիրում յեմ մեր սկսնակ կոոպերատորներին և կոոպերացած հասարակության։

Հեղինակ

I

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Համահայաստանյան առաջին կոոպերատիվ համագումարի բանաձևը)

1. Հայաստանի կոոպերացիայի շինարարության որինական հիմքը կազմում են 1921 թ. հունիսի 3-ի և նոյեմբերի 24-ի դեկրետները՝ միասնական սպառողական կոոպերացիայի մասին։ Միասկոոպերացիան կազմակերպվում է սպառողականի շուրջն՝ ընդգրկելով բանվորա-գյուղացիական մասսաներին և բավարարելով նրանց պարենավորման ու կենսական կարիքները։

2. Միասկոոպերացիան ստեղծվում է քաղաքի ու գյուղի արտադրողի ու սպառողի միջև սերտ հարաբերություն, տնտեսական շաղկապ՝ ներմուծելով գյուղում ֆաբրիկատներ և մատակարարելով քաղաքին պարենավորման, վերամշակման և կենսական արժեք ունեցող նյութեր, իրեր և մթերքներ։

3. Սպառկոոպերացիան մեր յերկրի իրական պայմանների թելադրանքի հետևանքով, աստիճանաբար վերցնում է իր վրա՝ գյուղատնտեսական, արտադրողական, հայթհայթման, վարկային և տնայնագործական ֆունկցիաները, վորոնք զարկ են տալու Հայաստանի գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացմանը։

4. Հայաստանի կոոպերացիան ընդլայնացնելով իր գործունեության շրջանակը—ընդգրկելու յե յերկրի բովանդակ աշխատավորության՝ բավարարելով նրա կենսական ու տնտեսական բազմազան կարիքները։ Միևնույն ժամանակ նա հիմնավորելով

ծը իրական գոյությունը—պետք է ուժեղացնի իր Միությունը—Հայկոոպը—դարձնելով նրան միասնական ինտեգրալ կոոպերացիայի կենտրոն։ Հայաստանում գործող տարբեր տիպի կոոպերատիվ կազմակերպությունները պետք է սկզբնական շրջանում համակերպեն իրենց գործունեությունը Հայկոոպի գործելակերպին՝ աստիճանաբար միանալով ու ձուլվելով միասնական—ինտեգրալ կոոպերացիային։ Հետագայում աննպատակ համարել Պետբանկի և Հողժողկոմատի յուրացրած կոոպերատիվ ֆունկցիաները։

5. Ինտեգրալ կոոպերացիան պատվաստելու համար պետք է առաջնորդվել «Ցենտրոսայուզի» կազմ-հրահանգ. բաժնի կողմից մշակված հրահանգներով՝ հարմարեցնելով մեր յերկրի տնտեսական պայմաններին։ Ինտեգրացիա ստեղծելու համար համաձայնեցնել միևնույն գործելակերպին կամավոր ու գործնական միջոցներով՝ գոյություն ունեցող բոլոր տեսակի կոոպերատիվ կազմակերպությունները։

Այս սկզբունքը ի նկատի ունենալով Հայաստանի կոոպերացիան բաղկացած է հետևյալ կազմակերպչական միավորներից։

1. Բոլոր գավառական, քաղաքային և գյուղական վայրերում կազմակերպվում են բանվորա-գյուղացիական միասնական կոոպերատիվներ միասկոոպներ, վորոնց կազմակերպչական հիմքը համարվում է տվյալ շրջանի տնտեսական ձգողականությունը և նրա առանձնահատուկ պայմանները։ Այս տեսակետով միասկոոպի գործունեության շրջանը պետք է ներկայացնի տնտեսական մի միավոր—ընդգրկելով այնտեղ ամբողջ աշխատավորության։

2. Միասկոոպի գործունեությունը ընթանում է լիազորների կամ ընդհանուր ժողովի կողմից վավերացված Նորմալ կանոնադրությամբ՝ հաստատված Համահայաստանյան կոոպերատիվ համագումարի կողմից։

3. Միասկոոպի գործունեության շրջանում թույլատրվում է կազմակերպելու կամավոր կոոպերատիվ խմբավորումներ, վորոնք ընդգրկելու յեն վորոշ աշխարհագրական և տնտեսական շրջան։ Կամավոր կոոպերատիվ խմբավորումն՝ առևտրական ու կազմակերպչական տեսակետներից, կամավոր կապ է հաստատում միասկոոպի հետ, ամրագրվում է այնտեղ՝ ներկայացնելով իր կանոնադրության հաստատումը—Հայկոոպի կազմահրահանգչական բաժնին։ Կամավոր կոոպերատիվ խմբավորումն որինական է համարվում, յերբ նա ունենում է զուտ մասնագիտական բնույթ և արտադրողական կամ գյուղատնտեսական ֆունկցիա։ Կոոպկամխմբի շուրջը հավաքվում են միևնույն սոցիալական ու արհեստակցական խավեր։ Գործարանային շրջանում կազմակերպվում է Բանկոոպ, իսկ գյուղերում՝ Գյուղկոոպ։ Կամավոր կոոպխմբավորումն ղեկավարվում է իր կանոնադրությամբ՝ հաստատված Հայկոոպի վարչության և Կազմա-Հրահանգչական բաժնի կողմից։

4. Միասկոոպները և կամկոոպները համարվում են ըստ ամենայնի ինքնուրույն տնտեսական հասարակական կազմակերպություններ՝ օգտվելով իրավական հիմնարկի բոլոր իրավունքներով ու արտոնություններով։ Միասկոոպները կազմակերպչորեն, տնտեսապես և առևտրականորեն ընդունում են լիազորների ժողովի վորոշած պարտավորությունները։

5. Հայկոոպը հանդիսանում է միասնական կոոպերացիայի կազմակերպչական ու ֆինանսական կենտրոնը։ Հայաստանի բոլոր միասկոոպները, իսկ վերջինների միջոցով կամկոոպները համախմբվում են Հայկոոպի շուրջը, վոր գործելու յե լիազորների ժողովի կողմից հաստատված կանոնադրությամբ։

6. Ամբողջ Հայաստանում կազմակերպվում են մոտակա ապագայում, համաձայն մեր սխեմայի 37 միասկոոպներ, վորոնք ընդգրկելու յեն իրենց մեջ բոլոր գյուղերը, բաժանելով նրանց 37 տնտեսական միությունների։

7. Յուրաքանչյուր միասկոոպին վերապահված գյուղերում, միասկոոպի վարչությունները բաց են անում խանութներ ըստ

պահանջի և անդամների վորոշ կոնտինգենտ առաջ գալու դեպքում։

8. Միավորումների կողմից բացված գյուղական խանութներին կից տվյալ գյուղի անդամների կողմից ընտրվում են վերահսկող մարմիններ։

9. Մասնագիտական գյուղատնտեսական կոոպերատիվներ (յուղա-պանրա գործարաններ, մեղրաբուծական և այլն) կազմակերպությունների նախաձեռնության, ինքնագործունեությունը չթուլացնելու նպատակով՝ վերջինները կազմակերպվում են կամավոր հիմունքներով, վորոնք անդամագրվում են և կազմակերպչորեն միանում են տվյալ շրջանի միավորումին։

10. Միավորումների տնտեսական կապը կենտրոնի հետ հեշտացնելու համար, բանալ խոշոր կենտրոններում բազաներ (պահեստներ) առաջին հերթին Ալեքպոլում և Սանահինում։

II

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՍՏՐՈՒԿՏՈՒՐԱՆ

Ա.

Հ Ա Յ Կ Ո Ո Պ Ը

Հայաստանի կոոպերացիայի կենտրոնը համարվում է Հայկոոպը, վոր հիմնվել է 1917 թ. Յերևանի նախկին նահանգի կոոպերատիվների նախաձեռնությամբ. Այդ ժամանակ Հայկոոպն ընդգրկում եր գլխավորապես սպառկոոպերացիան, իսկ վարկային և գյուղատնտեսական կոոպերը համաշխարհային պատերազմի հետևանքով՝ ապրում եյին իրենց կատաստրոֆիկ շրջանը։

Խորհրդային իրավակարգը Հայաստանում հաստատվելուց հետո՝ Հայկոոպը հանդիսացավ ինտեգրալ կոոպերացիայի միությունը։ Ժողկոմների խորհրդի 1921 թ. հունիսի 3-ի և նոյեմբերի 24-ի դեկրետների հիման վրա Հայաստանի միասնական կոոպերացիայի ղեկավար որգանը համարվեց Հայկոոպը, վոր իր շուրջը համախմբեց գոյություն ունեցող կոոպերատիվ կազմակերպությունները։

Հայկոոպը 1921-22 թ. գլխավորապես զբաղվեց ապրանքափոխանակությամբ և արդյունաբերական ու գյուղատնտեսական գործնեությամբ։ Հայկոոպը, պետական պատվերը—ապրանքափոխանակությունը կատարեց 65 տոկոսով։ Հայկոոպի արդյունաբերական ձեռնարկներից մի քանիսը—ծխախոտի և օճառի գործարանները Հայաստանի մասշտաբով խոշոր դեր կատարեցին ժողովրդական տնտեսության մեջ։

Հայկոոպի անմիջական նպատակն է կազմակերպել Հայաս-

տանի բանվորա-գյուղացիական միասնական կոոպերացիան։ Նա **մասնակցում ու ղեկավարում է** միակոոպներին՝ պարենավոր ման ու գյուղատնտեսական անհրաժեշտ մթերքներ, գործիքներ և այլ առարկաներ։ Հայկոոպը կազմակերպում է **կոոպերատի** վարկ։ Նա հարաբերության մեջ է մտնում Հայաստանի տնտես կան հիմնարկների, Համառուսական կոոպերատիվ միությ «Центросоюз»-ի, խորհրդային Ֆեդերացիայի բարձրագույն որ գանների հետ՝ առևտրական ու ֆինանսական խնդիրների վերա բերմամբ։

Հայկոոպը բանվորա-գյուղացիական միասնական կոոպերա ցիայի **միասնական միությունն է**։

Հայկոոպի բարձրագույն օրգանը կոոպերատիվների **լիա զորների համագումարն է**, որ գումարվում է տարին մի անգա քննելու կազմակերպչական ու տնտեսական խնդիրներ և ընտրե լու վարչություն ու վերստուգիչ հանձնախումբ։

Հայկոոպը **կրթա-լուսավորական աշխատանքում** խոշոր դե ունի կատարելու. կոոպերատիվ կրթության ու դաստիարակ թյան խնդիրները սերտ առնչություն ունեն կոոպերացիայի ծա վալման ու խորացման հետ։

Հայկոոպին է վերապահված ստեղծել կոոպերատոր պրա տիկ-գործիչների մի կադր, որ անբողջովին տանելու է իր ուսե րի վրա կոոպերատիվ շինարարությունը։

Կոոպերատիվ-**հասարակական դասընթացներ**, կոոպերա տիվ դպրոց և ամբիոն կազմակերպելը Հայկոոպի հերթական առաջնակարգ խնդիրներից են։

Հայկոոպի **հրատարակչական գործունեությունը ունի** խոշո հասարակական արժեք. կոոպերացիայի գրականության ստեղ ծումը կոոպերատիվ շարժման հաջողության գրավականն է։ Հայ կոոպը իր հիմնադրման օրից գրական ասպարեզում շատ քի բան է արել։ Մինչև օրս չի հրատարակված կոոպերացիայի վ բերմամբ ոչ մի շահեկան երկ կամ ձեռնարկ։ Հայկոոպը միա 1923 թ. է, որ ունի իր **պաշտոնական** օրգանը—**«Հայաստան**

կոոպերացիան», որի հրատարակությունը պիտի ապահովել և հա րատև դարձնել։ Հրատարակչական բաժինը պիտի ձեռնարկի կազ մելու և թարգմանելու կոոպերացիայի տեսական, պատմական և գործնական բնույթ կրող գրվածքներ, ձեռնարկներ և ուսում նասիրություններ։

Հայկոոպի **կազմա-հրահանգչական աշխատանքը** պիտի լինի ճկուն, կատարյալ և կենսունակ։ Այս բաժնի շուրջը պիտի համա խմբել Հայաստանի բոլոր կոոպերատոր ուժերը։ Կոոպերացիայի գաղափարական ղեկը պիտի գտնվի կազմա-հրահանգչական բաժ նի ձեռքին։

Հայկոոպի անձնական շտատը պիտի լինի սակավամարդ, ժիր և կարող։ Հայկոոպն, անցյալի փորձից խրատված, պետք է ազատվի հակախորհրդային ու հակակոոպերատիվ տարրերից։

Հայկոոպի **ներքին սխեման** լինելու է պարզ և գործնական։ Հայկոոպն ունենալու յե հետևյալ միացյալ բաժինները, ա) **Ընդ հանուր ու կազմա-հրահանգչական** բ) **Ֆինանսա-առևտրական** գ) **Արդյունաբերական ու գյուղատնտեսական**։ Այս բաժինների մեջ պիտի ամփոփել կուլտուր-կրթական, հրատարակչական, ի րավաբանական, վիճակագրական, ինֆորմացիոն և այլ ենթաբա ժինները։

Հայկոոպին կից, իհարկե, կարող են գոյություն ունենալ նաև բանվորական, զինվորական, վարկային և փոխադրական կոոպերատիվների սեկցիաներ։

Հայկոոպն իր ներքին սխեմայով, պետք է համառուսաստանի կենտրոնի-Центросоюз-ի մինյատյուրն լինի։

Ահա ընդհանուր գծերով Հայաստանի բանվորա-գյուղացիա կան կոոպերացիայի կենտրոնի Հայկոոպի կազմակերպչական կառուցվածքը։

Բ

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ— ՄԻԱՍԿՈՈՊԸ

Հայաստանի բանվորա-գյուղացիական միասնական կոոպ **ռացիայի գոյությունը** հիմնավորվել է ժողկոմների խորհրդ 1921 թ. Հունիսի 3-ի դեկրետով, որի հիմնական կետերն են ա Հ. Ս. Խ. բոլոր քաղաքացիները միանում են սպառողական ը կերությունների մեջ. բ) Տվյալ վայրի բոլոր քաղաքացինե մտնում են միասնական ընկերության մեջ, ընդ որում յուրա քանչյուր քաղաքացի ցուցակագրվում է սպառողական ընկերու թյան բաշխման կայարաններից որևէ մեկում։ գ) Յուրաքան չյուր բնակավայրում, անկախ նրա ծավալից, չի կարող գոյ թյուն ունենալ մեկից ավելի սպառողական ընկերություն։

Հայաստանը գերազանցորեն գյուղացիական յերկիր լին լով՝ **զուտ սպառողական կոոպերացիան** ժողովրդական տնտ սության մեջ հարատև կյանք չի կարող ունենալ։ Մեր բա վորա-գյուղացիական զանգվածներն ավելի շատ արտադրող արդյունաբերող են, քան սպառող ու մատակարարվող։ Բայց՝ նկատի ունենալով Հայաստանի գյուղատնտեսության ու արտա դրական այլ ճյուղերի ներկա քայքայված վիճակը և վերակե դանացման շրջանը՝ կոոպերացիայի նախնական բջիջը պիտի լի սպառողականը, որը մեր յերկրում ներմուծված ֆաբրիկատնե բաշխի մասսաներին։ Կոոպերացիայի սոսկ սպառողական ֆուն ցիաների հետ միասին կատարվելու յեն նաև գյուղատնտեսակա վարկային և արդյունաբերական գործողություններ։

Միասկոոպն ընդգրկելով բանվորա-գյուղացիական մա սաներ՝ ստեղծում է քաղաքի ու գյուղի միջև տնտեսական սե կապ. փոխանակման գործառնությունը կազմում է միասկոո գլխավոր ֆունկցիան։ Մյուս կողմից միասկոոպին է վերապա ված կատարելու պետական պարտավորումներ—փոխանակում

հայթայթումն ու մեծաքանակ գնումներ։ Միասկոոպը կազմելով պետական ընդհանուր ապպարատի մի մասնիկը՝ հանդիսանում է իրավաբանական ինքնուրույն միավոր։

Միասկոոպի ղեկավար օրգանը համարվում է անդամների ընդհանուր կամ լիազորների ժողովը, որ գումարվում է հարկավոր յեղած դեպքերում՝ տնօրինելու միասկոոպի հերթական խնդիրները։

Միասկոոպի գործադիր մարմինը **վարչությունն** է, որը գործում է կանոնադրության սահմանում և **լիազորների ժողովի** դիրեկտիվներով ու հրահանգներով։

Միասկոոպի վարչության գործունեության վերահսկումը և վերաքննության իրավունքը պատկանում **վերստուգող հանձնաժողովին**, որ ընտրվում է լիազորների ժողովի կողմից։

Միասկոոպի գործելաշրջանը տվյալ գավառի տնտեսական ու աշխարհագրական միավորն է, որ ընդգրկում է որոշ թվով ազգաբնակչության և գյուղաշրջանը։

Հայաստանի կոոպերացիայի ներկա ցանցը շատ նոր է ու գրված։ Հայկոոպի կազմա-հրահանգչական բաժինը առաջին հերթին կազմակերպելու և ուժեղացնելու յե **յերկրորդ աստիճանի կոոպերատիվները**—միասկոոպները։ Միասկոոպը գործելու յե ազմակերպական սիստեմով. տվյալ վայրի այս կամ այն կետում միասկոոպը բաց է անում բաժանմունքներ՝ կրպակներ, որոնք գում են տեղական անդամ սպառողների անմիջական կարիքները։ Անդամների միջև ինքնագործունեությունը զարգացնելու և անձնապես շահագրգռելու համար կոոպերատիվ խանութի վերահսկողության իրավունքը տրվում է **կրպակային հանձնախմբին** (лавочная комиссия), որին ընտրվում է տեղական անդամների ընդհանուր ժողովում։

Միասկոոպը գործելու յե իր **սեփական միջոցներով** և ըստացած վարկի սահմաններում։ Միասկոոպի առևտրական գործունեության մեջ պիտի ճշտորեն կիրառել անդամների շահագրգռման, խնայողական և հաշվեառման սկզբունքները։ Անդամների

ժուծած անդամավճարները և ամբողջական ավանդները պիտի ապահովվեն պատահականություններից և վերադարձվեն վորոշյալ ժամանակամիջոցում։ Կուրսերի և շուկայի գների յելևէջները չեն կարող ազդել անդամների խնայողական դրամագլխի ամբողջության վրա։ Անդամների գնումները պիտի խրախուսվի տարեվերջի դիվիդենտի բաշխմամբ և այլ տոկոսային պրեմիաներով։

Ազգաբնակչության չքավոր մասի մուտքը միասկոոպում կամ նրա բաժանմունքներում պետք է լինի ազատ և անարգել։

Միասկոոպը կազմա-հրահանգչական խնդիրներում կապված է Հայկոոպի հետ։ Միասկոոպը իր ներքին շուկաներում հանդես է գալիս ինքնուրույն և անկախ։ Արտաքին շուկաներում միասկոոպի յերևալը պիտի լինի Հայկոոպի վարչության գիտությամբ և սանկցիայով։

Հայաստանի այն միասկոոպները, վորոնք տնտեսապես կապված են Թիֆլիսի և Բագուի շուկաների հետ, (որ. Դիլիջանի, Ղարաքիլիսի, Լոռու և Զանգեզուրի) կարող են Հայկոոպի վարչության գիտությամբ առևտրական կապ ստեղծել կոոպերատիվ կենտրոնների—Заксоюз-ի և «Ազսույզ»-ի հետ՝ ստանալով նրանցից անմիջապես ապրանքներ։ Միասկոոպների առևտրական արտաքին հարաբերությունը չը պիտի խանգարի Հայաստանի կոոպերատիվ շինարարությանը։

Միասկոոպի գործնեյության վերաբերյալ հրահանգներ, շրջաբերականներ և դիրեկտիվներ տրվում է Հայկոոպի կազմա-հրահանգչական բաժնի կողմից։

Այդպիսով միասկոոպը՝ պահպանելով ընդհանուր կոոպերատիվ կենտրոնացման սկզբունքները՝ հնարավորություն ունի յերևան հանելու իր ինքնագործունեյությունը և կատարելագործելու իր ապարատը։

Գ.

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱԶԱՏ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Կամկոոպներ, գյուղկոոպներ յեվ բանկոոպներ

Հունիսի 3-ի դեկրետի համաձայն միասկոոպի գործնեյության շրջանում «Թույլատրելի յե քաղաքացիների միացումն ավելի փոքր բնակչական տերրիտորիալ միավորների մեջ, ինչպես և խմբերի, վորոնք ունեն միևնույն արհեստը կամ զբաղմունքը, ըստ վորում, այդպիսի միությունների անդամագրվելն ու նրանից հեռանալը ազատ է ու հոժարական։ Այդ միությունները պիտի արձանագրվեն այն միասնական սպառողական ընկերության մեջ, վորի գործնեյության շրջանում նրանք առաջ են յեկել»։

Խոսքը վերաբերում է կոոպերատիվ ազատ խմբավորումներին, վորոնց վերապահված է ինքնուրույն դեր կատարելու բանվորա-գյուղացիական միասնական կոոպերացիայի մեջ։ Նման կոոպերատիվ խմբավորման գործնական արժեքը կայանում է նրանում, վոր ավելի քան զարկ է տրվում սպառող ու արտադրող մասսաների նախաձեռնության ու ինքնագործնեյության։ Հենվելով նույն տեսակետի վրա՝ կոոպերատիվ ազատ խմբավորի առաջադրած նպատակակետերն են։

ա) Դարձնել անդամների մուտքը տեղկոոպում ազատ և կամավոր։

բ) Կոոպմիավորը՝ գործելով ավելի նեղ շրջանում և ընդգրկելով անդամների նոր խավերը՝ հնարավորություն ունի [illegible]դալու նրանց ամենակենսական պահանջները։

գ) Կոոպմիավորի կառավարչական սիստեմը նույնն է, ինչ վոր միասկոոպինը—անդամների ընդհանուր ժողովի միջոցով ընտրվում է վարչության ու վերստուգիչ հանձնախմբի ընտրողական սկզբունքը։

Արհեստակցական խմբավորումների համար կազմակերպվու

է տվյալ վայրում կամ ձեռնարկության մեջ բանվորներ, վո
րոնք ունեն սպեցիֆիկ բնույթ և ծառայելու չեն վորոշ նպատակի
Բանվորական սպառկոոպերացիան բյուրեղանում է միայ
իր հարազատ միջավայրում—գործարանում կամ արդյունաբերա
կան շրջանում: Բանկոոպը տրոպիքական բույսի նման չի կարո
աճել ու փարթամանալ իր բնագավառից դուրս, ալլխակա
քարձրավանդակում:

Կոոպերացիայի ազատ խմբավորման հարազատ միջավայր
գյուղն է, գյուղկոոպների սոցիալական հիմքը մեր աղքատ ու մի
ջակ գյուղացիությո.նն է:

Գյուղկոոպները կազմակերպչական խնդիրներում չենթարկ
վում են տվյալ վայրի միասկոոպին: Կոոպերատիվ գործուն
յության կենտրոնացումն բղխում է միասնական կոոպերացիայ
կառուցվածքից: Գյուղկոոպների գոյության իրավականացումն-
կանոնադրության հաստատումը՝ Միասկոոպի կազմակերպչակա
ֆունկցիաներից մեկն է:

Գյուղկոոպն իր ներքին կյանքում ինքնավար ու ինքնու
րույն լինելով հանդերձ՝ իր առևտրական խոշոր գործառնա
ժամանակ—փոխանակման, մեծաքանակ գնումների և պետակա
պայմանավորումների կատարման դեպքում՝ իր գործելակերպ
պետք է համակերպի միասկոոպի գործելակերպին: Մրցակցու
թյունից ու հակամարտությունից խուսափելու համար՝ միասկո
ոպին է վերապահվում Հայաստանի ներքին շուկաներում յերևալը
գյուղկոոպները, հարկավոր յեղած դեպքում միասկոոպին են տրա
մադրում իրենց շրջանառության արժեքները: Գյուղկոոպին
թողնվում իր սեփական միջոցներով ձեռք բերված կամ արտա
դրված արժեքների սպառման կամ բաշխման իրավունքը:

Գյուղկոոպը մեքենաբար մտնելով միասկոոպի մեջ՝ հա
մարվում է նրա իրավազոր անդամը: Գյուղկոոպն անդամագրը
վում է միասկոոպին հավաքաբար, նրա անհատ անդամները ազա
են լինում նոր վճարումներից: Գյուղկոոպների միացումը միաս
կոոպի հետ կատարվում է կամավոր ու ազատ սկզբունքով:

Մի քանի խոսք ել կոոպմիավորի—գյուղկոոպի գլխավոր ֆունկցիաների մասին. հարկավոր է նորից ընդգծել, վոր գյուղկոոպն ընդգրկում է աղքատ ու միջակ գյուղացիական շերտերին: Կոոպերացիայի բնագավառը գյուղատնտեսությունն է, գյուղկոոպը կատարելու չէ նաև սպառողական ու վարկային գործառումներ. նշանակում է գյուղկոոպը մարմնացնելու չէ իր մեջ **ինտեգրալ կոոպերացիան.** գյուղում, ինտեգրալը սաղմնավորվելով՝ աճում ու փարթամանում է Հայաստանի մասշտաբով: Մեր ինտեգրալ կոոպերացիան օրինականացվել է ժողկոմների խորհրդի 1921 թ. **Նոյեմբերի 24-ի դեկրետով,** վորտեղ ասված է՝ «Հայաստանի կոոպերատիվ շինարարության հիմքը դնել միասնական կոոպերացիայի սկզբունքը, վոր նպատակ ունի համախմբել գյուղի և քաղաքի մասի աշխատավորական արտադրողներին՝ յուրացնելով գյուղական սպառողական, գյուղատնտեսական կոոպերացիայի գործառնությունները:

Համառոտագրելով կոոպերացիայի ստրուկտուրան, վոր արտացոլում է իր մեջ խորհրդային իշխանության տնտեսական որ քաղաքականության վարքագիծը՝ հարկավոր է մի անգամ էլ շեշտել և այն, վոր մեր կոոպերացիան դեռևս անկազմակերպ է խանձարուրային վիճակում լինելով՝ ավելի քան կարիք ունի ուղիղ և միաձույլ շինարարության:

Հայաստանի կոոպերացիայի կառուցվածքը պետք է ամբողջանա վերոհիշյալ ուղիներով, անհիվանդագին և համառ ու տոկուն աշխատանքով:

6077-2011

III

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐ

Ա.

Հայաստանի կոոպերացիան իր առողջացման ուղին և ա քում: Հայկոոպի շինարարությունը նոր ուղիներ է գտել: Կո պերատիվ շարժումը Խորհրդային Հայաստանում արդեն ունի հ նարավոր պայմաններ՝ զարգանալու համապետական մասշտա և ընդգրկելու բանվորա-գյուղացիական մասսաներին:

Կոոպերացիան սոցիալիստական հեղափոխության ընթա քում ազատագրվելով «Ռոչդելյան—անաղարտ» սկզբունքներ թոթափել է իրենից բուրժուազիայի գաղափարական պատրան ները և փրկվել է ուտոպիական մղձավանջներից: Կոոպերացի յի վարքագիծը Կոմունիստական կուսակցության կողմից բ րոշված է մարքսիստորեն և նրա ուղիներն ընդգծված են ուղ ու անշեղ: Կոոպերացիայի օբյեկտն՝ արտադրողն ու սպառող նրա բնագավառը գյուղն ու քաղաքն են: Համագործակցությ գլխավոր շեշտը յերկու սոցիալական դասակարգերի, գյուղաց թյան ու բանվորության տնտեսական շաղկապն է, որ գ վում է նրանց փոխադարձ մերձեցման ու հաղորդակցման ու ղերով:

Կոոպերացիան իր գործունեությունը հիմնավորում է յերկրի արտադրողական հարաբերություններով, աշխատավոր կան զանգվածների ինքնագործ ու նախաձեռնող գործելակերպ Կոոպերացիան հանդիսանում է այն ակտիվ ույժը, որ զար տալու մեր յերկրի գյուղատնտեսության և արդյունաբերությ գործին, ուժեղացնելով մեր տնտեսական ճակատը: Կոոպերացի

անհրաժեշտ է խորհրդային իշխանության և նրա ղեկավար Կոմունիստական կուսակցության այնքան, որքան, որ տնտեսական մյուս գործոնները՝ ֆինանսական, պարենավորման, հողագործական, արդյունաբերական և ուրիշ կոմիսարիատներ ու հիմնարկները:

Հայաստանի կոոպերացիան մինչև օրս ուղիղ և ընդգծված գործելակերպ չի ունեցել: Հայկոոպի «զիգ-զագային» ընթացքը, անկերպարանք ու անարդյունավետ անցյալը բացասաբար անդրադարձել է մեր տնտեսական կյանքի վրա: Հայաստանի կոոպերատիվների միությունը մինչև 1923 թ. սկիզբը ապրել է հեղափոխության ռազմկոմունիզմի շրջանը, ունեցել շռայլ ու անհաշիվ գործունեություն: Հայկոոպի կազմակերպած հարյուրի հասնող բաշխող ու սպառող կոոպերատիվները, այսպես կոչված արտահամանյան դրասենյակներն ու գործակալությունները թանգ, շատ թանգ նստեցին բանվորա-գյուղացիական պետության վրա: Հայկոոպը տնտեսական նոր-քաղաքականության յեռամյակում չէր ունեցել «Սցիլան ու Խարիբդան»: Հռչակավոր «ՆԷՊ»-ը դեռևս չէր ազդել Հայկոոպի գործունեության վրա և չէր փոխել նրա նախկին ընթացքը: Կոոպերացիայի ասպարեզում «ՆԷՊ»-ի տիրապետման բացակայությունն արդյունք էր գլխավորապես Հայաստանի իրական պայմաններին և բղխում էր մեր կյանքի տնտեսական իրադարձություններից: Անհատը կոոպերացիայի հաջողությանն ազդել է այն չափով միայն, որ չափ որ կուսակցական և Խորհրդային բարձր օրգաններն աչքաթող էին արել, անգամ արհամարել Հայկոոպը՝ խորթ նայելով նրան և անվստահություն տածելով դեպի նրա գործունեությունը:

Միայն 1923 թ. Հայաստանի կոոպերացիան տվեց իր վերածնունդը: Հայկոոպը օրհասական գալարումներից հետո-ցույց տվեց առողջացման նշաններ: Հայաստանի կոոպերացիան անվտանգ անցավ «Սցիլան ու Խարիբդան»: Կոոպերատիվ շարժումը վերջապես գտավ իր ընթացքը և հոսեց իր հունով:

Հայկոոպի յեռամյա գործունեության վերադնահատումը,

Նրա ցավերի դիագնոզը և խոցերի անդամահատումն արեց համա
հայաստանյան կոոպերատիվների անդրանիկ համագումարը, վ
անցյալի եքսպերիմենտներից խրատված և մեր յերկրի ռեալ պայ
մաններն ի նկատի ունենալով՝ ընդգծեց այն ուղին և մշակե
այն գործելակերպը, որ ուղեցույց պիտի լինի կոոպերացիայ
կազմակերպչական ու շինարարական աշխատանքներին:

Բ.

Խորհրդային կառավարությունը Հայաստանի կոոպերացի
ային, յերկու տարի առաջ ավեց մի լուրջ խնդիր—համակերպ
իր գործունեությունը տնտեսական նոր քաղաքականության հե

Կոոպերարացիայի ապարատները, վոր մինչև այդ որ
վարժվել եյին կատարելու բաշխման ու պարենավորման ֆունկ
ցիաներ, չունեյին առևտրական կենսունակություն ու ճկունու
թյուն, զուրկ եյի ինքնագործ ու ինքնուրույն քայլերից, այդ
պիսի պայմաններում կոոպերացիան պետք է վերափոխվեր հիմ
նովին և հարմարվածային կարգով պետք է յուրացներ աշխատանք
նոր մեթոդներ և ընդհանար նոր ուղիներով՝ այլապես նրան վի
ճակված եր դուրս շպրտվելու մեր տնտեսական կյանքից և կո
դնալու մասնավոր առևտրական կապիտալին:

Վերջին յերկու տարին կոոպերացիան յերեվան չհանեց ի
յեռանդի ամբողջ թափը և չցուցադրեց իր կենսունակությու
նշանները, խոշոր առևտրի մենաշնորհները ամբողջովին գտնվու
եր Պետառևի, իսկ մանր առևտուրը—մասնավոր անձանց—չարչ
ների ձեռքը:

Բայց և այնպես այդ յերկու տարին՝ Հայաստանի կոոպ
րացիայի համար դառավ փորձության և վորոնումների շրջան
այդ յերկու տարում կոոպերացիան ալրեց անգամ իր փլուզ
այդ կարճ միջոցում կոոպերատիվ միավորներից՝ ավելի անու
և անանկ հիմնարկները քայքայվեցին ու կորան, նրանց ավ
բակների վրա բարձրացավ բանվոր-գյուղացիական կոոպերա
ցիայի միասնական վերնաշենքը, վորը սկզբում թույլ, անվորոր

ու տարտամ, իսկ այժմ ուժեղ ու վճռական քայլերով բռնել է
նոր ուղիներ և ունի գործունեության գեղեցիկ հեռանկարներ:

Դանդաղ, նման կրյաի քայլերին, խտանում է Հայաստա-
նում կոոպերացիայի ցանցը: Միասկոոպը ստանում է զուտ կո-
ոպերատիվ բովանդակություն, աստիճանաբար ընդգրկում է աշ-
խատավորական մասսանեք և արդեն խաղում է մեր տնտեսական
կյանքում խոշոր դեր:

Խորհրդային Հայաստանում կոոպերացիան յերկու տարի
շարունակ չկարողացավ ընդգրկել գյուղական տնտեսությունը.
Հայկոոպը չկարողացավ զոդել գյուղը քաղաքի, գյուղային բան-
վորի, և արտադրողը սպառողի: Գյուղի հայթհայթման, մա-
տակարարման ու պարենավորման գործի ամենաչնչին տոկոսը
հազիվ կարողացավ կատարել կոոպերացիան:

Կոոպերացիան, գյուղը քաղաքի հետ զոդելու համար պիտի
պայքար մղեր նախ և առաջ առևտրական կապիտալի,
մասնավոր առևտրի դեմ, վոր իր ցանցերն է փռել գյուղի վրա
դարձրել նրան իր շահագործության և սպեկուլյացիայի ասպա-
կան: Կոոպերացիան ընդհանուր գծով պիտի դուրս քշեր գոր-
ծերից գյուղական մանրավաճառներին, չարչիներին և սպեկու-
լյանտներին՝ մատակարարելով գյուղին բոլոր անհրաժեշտ ապ-
րանքները: Կոոպերացիան յերկրորդ հերթին պիտի պայքարի
միջնորդական կապիտալի դեմ: 1914 թ. Ռուսաստանում առև-
տրական ամբողջ շրջանառությունը—$4^1/_2$ միլիարդ, վորից 290
միլիոնը կամ $6{,}4^0/_0$ կատարում էր սպառկոոպերացիան, իսկ
1922 թ. ամբողջ շրջանառությունը $1^3/_{10}$ միլիարդի, վորից կո-
ոպերացիան 236 միլ. կամ $18^0/_0$: Ներկայումս գյուղի և քաղաքի
փոխանակման գործը գտնվում է դարձյալ նույն առևտրական-
ների ու պարագլուխների ձեռքը, վորոնք օգտվելով գյուղացու նեղ
ավթդրությունից, չնչին գներով վերցնում են նրա արդյունքները և
հրեշային գներով տալիս են նրան քաղաքի արտադրությունն-
երը: Կոոպերացիան կռվելու է նաև մի ուրիշ չարիքի—վաշխա-

ռուսական կապիտալի դեմ, որ սարդի նման իր ցանցով ծածկել վարկազուրկ և աղքատ գյուղացիությունը։

Ուրեմն կոոպերացիան գյուղում յերեք չարիքի դեմ պետք է մարտնչի, ա) առեվտրական կապիտալի, բ) միջնորդական կապիտալի և գ) վաշխառուական կապիտալի դեմ։

Վերոհիշյալ առարկայական պայմանները կարող եյին վերանալ միայն այն դեպքում՝ յերբ կոոպերացիան ընդգրկեր բովանդակ գյուղը և ամբողջովին գրավեր նրա տնտեսական կառուցվածքը վերակազմությամբ։

Սպառկոոպերացիան հենվելով 80-90 տոկոս գյուղական ազգաբնակչության վրա և ամրացնելով իր դիրքերն ամբողջովին կնվիրվի գյուղացու տնտեսական կարիքներին։

Այստեղից բղխում է այն հանգամանքը, որ կոոպերացիայի առևտրական գործունեությունը գյուղում, նրան առաջադրած կարևորագույն խնդիրներից մեկն է։ Այս հիմնական հարցը ձևակերպում է գյուղացիական վայրում գործող սպառկոոպերացիայի ձևերը։

Գյուղական տնտեսության զարգացման ու բարձրացման տեսակետից յելնելով՝ սպառկոոպերացիայի առևտրական քաղաքականությունը պետք է անխախտելիորեն կապված լինի գյուղատնտեսության հիմնական խնդիրների՝ գյուղատնտեսական գործիքների, նյութերի ու սերմացանքի մատակարարման, մթերքների ու հում նյութերի արտահանման, մշակման և վաճառման, գյուղատնտեսական վարկի կազմակերպման և այլն։

Մեր 1921 թ. ապրանքափոխանակության փորձը յելակետ ուներ գլխավորապես գյուղատնտեսական մթերքների մատակարարման և վաճառման գործը, բայց հայտնի յե, որ այդ փորձն անհաջող հետևանքները ունեցավ։ Սպառկոոպերացիան հիմք ընդունելով ապրանքային միավորը՝ աշխատում եր ձեռք բերել գյուղական մթերքներ ավելի քան պակաս գներով և մատակարարել գյուղին ապրանքներ՝ ֆաբրիկատներ անհամեմատ թանկ և անգամ առասպելական գներով՝ վրիպելով իր ուշադրությ-

ների այն հանգամանքը, որ կոոպերացիայի շահերը պետք է համակերպվեին գյուղական տնտեսության շահերին։

Սպառկոոպերացիան փոխանակման, մատակարարման և վաճառման գործառնությունների ժամանակ ղեկավար պետք է ունենա միայն մի սկզբունք՝ **պահպանել գյուղի ու քաղաքի արտադրությունների արժեքների մեջ համաչափություն խույս տալով արհեստական ու անհարմար աքքներից։**

Հայաստանի կոոպերացիան տանելով իր տնտեսական գործունեությունը նոր ուղիներով՝ կարող կլինի կազմակերպել **իր շուրջը բանվորա-գյուղացիական մասսաներին։**

IV

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Համաձայն Ժողկոմների Խորհրդի 1921 թ. հունիսի 3-ի դեկրետի և խորհրդային իշխանության տնտեսական նոր քաղաքականության՝ կոոպերացիան պետք ծավալվի բանվորա-գյուղացիական մասսաների նախաձեռնությամբ և ապրի իր սեփական միջոցներով: Յուրաքանչյուր կոոպերատիվ կազմակերպություն պետք է ծածկի իր ծախսերը կատարած գործառնություններից: Այսպիսով, կոոպերատիվը աշխատելու յե իր «страх и риск»-ով:

Ինչպես իրականացնել կոոպերացիայի ինքնուրույն և անկախ գործունեությունը ֆինանսական ասպարեզում:

Ամենից առաջ անհրաժեշտ է կատարել ապրանքների ճիշտ **ֆրանկո գնահատում, կալկուլացիա:** Կանոնավոր գնահատումը, նախահաշիվների զգուշավոր կազմումը, լավ հաշվապահություն ու հաշվետվություն, տնտեսության խնայողական վարումը՝ կունենա այն հետևանքը, որ կոոպերատիվի յեկամուտի և ծախսերի միջև գոյություն կունենա նորմալ հարաբերություն— **ապրանքաց վերադիրը միշտ կգերազանցե ընթացիկ վճարումներին:** Կոոպերատիվի ֆինանսների այսպիսի ընթացքն՝ անշուշտ կամրացնի նրա տնտեսական հիմքերը: Վերջնական հաշվով կոոպերատիվը կստեղծի նյութական նոր արժեքներ:

Բայց այս յեղանակով կոոպերատիվ դրամագլուխ ստեղծելը պահանջում է մեզանից համառ ու անդուլ աշխատանք, յերկար ժամանակ և դրական ոբյեկտիվ պայմաններ: Զուտ օգուտը գոյանում է տարիների ընթացքում և շոշափելի դրամագլուխ կազմում բարենպաստ հանգամանքներում:

Կոոպերատիվ դրամագլխի աճումն և ուժեղացումն կախումն ունի լայն մասսաների կոոպերատիվ հասունության և կազմակերպության աստիճանից:

Անցյալի փորձն ըստ ամենայնի ապացուցանում է, վոր կոոպերացիայի ֆինանսապես հզորացնողը—**անդամավճարներն են:** Այս միջոցներից է կազմվում կոոպերատիվի հիմնական դրամագլուխը և խնայողությունն է համարվում կոոպերատիվ անդամների համար: Բացի դրանից կոոպերատիվ վարկի ունակությունը կախումն ունի նրա հիմնական դրամագլխի մեծությունից և ապահով վիճակից: Սովորաբար ֆինանս. հիմնարկները վարկ են բաց թողնում կոոպերատիվներին համաձայն նրանց սեփական ռեսուրսների—հիմնական դրամագլխի:

Բայց վորքան էլ անհրաժեշտ լինի կոոպերատիվի համար սեփական միջոցների, այս դեպքում, անդամավճարների գանձումը,—պետք է զգույշ լինել չափազանցությունից ու չվոգևորվել բարձր անդամավճարներով:

Այս հանգամանքը շատ դեպքերում կարող է դառնալ պատճառ, վոր ազգաբնակչության լայն խավերը կտրվեն, յերես շուռ տան կոոպերացիայից:

Նման յերևույթը համազոր է կոոպերատիվի մահվան: Նման վիճակից ընդմիշտ խուսափելու համար՝ մի կողմից և անդամավճարների նորմալ գանձումը՝ մյուս կողմից՝ պահանջվում է գործադրել հետևյալը:

ա) Տարեկան զուտ օգուտի 50%-ից ավելին հատկացնել հիմնական դրամագլխի ուժեղացմանը:

բ) Պարտավորացնել անդամներին, միանվագ կամ խնայողական միջոցներով, լրացնելու իրենց անդամավճարները վորոշված գումարի սահմանում:

գ) Ապրանքաց վերադիրների վորոշ տոկոսը հատկացնել և գրել ի հաշիվ չքավոր ու տնանկ անդամների անդամավճարների:

դ) Վորոշել անդամների ֆինանսական պատասխանատվու-

թյուն, վոր պիտի բղխի անդամի ույժ և հնարավոր պայման-
ներից։

յե) Տալ անդամներին հնարավորություն մուծելու իրեն անդամավճարի դիմաց իրենց աշխատանքի արդյունքը.— գյուղատնտեսական մթերքներ, տնայնագործական իրեր, ֆաբրիկա... ներ և այլն։ Անդամների արտադրությունները պիտի գնահատ... ապրանքային արժեքով և վոսկու միջին կուրսով,

զ) Կիրառել շահագրգռության սկզբունքը. այն անդամ... վոր ամբողջապես կմուծնի իր բաժնեվճարը, նա կոգտվի հետ... յալ արտոնություններից. 1) ապրանքի վճարքի գներից՝ վոր... զիղջ. 2) բաժնեվճարի տոկոսից. 3) Կարևոր ապրանքների հե... թից դուրս ստացման իրավունք. 4) տարեկան գնումների հ... մար առանձին նվեր—պրեմիա և այլն։

Կոոպերատիվի ֆինանսական միջոցներն ուժեղացնելու հ... մար գործնական նշանակություն ունի **անդամներից կանխավ-ճարների ստացումը**։ կանխավճար տրվում է նախորոք վոր... կենսամթերք կամ ապրանք ձեռք բերելու համար։ Կանխավճա... ները գանձվում են վորոշ նպատակով և մնում են անձեռնմ... խելի։ Կանխավճարը չի գործադրվում կոոպերատիվի այլ և ... նպատակներին։ Կանխավճար մուծող անդամը պետք է ըստ... մինայնի հավատա, վոր իր դրամի արժեքը կստանա խոստաց... ժամանակին՝ շոշափելի ոգուտով։

Յեթե կանխավճարները չեն գործադրվում առաջարկ... նպատակին, պետք վերադարձնել այդպիսին էր տոկոսիքով։ Յ... բաքանչյուր շեղում և խոստման ժխտում կստեղծեն անդամնե... մեջ կասկած ու անվստահություն դեպի կանխավճարների սկզբու... քը և անհաջողության կ՚մատնեն կոոպերատիվի գործերը։

Ազգաբնակության դրամական միջոցները կոոպերատիվ... տրամադրելու լավագույն յեղանակը—**ավանդների** (вклады) գ... **ծառումն** է. միևնույն ժամանակ, այս ոպերացիան ամենադը... վար և ամենապատասխանատու քայլն է կոոպերացիայի կյա... քում։ Ամենից առաջ անհրաժեշտ է ստեղծել ազգաբնակությ...

...այն խավերում այն հաստատ համոզմունքը, վոր անդամների ավանդները կ՚մնան կոոպերատիվում ապահով և կվերադարձվեն առաջին պահանջմամբ, ամբողջովին և շահեցման տոկոսիքով։ Այս անդամանքը կստեղծի անդամների մեջ վստահություն դեպի կոոպերատիվը՝ ընդհանրապես։ Անշուշտ ավանդների գանձման հաջողության գլխավոր հանգամանքներից մեկը **ավելի բարձր տոկոսներն են**։ Աչքի առաջ ունենալով մեր վայրում անկումն և ...ուրսերի խելակորույս բարձրացումը՝ ավանդի տոկոսիքը պետք է լինի հաստատ և աներկրայելի։ Ռուբլու իրական արժեքը պետք է պահպանվի և վճարվի։

Կոոպերացիայի ֆինանսական հիմքերն ամրացնելու և նրան կենսունակ դարձնելու համար անհրաժեշտ է ստեղծել Միասնո...ւններին լայն չափով վարկ, վոր զարկ կտա ապրանքափոխանակման գործառնություններին՝ մի կողմից և գյուղի ու քաղաքի տնտեսական շաղկապին՝ մյուս կողմից։ Յերկարատև և խոշոր վարկը հնարավորություն կտա կոոպերացիային հավաքել իր ուժերը, ...երևան հանել իր առևտրական ունակությունը և թելադրել իր կամքը ազատ շուկային՝ սանձահարելով համատարած սպեկուլյացիան։ Վարկային ֆոնդերը կպահովեն կոոպերատիվի ապրանքային արժեքները պատահական և անողոք ռեալիզացիայից, ...քանդեն կոոպերատիվի կապանքները և հնարավորություն կտան ...րան առևտրական ինքնուրույն գործառնությունների։ Ներկա կուրսե...ի վայրու-վերումներին, ապրանաց արժեքների տարուբերումներին՝ կոոպերացիան վարկազուրկ լինելով, ստիպված է շուկա...պրտել իր վայրուտան. վաճառել ինքարժեքից ցած և յենթարկվել ինքնաոչնչացման։ Մինչդեռ վարկային հնարավորությունը կհեռացնի կոոպերացիայից դառն բաժակը և կստեղծի նրա համար ֆինանսական հեռանկարներ։

Մինչև որս կոոպերացիան վարկ է ստացել Ցենտրոլկոմից և ...տնտեսական այլ հիմնարկներից վորպես կանխավճարներ՝ պետական այս կամ այն մեծաքանակ հայթհայթման ու փոխանակման պատվերների համար։ Հայաստանի իրական պայմանները

խոչնդոտ են հանդիսացել կոոպերացիային ճշտորեն ու ժամ
նակին կատարելու պետական պատվերներ, նա պարտադրված
յեղել խորհրդային հիմնարկների առաջ, վորոնք, առիթից օգ
վելով վարկավորել և սնանկ են հայտարարել կոոպերացիայի

Ներկայումս կոոպերացիան վարկ ստանալու համար ստ
ված է պետական բանկում գրավ դնել իր արժեքավոր ապրան
ները, ստանալով փոխարենը մի չնչին գումար: Այս ձևի վար
ավելի շուտ արագացնում է կոոպերացիայի կործանումը, ք
ուժեղացնում է նրան:

Հայաստանի կոոպերացիայի տնտեսական շահերը պահա
ջում են, վոր մեր **Ֆինանսական հիմնարկները, ի նկատի ու**
նալով վերոհիշյալ հանգամանքները՝ վարկ բաց թողնեն մե
նակային կարգով և միջին տոկոսով, այլապես նրանց վարկ
տվությունը կոոպերացիայի համար դառնալու յե արջի ծառ
յություն: Ուրիշ խոսքով, վոչ թե կոոպերատիվի ապրանքայ
արժեքները բաղխեն բանկերի դուռը, այլ բանկերը բաղխեն մ
պահեստների դռները:

Կոոպերատիվի վարկի խնդիրը մինչև օրս չի ստացել
լուծումը, Հայկոոպին տված վարկերը, վերջնական հաշվ
դժբախտացրել են կոոպերացիային: Պետբանկը և կոոպերատ
կենտրոնը մինչև օրս մի ընդհանուր լեզու չեն գտել: Այս հա
գամանքն իր հիվանդագին բնույթով դեռ մինչև օրս էլ շար
նակվում է: Փոխադարձ անվստահություն, մշտական կասկա
խլուրդի նման քանդել են կոոպերացիայի հիմքերը:

Միայն յերկարատև մուրհակային վարկը՝ միջին տոկո
—կ՚փրկի կոոպերացիայի ֆինանսական տագնապը և կդ
նրան ուղիղ ռելսների վրա:

Կոոպերատիվի վարկի հարցը բազմակողմանի կերպով քնն
և Համառուսաստանյան կոոպերատիվ համագումարների և խո
հրդային բարձրագույն որգանների կողմից՝ ստանալով իր առ
ու տրամաբանական լուծումը:

Ամփոփենք ասածները: Կոոպերացիայի ֆինանսական կա-
ունությունը կախումն ունի գլխավորապես նրա հիմնական
րամագլխից, վոր կազմվում է անդամների բաժնեվճարներից և
րջանառության զուտ օգուտից: Բացի դրանից, կոոպերացիան
վելու յե կանխավճարների և ավանդների սիստեմը: Սույն
ֆինանսական հնարավորությունները կիրականացվեն միայն
ահագագման սկզբունքով: Կոոպերացիայի ֆինանսներն ուժե-
ացնող և լրացնողը վարկն է, վոր պետք է ստացվի յերկարատև
միջին տոկոսով և մուրհակային կարգով և վերադարձվի անհի-
տոնդագին, լիովին ու կանոնավոր:

V

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԴԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔԸ ԳՅՈՒՂՈՒ

Ա.

Հայաստանը գերազանցապես գյուղատնտեսական յերկիր
Գյուղատնտեսությունը կազմում է յերկրի արտադրությ
ամենախոշոր աղբյուրը։ Ազգաբնակության գերակշիռ տոկ
գյուղացիություն է. օրինակ՝ 190 բնակչից Անգլիայում 1
գյուղացի, Բելգիայում 21,1 հոգի, Գերմանիայում 31,9, հո
Ֆրանսիայում 41,8 հոգի, Ամերիկայում 47,1 հոգի, Ռուսաստ
նում 77,92 հոգի, Անդրկովկասում 85 հոգի, և Հայաստանում
հոգուց ավելի։

Համաշխարհային նվաճողական պատերազմների, ազգայ
յան ընդհարումների և քաղաքացիական կռիվների հետևանք
ինչպես համայն Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում գյ
ղատնտեսությունը քայքայվեց և անկման մատնվեց։ Ժողովրդ
կան տնտեսության այս հսկա ճյուղը սնանկության դուռը հ
սավ։ Խորհրդային ֆեդերացիան հաղթելով ներքին և արտաք
թշնամիներին, խորացնելով հեղափոխությունը—ձեռնարկեց ք
քայված գյուղատնտեսության վերականգնման։ Վերջին յեր
տարվա ընթացքում Խորհրդային Միությունը գյուղատնտե
թյան վերակենդանացման շրջանն է ապրում։ Բայց և այնպ
գյուղատնտեսությունն իր նախապատերազմյան դրությա
հասել—օրինակ՝ 1913 թ. Ռուսաստանի ցանքերի տարած
թյունն ըստ_Օգանովի՝ հասնում էր 87 միլիոն դեսյատինի,
1922 թ.—49 դեսյատինի, կամ մոտ 45 տոկոսով պակաս։ 1916
Ռուսաստանում յեղջյուրավոր անասունների թիվը 50 միլ

էր, իսկ 1922 թ. 32 միլիոն, կամ 25 տոկոս պակաս և այլն։
1913 թ. վողջ Ռուսաստանի տարեկան յեկամուտը հավասար էր 11
միլիարդ ռուբլու, վորից գյուղատնտեսությունից $6^1/_4$ միլիարդ,
իսկ արտադրություններից $4^3/_4$ միլիարդ, 1922 թ. տարեկան
յեկամուտը հասավ 5 միլիարդի, վորից գյուղատնտեսական 4
միլիարդ, իսկ արդյունագործությունից 1 միլիարդ։ Պատերազ-
մից առաջ գյուղատնտեսական արդյունքներից վաճառվում էր $^1/_3$
մասը—2 միլիարդի, իսկ 1922 թ. գյուղատնտեսությունը վաճա-
ռում է հազիվ $^1/_7$ մասը, կամ 15% 600 միլիոնից պակաս (4
միլիարդից)։

Խորհրդային իշխանությունը հերոսական ճիգեր է թափում
բարձրացնելու, ծավալելու և խորացնելու գյուղատնտեսությունը
գործադրելով իր ռեսուրսների խոշոր մասը և օգնության հրա-
վիրելով իր բոլոր օրգաններին։ Գյուղատնտեսության բարձրաց-
ման գործում կարևոր ազդակներից մեկն էլ կոոպերացիան— հա-
մագործակցությունն է, վոր իր շուրջը համախմբելով միջակ ու
աղքատ գյուղացիությունը, զարկ է տալիս նրանց տնտեսության
զարգացմանը։ Կոոպերացիան ստեղծելու յե գյուղի ու քաղաքի,
գյուղացու և բանվորի, արտադրողի ու սպառողի միջև տնտեսական
սերտ կապ—արտահանելով գյուղից գյուղատնտեսական մթերք-
ներ ու հում նյութեր և ներմուծելով քաղաքից գործարանային
իրեր ու ֆաբրիկատներ։

Կոոպերացիան մասսայական կազմակերպություն է. նա
ընդգրկում է սոցիալական յերկու հակոտնյա դասակարգ—գյու-
ղացիություն ու պրոլետարիատ, վորոնք քաղաքական դաշինք
ամրապնդելու համար պետք է տնտեսապես կապել մեկը մյու-
սին, գյուղացուն բանվորի, արտադրողը սպառողի, գյուղը քա-
ղաքի հետ։ Տնտեսական շաղկապի նշանակությունը կայանում է
նրանում, վոր գյուղից քաղաք է բերվում կոոպերացիայի միջո-
ցով գյուղատնտեսական արժեքներ և քաղաքից գյուղն է մտցվում
գործարանային արտադրությունները։

Բ.

Կոոպերացիան, գյուղը քաղաքի հետ զոդելու համար պի
պայքար մղի նախ և առաջ տոյեվտրական կապիտալի, ժամ
վոր առևտրի դեմ, վոր իր ցանցերն է փռել գյուղի վրա և գ
ծրել նրան իր շահագործության և սպեկուլիացիայի առարկա
Կոոպերացիան ընդհանուր գրոհով պիտի դուրս քշի իրենց բն
րից գյուղական վաճառականներին, չարչիներին և սպեկուլյան
ներին, մատակարարելով գյուղին բոլոր անհրաժեշտ ապրան
ներ: Կոոպերացիան յերկրորդ հերթին պիտի պայքարի միջնոր-
դական կապիտալի դեմ:

ԱՌԵՎՏՈՒՐ

«Շնորհիվ նախախորհրդային Հայաստանի ողակող բլոկ
դայի և հարևան հանրապետություններից ու Խորհրդ. Ռուսա
տանից մաքսային սահմաններով բաժանվելուն՝ Հայաստա
դարձել եր փոքր իշատե ապրանք ունեցող սպեկուլյան
ների խաղերի առարկա և ապրանքաքացակայության գ
Հայաստանում ուղղակի ապրանքի սով եր: Խորհրդային Լ
խանությունը պատռեց բլոկադայի շղթան և վոչնչացրեց մա
սային սահմանները: Ապրանքների տրտածումը և ներ
ծումը ստացան կատարյալ ազատություն: Ստեղծված գր
թյունը, պարզ է թույլ տվավ ազատ շունչ քաշելու Հայաստա
նի աշխատավորությանը: Սակայն պետք է արձանագրել, վ
առևտուրը Հայաստանում չի կազմակերպված այնպես, վոր
տահանվող ապրանքները ծախվեն մաքսիմալ ձեռնտու գներով
ներմուծվող ապրանքները վաճառվեն ըստ կարելվույն ցածր գ
ներով: Խորհրդային Ռուսաստանի արդյունաբերության ար
յունքները, մանավանդ կտորեղենը, մեզանում ծախվում են գ
ծարանական գներից 100 յեվ ավելի տոկոսներով բարձր, փ
խանակ ամենաշատը 20 տոկոս բարձր լինելու: Թիֆլիսի շ
կայում խմբավաճառ արդյունաբերական ապրանքները թանգ

Յեվրոպական Ռուսաստանի խմբավաճառ արդյունաբերական ապրանքներից 46 տոկոսով: Այսպես, նոյեմբեր 1-ին, անդրկովկասյան դրամանիշներով, Յեվրոպական Ռուսաստանի խմբավաճառ արդյունաբերական ապրանքների գների ինդեքսը 15,984,000 եր, իսկ Թիֆլիսի շուկայինը՝ 23,284,294 (Թիֆլիսի ինդեքսը Անդրկովկասի ֆինժողկոմատի մշակածն է, իսկ Յեվրոպական Ռուսաստանինը ռուսական Գոսպլանի)»:

«Յերևանի խմբավաճառ արդյունաբերական ապրանքների գների ինդեքսները, դժբախտաբար, պատահական կերպով են մշակվում և հրապարակվում: Բայց այդ հրապարակված (Անդրկովկասյան Ֆինժողկոմատի) դիպվածային ինդեքսները ցույց են տալիս, վոր Յերևանի գները Թիֆլիսի գներից շատ բարձր են: Այսպես, հունիսի 1-ին Յերևանում արդյունաբերական (վոչ պարենային) ապրանքների գների ինդեքսը 4,900,919 եր, իսկ Թիֆլիսինը՝ 3,098,423, այսինքն, Յերևանում արդյունաբերական խմբավաճառ ապրանքները 60 տոկոսով բարձր են Թիֆլիսի գըներից: Այսպիսով, դուրս է գալիս, վոր Թիֆլիսի գները (նոյեմբերի 1-ին) բարձր եյին Յեվրոպական Ռուսաստանի գներից 46 տոկոսով, իսկ Յերևանինը Թիֆլիսի գներից 60 տոկոսով (հունիսի 1-ին): Այդ հարաբերությունն ըստ եյության մնում է և այժմ (տես իմ «Առևտրական միջնորդի դերը» հոդվածը, «Խ.Հ.» № 146): Այսպիսով, Հայաստանի աշխատավորն իր գնած ապրանքների համար մոտ 100% ավելի թանգ է վճարում, քան դիցուք, Մոսկվայում, մինչդեռ, կրկնում ենք, կարող եր առևտրի նորմալ ընթացք ունենալու դեպքում, վճարել միայն 15—20%»:

«Թե ինչ է նշանակում մեր ժողովրդական տնտեսության համար ապրանքների համար վճարել ավելի առնվազն 80%՝ այդ ցույց է տալիս Ռուսաստանի մշակող արդյունաբերական արտադրությունը: Ըստ ընկ. Ստրումիլինի «Экон. Обозрение» 1922 թ. № 10-ում բերված տվյալների՝ 1922 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1923 թ. հուլիսի 1-ը (1922—23 բյուջետական տարվա յերեք յեռամսյակում) այսինքն 9 ամսում Խորհրդային Ռուսաստանի մշակող

արդյունաբերությունն արտադրել է 662,702,000 ոսկի ռուբլ… այնպիսի ապրանքներ, որ սովորաբար գործ է ածում ժող… վուրդը (միայն 281,372,000 ռուբլու կտորեղեն)։ Ցեթե տար… վրա հաշվենք՝ կստանանք մոտ 900,000,000 ռուբլի ապրանք։ Հ… յաստանի բնակչությունը կազմում է Խորհրդային Հանրապետ… թյունների բնակչության առնվազն 0.7 մասը։ Թող այդ 0.7- գնե ռուսական մշակող արդյունաբերության արտադրած ապ… կան 900,000,000 ռուբլու ապրանքի վոչ թե մեր թվի համեմ… 0,7-ը, այլ առնվազն 0,5-ը, այսինքն կես տոկոս։ 900 միլ. կ… տոկոսը կանե 4,500,000 ռուբլի։ Նշանակում է Ռուսաստանի գ… ծարանական գներով հաշված, մենք հայաստանցիներս տարեկ… Ռուսաստանից գնում ենք առնվազն 4,500,000 ոսկի ռուբլ… ապրանք։ Այդ 4,500,000 ոսկի ռուբլու ապրանքին այստեղ մե… վճարում ենք 100% ավելի, այսինքն 9,000,009 ռուբլի։ Ցե… առևտուրը մեզանում ուղիղ հիմքերի վրա դրված լիներ, ա… 4,500,000 ռուբլու ապրանքը, հաշված ճանապարհածախսը և … յերկու առևտրական միջնորդի օգուտը, մեզ կնստեր ամենաշ… տը 6,000,000 ռուբլի (հաշվելով 33%-ի չափ այստեղ թանգ… Նշանակում է, մենք առնվազն տարեկան 3,000,000 ռ. ոսկ… տալիս ենք ավելի,— ուղղակի կորցնում ենք… մյուս կողմ… ել ժողովրդական տնտեսության արտադրությունն եման ե… ծախում է այս կողմից ել ենք կորցնում… Վորովհետև մեր յե… կրի առևտուրը համարյա ամբողջապես մասնավոր մարդկան… ձեռքին է, ուստի մենք տարեկան այդ մասնավոր մարդկան… շնորհիվ՝ առևտրի անկանոն վիճակի, քաշխում ենք մոտ 4- միլ. ոսկի ռուբլի։ Ցեթե այդ գումարը մեր գրպանում մնա… մենք վոտքի կկանգնեցնեյինք և գյուղատնտեսությունը և կշ… նեյինք մեր Ալեքպոլի կտորեղենի գործարանը և այլն։

«Առևտուրը բերեվս, մեր ամենավերոտ կողմն է, չեմ ա… վերքը պետք է վճռապես արագ կերպով բժշկել, բեկում գ… համար կարիք լինի վիրաբույժի, կտրուկ պետական կարգադրու… թյան միջամտության… Առևտուրը կլանում է մեր ժողովրդակ… …տեսության հավելյալ աշխատանքը, այն, վոր պետք էր ավե…ցներ այդ տնտեսության հիմնադրումը և ուժեղացներ նրան։ …ս հիվանդությունն ավելի սաստիկ ձևով յերել է և նախա… Հորհրդային Հայաստանում, բայց մեզ այդ չի կարող մխիթա…րել»։*)

1914 թ. Ռուսաստանի առևտրական ամբողջ շրջանառու…ունը—4½ միլիարդ, վորից 290 միլիոն կամ 6,4 տոկոսը կա…վում էր սպառկոոպերացիան. իսկ 1922 թ. ամբողջ շրջանա…ւթյունը։ $1^3/_{10}$ միլիարդի, վորից կոոպերացիան—236 միլիոն …մ 18 տոկոսը։ Ներկայումս գյուղի և քաղաքի փոխանակման …րծը գտնվում է գերձյալ նույն առևտրականների ու պարա…տների ձեռքը, վորոնք օգտվելով գյուղացու նեղ դրությունից …ին գներով վերցնում են նրա արդյունքները և հրեշային գը…ով տալիս են նրան քաղաքի արտադրությունները։ Կոոպե…ցիան կռվելու է մի ուրիշ չարիքի «վաշխառուական կապիտա… գեմ», վոր սարդի նման իր ցանցով ծածկել է վարկազուրկ և …պատ գյուղացիությունը։

Ուրեմն կոոպերացիան գյուղում յերեք չարիքի դեմ պիտի …րտնչի. ա) առևտրական կապիտալի, բ) միջնորդական կապի…ալի և գ) վաշխառուական կապիտալի դեմ։

Գ.

ՅԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

«Խորհրդային իշխանությունը լարեց ուժերի մաքսիմումը, 21 թվի աշնանը և 1922 թ. գարնանը ազգաբնակչությանը …ժանից մատակարարեց 325.000 փութ սերմացու և ցանքսերի …րածությունը 1919–20 թ. թ. համեմատությամբ կրկնապատ…եց։ Հայաստանում ցանքսերի տարածությունը նախապատե…զմյան շրջանի հետ համեմատած վողբալի պատկեր ունի»

*) 33—35 յերեսի ամբողջ քաղվածքը վերցրել ենք «Խ. Հ.»-ի 257 ընկ. Գ. Աբելյանի խիստ հետաքրքիր հոդվածից։

1914 թ. նրա տարածությունը յեղել էր 155,000 դես. իսկ 1919 նա կրճատվել և իջել էր 37,800 դես. 1922 թ. նա ընդարձակ ու հասավ 65,000 դես.: Իսկ 1923 թ. նրա ընդհանուր տա ծությունն արդեն մոտեցել է նախապատերազմյան շրջանի փերին (144,676 դես.)»:

«Այդպիսով՝ այսօր հանգիստ խղճով պիտի ասենք, վոր հրդային իշխանության և ժողովրդի հրապարակ բերած անս նակ յեռանդի և ջանքերի արդյունքը հաջողությամբ է պսակ և մեր յերկրի ազգաբնակչության Փիզիքական գոյությ սպառնացող ամենավտանգավոր և ամենասոսկալի թշնամին՝ վը մեր սահմաններից դուրս է վտարված»:

«Հաղթահարելով սովին և կայուն անտեսական կյանքի ժար բոլո հնարավորին նորմալ պայմաններ ստեղծելուց հե միայն անցյալ, 1922 թ. հնարավոր դարձավ ժողովրդի անտե կան կյանքի վերածնության և բարեկեցության ծրագրված շոր գործի սկիզբը դնել»:

«Հողժողկոմատն արդեն իր ուժերի և մեր պետության տ տեսա-Փինանսական պայմանների ներածին չափ, սկսել է հ վերականգնման համար ծրագրված ուղիներ ընդգծել ու նրա տիճանական կիրառմանն անցնել»:

Դ.

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

«Անասնապահությունը մեր յերկրի տնտեսական կյանքի մենակարևոր գործոններից մեկն է հանդիսանում: Կան վ րեր, վորտեղ ազգաբնակչության անտեսական գործունեությ նը պայմանավորված է միմիայն անասնապահությամբ և հարակից կաթնատնտեսությամբ. իսկ խոշոր յեղջյուրավոր ան սունները մեր աշխատավոր մասսաների ընդհանուր անտես թյան մեջ կազմում են անհրաժեշտ ու բացառիկ տարր»:

«Սակայն մեր անասնապահությունը քայքայվեց վեր

արիներս՝ մեր յերկիրը ներս խուժած մի շարք համաճարակա- ն բնույթ ստացած հիվանդությունների շնորհիվ: 1922 թ. 4 ավառի 51 ժանտախտով վարակված վայրերում պատվաստու- րի յեն յենթարկված յեղել 24,440 գլուխ անասուն: Պատ- վաստումներից հետո են 670 գլուխ, վոր անում է 2,8%: Մի նզամանք, վոր պերճախոս կերպով ապացուցում է հակաժան- տախտային սրճուկով բժշկելու խիստ ռացիոնալ միջոցը»:

«Նույն թվին այլ և այլ հիվանդություններով Հայաստանի 7 վառներում հիվանդացել են 205 գլուխ, ու նրանցից սատկել ու չնչվել են 189 գլուխ: Հատկապես մեծ սպառնալիքի տակ էր այս տարի: Անասունների համաճարակային հիվանդություն- րից ամենավտանգավորն և ամենատարածվածն անասունների անտախտն է, վորով այս տարի գրեթե բռնված եյին Հայաստանի լոր գավառները: Այս տարի Հայաստանի 8 գավառների 142 նտախտով վարակված վայրերում ցուցակագրված է յեղել 28,236 գլուխ խոշոր յեղջ. անասուն: Հակաժանտախտային ատվաստումի յեն յեղել յենթարկված 106,445 գլուխ, հիշյալ գավառներում մինչև պատվաստումներ կատարելը հիվանդացել 8,195 գլուխ և սատկել 5,227 գլուխ, վորը կազմում է 63 տո- ը: Բայց շնորհիվ Հողժողկոմատի Անասնաբուժական բաժնի ած առած կարուկ միջոցների, ինչպես նաև ՍԽՀՄ կենտրոնա- ն Անասնաբուժական վարչության, ձրիաբար տրամադրված ծ քանակությամբ հակաժանտախտային սրճուկի, պատվաս- ումների յեն յենթարկած 106,445 գլուխ, սատկել է ընդամենը 063 գլուխ և նրա զոհերի թիվը հասել է մինիմումի՝ մի տոկո- , և մեր, առանց այն էլ վերջին տարիների վայրիվերումների ևանքով չափազանց մեծ կորուստներ աված և հազիվ հազ րքի կանգնող անասնապահությունն ազատվել է մեծ վտան- գը»:

«Յեթե մեր դաշտային և նախալեռնային ազգաբնակչու- ունը բամբակագործությամբ, այգեգործությամբ և այլ թան- րժեք կուլտուրաների և հացաբույսերի մշակությամբ հետզ-

հետև և վիճակի պիտի լինի իր համար ապահով դրութ
ստեղծելու, ապա գյուղատնտեսական կյանքի և զբաղմունքի
այլ պայմաններ ու կարելիություններ պիտի գտնի ապահով
մեր Ալպյան գոտիների ազգաբնակչության տնտեսական կյ
քում»:

«Անասնապահությունը, որ մինչև պատերազմյան շրջ
այդ գոտիների ազգաբնակության գլխավոր զբաղմունք
տնտեսության գլխավոր աղբյուրն է հանդիսանում, այժմ
կյալ վիճակի մեջ է»:

«Սակայն մեր լեռնային և Ալպյան գոտիների ազգաբնակ
թյանն անհրաժեշտ է նորից վերադառնալ անասնապահութ
և կաթնատնտեսության արդյունքների մշակույթին, որ
խապատերազմյան շրջանում հանդիսացել է նրանց գլխ
զբաղմունքի առարկան և տնտեսական կյանքի աղբյուրը:
վական է հիշել, որ նախապատերազմյան շրջանում Հայաս
նում պատրաստվում և արտահանվում էր մոտ 50.000 փ
շվեյցարական պանիր, որ իր լավ որակով ու հատկությ
գերազանցում էր նույնիսկ բուն շվեյցարական պանրին և ն
դուրս էր մղել Անդրկովկասյան շուկաներից, իսկ այդ ն
պանիրն այս տարի համառուսական գյուղատնտեսական ցու
հանդիսում ստացավ ամենամեծ մրցանակը: Եվ չենք խո
լծկան յեղջյուրավոր անասունների, մացվի կենդանիների, ե
յուղի և անասնապահության այլ շահավետ արդյունաբե
թյունների մասին, որոնք կազմում էին այդ գոտիների
գաբնակչության տնտեսական բյուջեյի խոշորագույն մասը

«Անասնապահությանը զարկ տալու համար Հողժողկոմ
այս տարվա հոկտեմբեր ամսից հիմնել է անասնաբուծութ
հատուկ բաժին, որի հիմնական նպատակն է լինելու հետա
դել մեր անասնապահության հետագա զարգացմանը՝ ա
ավելի նպատակահարմար ու ռացիոնալ ընթացք, կազմակե
Հայաստանի զանազան անասունների որակի և հատկությ
ների հետազոտություններ, ինչպես նաև ձեռնարկել տեղա

ավագույն տեսակների պահպանման, հիմնել անասնաբուծարաններ և բեղմնավորման կայաններ՝ մեր անասունների տեսակներն ազնվացնելու համար: Կազմակերպել կաթնատնտեսության արդյունաբերության կատարելագործված ձևերի կիրառում են»:

3Ե

ՄԵՐ ԹԱՆԿԱՐԺԵՔ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԸ

«Հատուկ ուշադրության են արժանի մեր թանկարժեք կուլտուրաները: Դրանցից բամբակը կազմում է մեր յերկրի գլխավոր արտահանությունը և տնտեսական կյանքի առանցքը:

Նախապատերազմյան շրջանում մեր յերկրից արտահանվում էր 600 հազար փթից ավելի բամբակ և իր արժեքով կազմում էր մեր յերկրից արտահանված այլ վալյուտային արժեքավոր ապրանքների և հում նյութերի 56 տոկոսից ավելին:

1914 թվին մեր յերկրից արտահանված էր 14 մլ. ռուբլու զանազան ապրանքներ, որից 8,400,000 ր. կազմում է միմիայն բամբակի արժեքը:

Վայրիվերումների ընթացքում ընկած այդ կուլտուրայի վերականգնման գործով զբաղվեց կառավարությունը հենց սկզբից:

Հայաստանի Ժողկոմխորհը 1921 թ. վորոշեց իր սահմանափակ միջոցներով օգնության հասնել բամբակագործության վերականգնման: Այդ նպատակով Հողժողկոմատին կից կազմվեց հատուկ բամբակի կոմիտե—Հայբամբակկոմ: Բամբակացաններին պատրաստավորելու և խրախուսելու համար վորոշվում է յուրաքանչյուր մեկ դեսյատին բամբակի ցանքսի համար բաց թողնել 50 ռուբլի վոսկով: Սոված գյուղացիության շարքերում շահագրգռություն առաջ բերելու նպատակով այդ նպաստը բաց է թողնվում բացառապես ցորենով, և այդ նպատակի համար բաշխվում է 6,000 փ. ցորեն: Միևնույն ժամանակ գյուղական բոլոր տնտեսություններին տրվում է ընտիր սերմ, մոտ 6,475 փ:

1922 թ. բամբակ ցանվել է 750 դես., որից ստացվել էր 10,000 փ. բամբակ:

Բամբակագործության վերականգնումը մեր յերկրում ավելի

լավ հիմքերի վրա դնելու և նրա արդյունաբերությունը բար[ձ-]
րացնելու համար՝ այս տարվա մարտ ամսից Խորհրդային Հ[ա-]
յաստանի բամբակի կոմիտեն և Խ. Ռուսաստանի բամբակագ[որ-]
ծության գլխավոր վարչությունը կազմել են ընկերությ[ուն]
590,000 ր. (վոսկով) դրամագլխով:

Այս տարի բամբակի ցանքսի տարածությունը հասցրվ[ել]
է 4054 դես. և բերք սպասվում է մոտավորապես 202,713 փ[ութ]:

Բամբակատուների վարձը բաց է թողնված ցորենով, մ[ա-]
նուֆակտուրայով, բամբակի սերմով և բամբակը «չոռ» հիվ[ան-]
դությունից բժշկելու համար ծծումբով, վորոնց ընդհանուր ա[ր-]
ժեքը հավասար է՝ 415,731 ր. չերվոնեցով:

Բամբակից հետո մեր ժողովրդատնտեսության կարևոր ա[ղ-]
բյուրն է հանդիսանում գյուղատնտեսության մի այլ մշակույ[թ]
—այգեգործությունը:

Ցավալին է հիշել, վոր նախապատերազմյան շրջան[ի]
այժմյան Հայաստանի սահմաններում 8,000 դեսյատին տար[ա-]
ծություն բռնող այգիները անմշակ ու անխնամ մնալու հետև[ան-]
քով 40 տոկոս վոչնչացել են, իսկ նրանց բերքատվությու[նը]
նվազել է 70 տոկոսով:

Նախապատերազմյան շրջանում, մեր յերկրում պա[տ-]
րաստվում է դեպի Ռուսաստանի շուկաներն էյին արտահան[վում]
զանազան պտուղներից պատրաստված մոտ 150,000 փութ կ[ո-]
նսերվ և պյուրե:

Արտահանելու համար պտղաբուծության զարգացումը և վ[ե-]
րականգնելու կոնսերվի արդյունաբերությունը՝ Հողժողկոմա[տը]
այս տարի ձեռնարկելով այդ գործին՝ հաջողեցրեց պատրաստ[ել]
մոտ 14,000 փութ զանազան պտուղներից կոնսերվ և պյուրե:

Զ

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի վորոշ շրջանների՝ Մեղրու և Ղափանի ազգ[ա-]
բնակչության հիմնական զբաղմունքների շարքում իր նշանակ[...]
լից տեղն է բռնում **շերամապահությունը**: Նախքան պատերա[զ-]

մը Մեղրու և Ղափանի 24 գյուղերը մոտավորապես պահում
էյին 1300—1500 տուփ շերամի սերմ. ստանալով 4—4500 փութ
թաց բոժոժ. հետագայում, սակայն, քաղաքական իրադարձու-
թյուններն ու սովն այդ թիվը կրճատեցին 50 տոկոսով, այժմ նո-
րից նա կենդանանում է:

Շերամապահության ընդարձակ չափերով զարգանալու հիմ-
նական պայմաններից մեկն է թթենիի տնկարանների ընդար-
ձակումը: Այս տարի այդ ուղղությամբ վորոշ աշխատանքներ
ձեռնարկել է Հողժողկոմատի սերմաբուծարանը:

Հողժողկոմի շերամապահական կայանը բացի կոնտրոլի հիմ-
նական նպատակներից, Հայաստանի կարիքները բավարարելու
համար ձեռնարկել է շերամի հունդի պատրաստման: Անցյալ տա-
րի կարողացավ պատրաստել միայն 300 տուփ, իսկ այս տարի
կայանում պատրաստված է 800 տուփ. իսկ Մեղրիում 730 տուփ,
վորը լրիվ կերպով կբավարարի յերկրի կարիքներին: Մեր շերա-
մապահական կայանը հետզհետե ընդարձակելով իր գործունեյու-
թյունը մտադիր է շերամի հունդի քանակը հասցնել 65—750,000
տուփի և այն դարձնելու արտահանության նյութ*):

Է

ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Կենտվիճվարի հրատարակած տվյալների մեջ խաղողա-
գործության մասին վոչինչ չկա: Սակայն, հայտնի յէ «Կավ.
Կալ.»-ից, վոր 1913 թվին *) ներկա Հայաստանի Յերևանի
և Էջմիածնի գավառներում, խաղողի այգիները բռնում էյին
8,200 դեսյատին տարածություն և տվել են 4 միլ. 700 հազար
փթից ավելի խաղող, վորից, հանած իբրև միրգ գործածված
և վաճառված մասը, ստացվել է մոտ 2 միլ. 800 հազար դույլ գինի և
16 միլիոնի չափ ստորճան սպիրտ: 1919 թվին, հավանորեն,

*) 35-41 յերեսի բոլոր տեղեկությունները ու մեկնաբանու-
թյունները վերցրել եմ «Խ. Հայաստանի» № 267 ընկ. Փ. Աթա-
բեկյանի հոդվածներից:

Յերևանի և Եջմիածնի շրջանների այգիները շատ տուժած չէին, սակայն, տաճկական արշավանքի և քաղաքացիական կռվի հետևանքով, նրանք մեծապես տուժեցին 1920—21 թ.: «Արարատ գործ. վարիչ ընկ. Մուսինյանի վիճակագրական տվյալների համաձայն, 1922 թվին վերականգնված այգիների տարածությունը Յերևանի և Եջմիածնի գավառներում հավասար էր 6640 դեսյատինի: Հավանորեն, այս տարի այդ տարածությունն ավելի մեծացած կլինի: կարելի յե ասել, վոր Խորհրդային իշխանության որոշ և նրա դրամական աջակցությամբ խաղողի այգիները հետզհետե հասնում են նորմալ վիճակի: Այս 1923 թվին բերքը լավ է համարվում, յերևի մոտ 2 միլիոն փթի չափ խաղող կհավաքվի»

Գյուղատնտեսական այդ ճյուղերի զարգացման և խորացման գործում անփոխարինելի դեր ունի կատարելու կոոպերացիան: Գյուղատնտեսության ու կաթնատնտեսության արտելների, միությունների ու կամավոր կոոպերատիվ խմբավորումների միջոցով հնարավոր է աստիճանաբար սովորեցնել մեր գյուղացուն հավաքական աշխատանքի և ինտենսիվ տնտեսության:

Կոոպերացիան ինքնագործ ու հավաքական կազմակերպություն է: Խորհրդային իրավակարգում, ինչպես գրում է ընկ. Լենինը, «կոոպերացիան համընկնում է սոցիալիզմին. կոոպերացիան լիակատար կիրառելու դեպքում մենք յերկու վոտքով կանգնած կլինենք սոցիալիստական հողի վրա: Բայց այդ լիակատար կոոպերացիան իրագործելու պայմանը-գյուղացիության այնպիսի կուլտուրականություն է պահանջում (գյուղացիության, իբրև մի հսկա զանգվածի), վոր այդ լիակատար կոոպերացիայում հնարավոր է դառնում առանց մի հսկայական կուլտուրական հեղափոխության... բավական է, վոր մենք այժմ այդ կուլտուրական հեղափոխությունը կատարենք վորպեսզի մեր յերկիրը միանգամայն սոցիալիստական դառնա: Կուլտուրական հեղափոխություն կատարողները կոոպերատորներն են:

* * *

Հայաստանի կոոպերացիան ընթանում է միասնական ուղիներով: Մեր յերկրում կազմակերպվում է բանվորա-գյուղացիական կոոպերացիան, վորը կատարելու յե սպառման, արտադրական, գյուղատնտեսական վարկային և այլ ֆունկցիաներ: Միասկոոպների շուրջը համախմբվում են բանվորա-գյուղացիական մասսաները: Նշանակում է մեր կոոպերացիան իր բնույթով ինտեգրալ է:

Միասնական կոոպերացիան գյուղացիական միջավայրում ունենալու յե սպառողական, գյուղատնտեսական, վարկային, տնայնագործական և արտադրողական ֆունկցիաներ: Կոոպերացիան իր գործողությունները պետք է զարգացնի հետզհետե, աստիճանաբար՝ սկսելով մի ֆունկցիաներից և յուրացնելով վերջիշյալ բոլոր ֆունկցիաները: Ուրիշ խոսքով կոոպերացիան ընթանալով միասնական ուղիով դառնալու յե Միավորյալ-ինտեգրալ: Ինտեգրալ կոոպերացիան ամրացնելով և ուժեղացնելով մեր տնտեսական ֆրոնտը՝ ի մի է հավաքում արտադրողների և սպառողների ջլատված ու ցրված ուժերը:

VI

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄԻԱՍԿՈՌՊԻ ԴԵՐԸ ՅԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Գյուղի միասնական սպառողական ընկերություն—Միաս-կոոպը, ինչպես գիտենք, բացի սովորական մանր-ծախս առև-տրից՝ կատարում է նաև գյուղատնտեսական, վարկային միջնոր-դական և ուրիշ գործեր: Միասկոոպն իր անդամների համար քա-ղաքից բերում է հարկավոր ապրանքներ ու մթերքներ, նրանց տնտեսության անհրաժեշտ գործիքներ, մեքենաներ, սերմորանք իսկ գյուղից տանում—արտահանում է քաղաք հացահատիկներ, յուղ, պանիր, գինի, բամբակ ու գյուղատնտեսական այլ բա-րիքներ՝ գյուղացու համար ձեռնտու գներով վաճառելու նպա-տակով:

Գյուղում Միասկոոպին ասում են «սպառողական ընկերու-թյուն» բայց նա փաստորեն կատարում է նմանապես, այնպիսի գործեր, վորոնք հոգում են մեր աղքատ ու միջակ գյուղացու կարիքները, օգնում են նրա տնտեսական վերականգնման ու զար-գացման և մատակարարում են նրա ընտանիքին այն ամենն ինչ վոր ներկա կյանքը պահանջում է:

Ինչպես տեսնում ենք Միասկոոպը գյուղում միայն «սպա-ռողական խանութ» չի, նա միայն առևտուր չի անում. կյանքը պահանջում է, վոր կոոպերատիվը դառնա մեր գյուղացու սըր-տակից բարեկամը, նրա ուրախության ու տխրության ընկերը նրա աշխատանքի «քյոմակտարը»—օգնականը:

Գյուղացուն միայն լուցկի, նավթ, սապոն ու մանուֆակ-տուրա ծախելով չես փրկի, հարկավոր է, վոր կոոպերացիան դառնա գյուղի և քաղաքի միջնորդը, տանի քաղաք գյուղացու քրտինքի արդյունքը—բանվորներին ու ծառայողներին, այնտեղ էլ տանա—կոոպերատիվի պահեստից գյուղացու և նրա տնտե-սության համար կարեվոր ապրանքներ, նյութեր ու բերի գյուղ և բաժանի ամենքին:

Գյուղացին տարբերվում է բանվորից նրանով, վոր նա սպառում է գործարանային ապրանքներ և արտադրում է գյուղա-տնտեսական մթերքներ: Գյուղացին միևնույն ժամանակ և գնող է և թե վաճառող: Նրա գնումների քանակն ու չափը կախ-ված է նրանից թե նա վորքան է կարողանում վաճառել իր աշ-խատանքի արդյունքներից: Ընդհանրապես միջակ գյուղացու տնտեսությունից շատ քիչ բան է մնում վաճառելու համար: Իր աշխատանքի արդյունքը գլխավորապես գնում է ընտանեկան կարիքների բավարարման գործին: Միջակ գյուղացին այնքան շատ չի ցանում—ցորեն, վոր ծախի էլ, միջակ գյուղացու 1-2 կո-վից այնքան շատ յուղ պանիր չի ավելանում, վոր քաղաք ու-ղարկի, միջակ գյուղացու այգու խաղողը այնքան շատ չի—վոր մշակի—գինի դարձնի ու վաճառի:

Այդպիսի դեպքում հնարավոր է արդյոք, վոր միջակ գյու-ղացուն ըստ նրա զբաղմունքների, միացնենք զանազան տեսակ կոոպերատիվ ընկերությունների հետ—կաթնատնտեսական ար-տելի—վորպես կովատեր, այգեգործականին—վորպես այգետեր, բամբակագործական միության—վորպես բամբակագործ և այլն:

Կյանքի փորձը ցույց է տվել, վոր մեր գյուղում առանձին առանձին կոոպերատիվներ կազմակերպելն անմիտ բան է. մի-ջակ գյուղացին իր տնտեսությունից ստացած աննշան արդյուն-քը չի կարող մի քանի տեղ բաժանել, բնական է այդպիսի կո-ոպերատիվները զատ-զատ չեն կարող զորանալ, և անկախ գոր-ծել: Մեր գյուղն ամբողջովին վերցրած՝ չունի փորձված ձեռնա-հաս մարդիկ, վորոնք մի քանի կոոպերատիվներ կարողանան կառավարել չունի ինքը նյութական միջոցներ, վոր իր կոոպերա-տիվը ուժեղացնի, ինչպես ասում են «գյուղացին մի քանի կտոր չի կարող լինել»:

Մեր գյուղը կարիք ունի միայն մի կոոպերատիվի— միասնական ընկերություն—միասկոոպի, գյուղին կարող է օգնել կառավարել միայն մի ընկերություն, որը կատարի առևտուր՝ փոխանակորեն վերցնելով իր վրա քաղաքի և գյուղի միջնորդի դերը, բաց անի գյուղացուն վարկ, կռվելով գյուղական առևտրականների, չարչիների, վաշխառուների և սպեկուլյանտների դեմ։ Մեր աղքատ և միջակ գյուղացիները պետք է կազմակերպվեն միայն գյուղական միասկոոպի շուրջը, որն այդ դեպքում կլինի ուժեղ, հաստատ և գործող։ Գյուղացու «քյամակղարը»՝ միասկոոպն է։ Միասկոոպը գյուղացիության մեջ հանդիսանում է այն զորեղ կազմակերպությունը, որ ուղղություն պիտի տա գյուղական տնտեսության զարգացման, առևտրական ու տնտեսական կապ առնեղծի քաղաքի բանվորության հետ ձեռք-ձեռքի տալով միասկոոպներին՝ առաջ տանի Խորհրդային շինարարությունը։

VII

ՄԱՆՐ ՎԱՐԿԸ ԵՎ ՄԻԱՍԿՈՈՊԸ

Կոոպերացիայի հանդեպ ծառացած հասուն խնդիրներից է **մանր վարկի կազմակերպումն**։ Այս հարցն ավելի արժեքավոր դառնում հենց այժմ այն պարզ պատճառով, որ գյուղատնտեսության վերականգնումն պահանջում է գյուղի գնողական ընդունակության բարձրացումն, իսկ վերջինիս լուծումն անհնար է առանց գյուղացիության համար վարկի կազմակերպումն։

Մեր շինարարական աշխատանքների ծրագիրն մշակելիս և …որ ուղիներ՝ ընդգծելիս չպետք է մոռացության տալ կամ անուշադրության մատնենք անցած տարիների կուտակված փորձը և իր հետևանքները։ Այդ փորձը մեզ պարզ և որոշ ասում է, **որ մեծ է յեղել գյուղի տնտեսական կյանքում մանր վարկի դերը։**

Հայաստանի մանր վարկի ընկերությունների թիվը 1909 թվին հասնում էր 14-ի, իսկ 1916 թ.-77-ի, որոնք կազմակերպել էին իրենց շուրջը 34.928 անդամ։ Մանր վարկի դրամական միջոցները կազմում են 1909 թ.-491 րուբլի 56 կ. փողով, իսկ 1916 թ. 4.140.867 ր. 1909 թ. յուրաքանչյուր անդամին հասնում էր միջին թվով 85 րուբլի, իսկ 1916 թ.—118 ր։ Վարկ-կոոպերի գործառությունները կայանում էին բացառապես փոխատվություններ տալու մեջ. 1909 թ. որպես փոխառություններ տրված են 29.833 ր. կամ միջին թվով յուրաքանչյուր անդամին 81.1 ր. իսկ 1916 թ. 1.646.237 ր. կամ միջին թվով ամեն մի անդամին 7.1 ր.։ Այդ փոխատվություններից մոտավորապես 96 տոկոսը հատկացված են գյուղատնտեսական նպատակներին, օրինակ, բանվոր-անասուններ, սերմեր, կեր գնելու, հողեր և կալվածամասեր

կապալով վերցնելու և այլն: (Տես «Հայաստանի կոոպերացիա» № 5-8):

Մերձքաղաքային կոոպերացիայի զարգացման ներկա տնտեսական պայմանները տանելու են մանր վարկի գործը նոր ուղիներով: Վարկկոոպների ֆունկցիաները այժմ յուրացրել է միասնական կոոպերացիան. մանր վարկի կազմակերպման ինքնուրույն և անկախ ձևերի մասին խոսք չի կարող լինել: Հարցը միայն նրանումն է թե ինչ միջոցներով պահպանել և զարգացնել միասկոոպներում նախկին վարկային և փոխատու-խնայողական ընկերությունների հատուկ ֆունկցիաները: Հարցը այն է, որ վարկկոոպների անկախ կազմակերպումը բնականորեն առաջ բերելու պարալելիզմ կոոպերատիվ ապարատում — թուլացնելով, ջլատելով մեր ուժերը տնտեսական ապարատում: Ներկայումս վարկային ֆունկցիան ավել կամ պակաս չափով կատարում է միասկոոպը, որին բացի ֆինանսական միջոցներից, ոչինչ պակասում:

Միասկոոպը հենվելով աղքատ և միջակ գյուղացիության վրա՝ պետք է օգտվի վարկկոոպի անցյալ փորձերից, նամանավանդ այժմ, յերբ նախնական կոոպերատիվները կազմակերպվում ու հիմնավորվում են անդամագրության կամավոր սկզբունքի և անդամների ակտիվ մասնակցության վրա:

Ինչ ուղղությամբ հարկավոր է օգտագործել վարկկոոպների փորձը՝ անդամներից ավանս-դրամների ընդունումն, տեղական միջոցների խնայողական գանձումն: Ահա հարվածային մի խնդիր նամանավանդ ներկա մոմենտում, յերբ գյուղացիության նկատվում է դրամական շրջանառության ուժեղանալը: Միասկոոպում ապրանքային ռեսուրսների գոյությունը հաստատ յերաշխիք ու դրավական է դրամ մուծողների համար: Մյուս կողմից շահագրգռման սկզբունքի կիրառումն՝ միասկոոպում զարգացնելու է փոխատու-խնայողական գործառնությունները:

Փոխատվության և ապրանքային վարկի ֆունկցիաները խորթ չլինելով միասկոոպի համար — սպառկոոպերացիային

տնտեսապես կուժեղացնի փոխատու և խնայողական գործառնություններ կատարող անդամների կապը:

Գյուղատնտեսական մթերքների պատրաստումն ու վաճառումն միջնորդական և կոմիսիոն գնումները, որ հատուկ եյին վարկկոոպին, այժմ քան յերբեք հարազատ են միասնական կոոպերացիային:

Այս ուղղությամբ ներկայումս շոշափելի գործ են կատարում միասկոոպները: Միայն հարկավոր է նրանց ֆունկցիաներին տալով կազմակերպ և մշտական բնույթ՝ ավելի զարգացնելով և խորացնելով: Մյուս կողմից սպառ-կոոպերացիային տրամադրելով վարկի ապրանքային, դրամական ռեսուրսները ու վերացնելով պետ հասարակական հիմնարկների անջատ գործելու տենդենցիան՝ հնարավորություն տալ միասկոոպին դառնալու գյուղական զանգվածային կազմակերպություն:

VIII

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԻԱՍԿՈՈՊԸ

Ժամանակակից գյուղի տնտեսական ուժեղ կազմակերպությունը սպառողական միասնական կոոպերատիվն է — միասկոոպը:

Գյուղի միասկոոպը ընդգրկելով աշխատավորական զանգվածները՝ հանդիսանում է վորպես ուժեղ ազդակ, գյուղի կուլտուրական նախաձեռնություններին և հողաշինարարական ուղիներին:

Մատակարարել գյուղատնտեսության սերմորանք, պարարտանյութեր, գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ, ցեղային անասուններ, կազմակերպել արժան վարկ, օգնել գյուղացուն վաճառելու իր մթերքները ձեռնտու գներով, մշակել գյուղատնտեսական նյութեր, ահա միասկոոպի հանդեպ ծառացած կարևոր ու այժմյական խնդիրները:

Հայաստանի կոոպերացիայի պրակտիկան ցույց է տալ
որ միակոոպը, դանդաղ, կրիայի քայլերով ընդգրկում է գյուղ
կան տնտեսությունը, հոգալով նրա բազմազան կարիքները
դառնալով օրեցօր մասսայական կազմակերպություն:

Առանձնապես Ռուսաստանում միակոոպները ցուցադրել
իրենց ըստ ամենայնի: Համարյա բոլոր միակոոպները յերև
են հանել իրենց վողջ ույժը—գյուղատնտեսական վարկի կազմ
կերպման և մասսաների վարկավորման խնդրում:

Միակոոպների նախաձեռնությամբ՝ կազմակերպվել են շ
շրջաններում գյուղատնտեսական վարկի ընկերություններ, վ
րոնց բաժնեվճարների խոշոր մասը ընկնում է սպառկոոպեր
ցիայի վրա: Միակոոպն իր վարկային բաժնի օգնությամբ մ
մանակին ու ձեռնտու պայմաններով բնակչությանը և յենթա
կում գյուղացու մթերքների հավելցուքն ազատելով նրան փչ
նալուց և անարժեքանալուց:

Պակաս դեր չեն կատարում Հայաստանի միակոոպնե
գյուղը և քաղաքը զոդելու գործում:

Համահայաստանյան կոոպերատիվ միությունը—Հայկոո
հունվարի 1-ից, մինչև 1սեպտ. ն/թ. միակոոպներին բաց է թող
162,842 ր. 82 կ. ամեն տեսակի ապրանքներ վոր ըստ գավա
ների բաշխվել է Յերևան—19,5%, Նոր-Բայազետ—12,7%, Մ
րի—12,1%, Ղարաքիլիսա—8,2%, Գորիս 6,3%, Դարալագյ
—5,2%, Դիլիջան—6,8%, Լոռի—7,9%, և Ալեքպոլ—8,8%:

Նույն ժամանակամիջոցում միակոոպի շրջանառությու
բարձրացել է՝ Մեղրի—25 անգամ, Յերևան 20 անգամ, Դար
լագյազ 14 անգամ, Ալեքպոլ 7 անգամ Էջմիածին 11 անգ
Դիլիջան 5 անգամ, Ղարաքիլիսա 3 անգամ, Ն.-Բայազետ 4 ա
գամ:

Հայաստանում միակոոպները դեռևս թույլ լինելով՝ չեն ը
գրկում գյուղական վողջ տնտեսությունը: Բայց նրանց գոր
նեության ուղին տանում է դեպի խոշորացման. կազմակեր
վարձակետեր, արտելներ, գյուղատնտեսական գործիքներ նո

ող արհեստանոցներ, տեղական՝ հում նյութերի մշակող ամեն
եսակի ձեռնարկներ—կոոպերացիայի որվա հրամայական պա-
անջներն են:

Հացահատիկների ու վալյուտային արժեքների գնման գործը
նկել է գլխավորապես միակոոպների վրա:

Այս բոլոր յերևույթները պարզ ու վորոշ ցույց են տալիս,
որ միակոոպը գյուղում հանդիսանում է ամենակենսունակ և
մենաակտիվ կազմակերպություն, վոր տնտեսապես կարողա-
ում է կապել իր հետ գյուղական զանգվածը:

Միակոոպի գործնեյության մեջ կան դեռևս շատ թերու-
յուններ, նրա ապարատները դեռևս չեն կատարելագործվել,
րա տնտեսական հիմքերը չեն ամրացել, բայց մեր կոոպերա-
իայի մի քանի ամսվա գործունեյության փորձը ցույց է տա-
ս, վոր միակոոպ—կազմակերպությունն ամենահարազատ
մնարկն է արտադրող ու սպառող մասսաների համար, վոր
այաստանի կոոպարացիայի կենտրոն—Հայկոոպը—միացնելով
շուրջը Հայաստանի սպառողական, գյուղատնտեսական, ար-
ադրական և այլ տեսակի կոոպերատիվներ—իրականացնելու է
առաջ դրած մեծ խնդիրը—քաղաքի և գյուղի շաղկապումը:

Մեր, գերազանցորեն գյուղացիական յերկրում միակոոպ-
րն, իրենց բազմազան ֆունկցիաներով ծառայում են գլխավո-
պես դյուղական տնտեսության բարձրացման, զարգացման
նրա կուլտուրական հեղաշրջման գործին.

IX

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Այժմ ոչ ոք չի կասկածում այն բանում, որ կոոպեր- ցիան կատարելու է հսկայական դեր գյուղատնտեսության գ[յուղատնտեսության] գացման ու խորացման գործում։ Այս ուղղությամբ միայն Նախավոր է վերակազմել գյուղը և նրա զանգվածների տնտեսական ու հասարակական դաստիարակչությունը։ «ՆԷՊ»- առաջ, ռազմա-կոմմունիզմի տարիներին, գյուղի տնտեսությ- կազմակերպչական միակ սիստեմը հանդիսանում էր գյուղատ- տեսական կոմմունան։ Բայց կոմմունան, որպես տնտեսակ- մասսայական կազմակերպություն խորթ ու անսովոր լինելով գյուղական միջավայրին և հանդիպելով անհաջողությ- անհետևանք ու արագ կորավ։ Մինչդեռ գյուղացիության կոո- րացման ձևը ունենալով անցյալի հետ անքակտելի կապ- ժամանակակից գյուղում հիմնավորվելու հաստատ տվյալ- հանդիսանում է գյուղական տնտեսության հեղաշրջման, զ- դացման ու խորացման ամենաուժեղ փակտորը։

Կոոպերացման միջոցով գյուղացիությունը կվարժվի հա- քական աշխատանքին և կնթանա ստեղծագործական նոր ու- ներով։

Ահա թե ինչու մասսայական կոոպերացման գաղափ- արժեքն ու առավելությունը մի կողմը թողած՝ մեր հասարա- կան տնտեսական ապագա կյանքի նոր կառուցումների համար յաստանում առանձնապես զարկ պիտ տալ գյուղատնտեսակ- կոոպերացիային։

Այս խնդրի իրագործման տեսակետից ելնելով, պահանջվ- է, որ մեր պետական, տնտեսական ու կոոպերատիվ հիմնա-

ները տանեն միասնական աշխատանք, ունենան միանման գործելակերպ և ընթանան կազմա-շինարարական միացյալ ուղիներով։

Գյուղատնտեսական կոոպերացիայի կառուցման ամբողջ ծանրությունն ընկնում է Հայկոոպի, Հողժողկոմի և Գյուղատընտեսական բանկի (նախկին Գետբանկի) վրա. առաջինը որպես Հայաստանի կոոպերացիայի կազմակերպչական կենտրոն, վերջինը՝ որպես գյուղացիության վարկավորման գործը տանող ֆինանսական մարմին։

Գյուղական տնտեսության կազմակերպման և ինտենսիֆիկացիայի համար՝ ավելի քան անհրաժեշտ են գյուղացիության մասսայական կոոպերացումն և պետական լայն վարկավորումը։

Գյուղատնտեսական վարկի կիրառման միակ գործնական հուսալի կազմակերպությունը—կոոպերացիան է։ Գյուղկոոպերը այս կոնկրետ խնդրում անժխտելի ու աներկբայելի է։ Գյուղում գործող մյուս հիմնարկները վարկավորման գործին կարող են միայն զարկ տալ, ոժանդակել և առ առավել ակտիվ մասնակցել կազմակերպչական նախնական աշխատանքներին։

Այդ նպաստող հիմնարկներից են մեր հողբաժինները, վորոնք ամենաակտիվ մասնակցություն պետք է ցույց տան գյուղատնտեսական գործնեյությանը, պետք է համաձայնեցվի կոոպերացիայի նույնանման աշխատանքներին։ Ժամանակակից գյուղի տնտեսական դրությունը պահանջում է այս յերկու կազմակերպությունների միանման գործելակերպ, ույժերի ու միջոցների զգույշ ու խնայող սպառում և ընդգծված ու մշակված միասնական ծրագիր։

Ինչպես դրամական վարկը, այնպես էլ մեքենաներ, գործիքներ, սերմորանք և գյուղատնտեսական այլ և այլ անհրաժեշտ պիտույքներ պետք է տրվի միայն ու միայն կոոպերացիային և բանկի ու բաշխվի նրա ագարաների միջոցով։ Մեր գյուղատնտես, մասնագետ ուժերն ամենաակտիվ մասնակցությունը պիտի ցույց տան գյուղատնտեսության կոոպերացման գոր-

ծին։ Գյուղատնտեսական ամեն մի փորձ, ամեն մի կատար
գործ քայլ, տնտեսական ու շինարարական բնույթ կրող ա
մի նորույթ—պետք է կատարվի կոոպերացած մասսայի
մար՝ գյուղկոոպի միջոցով։

Միայն համաձայնեցրած ու միակերպ աշխատանքով հ
րավոր է հիմնավորել գյուղատնտեսական կոոպերացիան—հա
քելով նրա շուրջը մեր գյուղացիության միջակ ու աղք
խավերը։

Այս ուղղությամբ վորքան վոր Հողժողկոմատը համաձ
նեցրել է իր կոոպերատիվ քայլերը Հայաստանի կոոպերատ
ների միության—Հայկոոպի նույնանման գործունեության հ
հանձնելով իր կազմակերպած արտելների, կոմունաների, վ
ձակետերի և գյուղատնտեսական ընկերությունների կազմակե
չական ու գաղափարական ղեկը կոոպերացիային, նույնքան Գ
բանկը ստանձնելով վարկային կոոպերացիայի կազմա-վար
կան ղեկը՝ ստեղծել է մեր վերածնվող կոոպերացիայի շինա
րական գործում զիգզագային ուղիներ և զուտ ֆինանսա
կազմակերպության բոլորովին խորթ կոոպերատիվ քաղաքա
նություն։ Խոսքս Պետբանկի նախաձեռնած մի քանի վարկա
կոոպերատիվների մասին է, վորոնք զուրկ են կենսունակութ
նից և անկախ զարգանալու նպաստավոր պայմաններից։ Մ
դեռ փոխ-ոգկոմները անգամ միասնական կոոպերացիայի
քերն ամրացնելու համար տնտեսական ամենասերտ կապ
դրվել են մեր միասկոոպների հետ՝ տրամադրելով նրանց իր
տրամադրության տակ յեղած ֆոնդերի վորոշ մասը։ Հայաստա
նի տնտեսական կյանքի փոխ-հարաբերությունների լոգի
պահանջում է, վոր միայն միասնական ինտեգրալ կոոպեր
այով զարգացնենք ու խորացնենք կոլեկտիվ աշխատանքը։

Ժամանակն է ու հրամայական, վոր տրվի միասնական
ոպերացիային տնտեսական, ֆինանսական և վարկային գոր
ությունների լիակատար իրավունքներ ու արտոնություններ։ Միայն
դեպքում կոոպերացիան կբռնի իր ճիշտ ուղին, միայն

դեպքում կհարթվի դեպի կոմունիզմ տանող շավիղները։ Չմոռանանք վերհիշելու ընկ. Լենինի խոսքերը «Կոոպերացիայի լիակատար իրագործման դեպքում մենք կ՚կանգնենք սոցիալիստական հողի վրա»։

Ահա թե ինչու, միասնական ուղիներով պետք զարկ տալ գյուղատնտեսական կոոպերացիային։

X

ԱՐՏԵԼՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ԱՆԵԼԻՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ա

Հայաստանի տնտեսական ներկա պայմաններն ինկատի ունենալով պահանջվում է կազմակերպել **գյուղատնտեսության վորոշ ճյուղերի արտելներ**—կաթնատնտեսության, բամբակագործության, շերամապահության, ծխախոտագործության և տեխնիկա-կուլտուրային բույսերի մշակման, **ոստայնագործության**-ջուլհակության, գորգագործության, բրուտության, զամբյուղագործության և այլ արհեստների շուրջը։

Ժամանակակից գյուղի հիմքը կազմում է **բնական տնտեսությունը**։ Արհեստը, վորպես այդպիսին, որգանապես կապված է գյուղատնտեսության հետ՝ կազմելով նրա լրացուցիչ մասերը։ Գյուղացի—արհեստավորը զբաղվում է տնայնագործ արհեստով այնքան, վորքան այդ պահանջում է գյուղատնտեսությունը։ Իսկ այն գավառներում, վորտեղ սակավահողությունը կրում է խրոնիքական բնույթ, արհեստավորը կտրում է կապը յերկրագործությունից և անցնելով մի տեղից մյուս տեղը, ապրելու բացառապես իր արհեստով, այս դեպքում տնայնագործությունը տեխնիկապես զարգանալով՝ ստանում **անկախություն**։ Բայց և այնպես տնայնագործական արհեստները գլխավորապես կապված են գյուղատնտեսության հետ։ Տնայնագործությունն կարող է զարգանալ անկախ և ինքնուրույն, միայն այն դեպքում՝ յերբ տնայնագործը ձեռք է բերում հարկավոր հում նյութեր իր սեփական միջոցներով կամ կապիտալիստի աջակցությամբ։

Տնայնագործության ազատ ձևը զարգանում է միայն այն

դեպքում, երբ արտադրողը հեշտությամբ կարողանում է գտ
մշակվելիք նյութեր, օրինակ—կավ, փայտ, կաշի գազանի մ
թի և այլն։ Այդպիսով գյուղում զարգանում են-վարպետությ
փայտագործություն և ուրիշ արհեստներ։

Այն երկրներում, որտեղ զարգացած է արդյունաբեր
թյունը, եռում է գործարանային կյանք և տիրապետում
կապիտալը—այնտեղ տնայնագործությունը կախում ունի մ
նորդ առևտրականից, իսկ վերջինս՝ ֆաբրիկայից։ Մի դեպք
տնայնագործը պատրաստում է իր նյութերով, բայց միջնոր
պատվերի համաձայն և նրա հաշվին զանազան արտադրությ
գործարանին հանձնելու պայմանով։ Այս ձևով է զարգաց
Մոսկվայի նահանգում—գլխարկագործություն, խաղանակներ
խաղալիքներ պատրաստող արհեստներ։ Պետք է ասել և ա
որ տնայնագործական արտադրությունները կատարելագոր
վում են և շուկայում հեշտությամբ սպառվում, կապիտալի
հետ կապ ունենալու դեպքում։ Տնայնագործարտադրությու
սովորաբար որակի և քանակի կողմից, մրցել չի կար
գործարանային արտադրության հետ։

Մի ուրիշ դեպքում տնայնագործը գնելով հարկավոր նյ
թեղենը նույն միջնորդ առևտրականից՝ համարում է իրեն ա
կախ, բայց փաստորեն կախում ունի միջնորդից զանազա
նրան մշտական պաշտպան։ Այս անգամ տնայնագործը արտ
դրում է միջնորդի թելադրանքի ու պատվերի համաձայն։

Տնայնագործության կախման վերջին դեպքն այն է, ո
տնայնագործը վերցնելով կապիտալիստից հում նյութեր ու
առանձին պատվեր ստանում է իր աշխատանքի համար հատավա
(сдельная), այս դեպքում տնայնագործ-արհեստավորը դառնում
ըստ ամենայնի վարձու բանվոր՝ շահագործության հանելով ի
բանվորական ույժը։

Ցուրաքանչյուր միջնորդ ստանում է իր օգուտը ինքն
տնայնագործ-բանվորի օրավարձի հաշվից, որով ավելի ք
ծանրանում է վերջինիս տնտեսական դրությունը։

Տնայնագործության ասպարեզում կոոպերացիան կատարելու յե ճիշտ այն դերը, ինչվոր գյուղատնտեսության մեջ՝ ձգտելով բարելավելու տնայնագործ-անդամի կյանքը և թեթևացնելու նրա աշխատանքի պայմանները։

Ինչպես վերևում շեշտեցինք՝ մեր յերկրում տնայնագործությունը սերտորեն կապված է գյուղատնտեսության հետ։ Գյուղացին ձուլված լինելով իր հիմնական զբաղմունքի հետ՝ ազատ ժամանակը նվիրում է այս կամ այն տնայնագործ արհեստին։ Հայ գյուղացին տարվա ազատ ամիսներին, իր ընտանիքի անդամների հետ միասին զբաղվում է գորգագործությամբ, կավագործությամբ, ճոնի, հյուսնի, դարբնի և ուրիշ արհեստներով։

Տնայնագործական արտադրությունը նախ բավարարում են գյուղական տնտեսության կարիքները, իսկ մնացորդը փոխանակվում է հարևանների հետ կամ որպես ապրանք շուկա հանվում։ Տնայնագործ արհեստավորն յեթե չունի իր սեփական նյութը սովորաբար վերցնում է կողմնակի պատվերներ կամ փոխառնելով վաշխառուից որոշ գումար ձեռք է բերում արտադրության համար հարկավոր նյութեղենը։

Այս դեպքում տնայնագործ արհեստավորներին օգնության է հասնում տնտեսական կոոպերացիան, որը իր վրա յե վերցնում նրանց նյութերի մատակարարման և արտադրությունների վաճառման պարտականությունը։

Տնայնագործական արտադրողական կոոպերացիան լինում է յերկու տիպի և կատարում է յերկու ֆունկցիա։ 1) Տնայնագործները փոխադարձ համաձայնությամբ որոշում են միասին վաճառել իրենց ձեռագործները և միասին գնել բոլորի համար անհրաժեշտ նյութեղենը։ Արտադրող անդամները աշխատում են իրենց տներում զատ-զատ, շատ անգամ առանց ընդհանուր ժողովի որոշումների և հրահանգների։ Այդպիսի կոոպերատիվ ունենում է իր տնտեսական ձեռնարկը—Սպառողական խանութը։ Նման տնայնակոոպները զարգացել և հաջողություն ունեին միջին Ռուսաստանում և առանձնապես Մոսկվայի նահանգում։

2) Տնայնագործները համաձայնվում են միանալ և աշխատել առանձին արհեստանոցում կամ իրենց տներում ընդհանուր ժողովի վորոշումների և կանոնադրության համաձայն։ Այսպիսի կոոպերատիվ հիմնվում է սոլիդարությին կից, նաև արտադրությունների և նյութերի պահեստ։

Կոոպերացիան տնայնագործության մեջ տալիս է գործնական այսպիսի հետևանքներ. ա) Տնայնագործներն աշխատելով կոոպերատիվ արհեստանոցում վարժվում են համագործակցությանը, բարձրացնելով արտադրության քանակն ու վորակը. բ) Համագործ աշխատակցության շնորհիվ կրճատվում է արտադրության ծախսերը գործադրելով ավելի սակավ գործիքներ, կահ-կարասի և անհրաժեշտ իրեր. գ) Սովորում են աշխատանքի բաժանման մեթոդին, ուժեղացնում արտադրողականությունը և կատարելագործում են գործիքները՝ ձեռք բերելով այնպիսի արժեքավոր գործիքներ, վորոնք առաջ անծանոթ ու անմատչելի եյին տնայնագործներին. դ) Կոոպերացիան բարձրացնում է անդամ-հեռավորի աշխատավարձը՝ հեշտացնելով արտադրած իրերի մեծաքանակ վաճառքը և նյութեղենի միանվագ գնումը։ Վերջին դեպքում նվազում են ընդհանուր ծախքերը և արժան են նստում մշակվելիք նյութերը։ Նույնպիսի խնայողություն լինում է և այն դեպքում, յերբ տնայնակոոպը վաճառում է իր արտադրությունն վոչ թե միջնորդ-առևտրականին այլ անմիջապես սպառողին, այսինքն նրան, վոր կարիք է զգում տնայնագործի պատրաստած իրերին։ ե) Տնայնակոոպը կարող է կազմակերպել իր խնայողական դրամարկղը, տալով իր անդամներին ու ձեռնարկներին փոխառություններ։ Այս դեպքում դրամի կարիքը չի ազդի արտադրության ընթացքի և հետևանքի վրա։ զ) Տնայնակոոպը ազատում է միջնորդ-առևտրականի շահագործումից այն արհեստավորներին, վորոնք ինչ ինչ պատճառներով չեն միացել ընկերության՝ այս դեպքում կոոպերատիվը վերցնում է նրանց արտադրությունները վաճառելու կոմիսիոն պայմանով։ Այս գործունեության յեկամուտը կարող է ուժեղացնել կոոպի միջոցները։

Տնայնագործությունը առանձնապես զարգացած է Մոսկվայի նահանգում։ Համաձայն 1900 թ. վիճակագրության, ա-

նահանգում տնայնագործությամբ զբաղված եյին 175.613 մարդ, հայտնի զեմսկի գործիչ Օրլովի կարծիքով՝ նահանգի չափահաս բանվորների 50 տոկոսը զբաղված եր, հեղափոխությունից առաջ, տնայնագործական արհեստներով։ 1917 թ. Մոսկվայի նահանգում գործում եյին 38 տնայնագործ արտելներ, վորոնք միացրել եյին իրենց հետ 1600 բանվորներ։ Հոկտեմբերյան հեղափոխությունը ազատելով տնայնագործներին միջնորդ-սկուպչիկների շահատակումից, հնարավորություն տվեց տնայնագործ մասսայի համախմբվել արտադրական կոոպերատիվների շուրջը։ Համաձայն տնայնագործ արդյունաբերության գլխավոր վարչության տեղեկությունների առ 1-ն հունվարի 22 թիվ Մոսկվայի նահանգում գոյություն ունեյին արդեն 331 արտելներ, վորոնք ընդգրկում եյին 31,597 տնայնագործներ։

Տնայնագործական արտելները մասսայական կազմակերպություններ լինելով՝ կազմակերպել եյին տնայնագործական ամենալայն խավերը։ Ասածներիս իբրև ապացույց կարող է ծառայել սորև բերված աղյուսակը։

Մոսկվայի նահանգի արդյունաբերություններ	Արդյունաբերության մեջ զբաղվողների թիվը	Արտելներում մասնակցողների թիվը	
		Բացարձակ	Տոկոսներ
1. Մանկական խաղալիքներ	1038	700	68
2. (шорный)	230	170	73
3. Սանրագործություն	1525	1411	92
4. Կոճակագործություն	1841	1111	60
5. Ատաղձագործություն	2765	895	32
6. Սահնակներ շինող	64	63	99
7. Փայտագործություն	1852	1800	98
8. Կողովագործություն	2476	2145	87
9. Թիթեղագործություն	862	380	44
10. (сусальный)	555	350	64
11. Ապակագործություն	508	476	94
12. (стеклодувный)	1402	1300	93
13. Ջուլհակություն	4335	796	18
14. Կոշկակարություն	7691	4183	55

Մոսկվայի նահանգում կազմակերպված են տնայնագործ-
տելների յերեք միություններ. 1) Տնայնագործ արտելների Մոսկվայի միություն (артель-союз) 2) Արտելների բանկը (артель-банк) և 3) Մոսկվայի տնայնագործական միություն (могубкустпромсоюз)։ Առանձնապես հետաքրքիր է վերջինիս գործունեությունը առ 27 սեպտ. 1922 թ. անդամագրվել եյին 2 քաղաքային արտելներ 882 անդամներով և 60 գյուղարտելներ 31.. անդամներով։

Ատաղձագործա-կահկարասիքի, կաշվեգործ, կոշկակ... Ջուլհակային և ուրիշ արտելները կազմակերպվել են արտել-բանկի և արտել—սայուզի շուրջը։ Միությունները արտելնե... վաճառել եյին 27.189.977 ռ. ապրանքներ և զանազան գործ... ներ։

Նույն միությունների միջոցով վաճառված է Նիժեգորոդ... տոնավաճառում արտելներին 37.618.474 ռ.։

Могубкустпромсоюз-ի գործունեությունը տոնավաճառ... ցույց է տալիս հետևյալ աղյուսակը.

Արտադրական կոոպերացիայի Համառուսական Միություն	65	միլիոն	ռուբ...
Могубпромсоюз			
Արտել—բանկ	34,7	«	»
Արտել—միություն	10,4	«	»
Պերմի—նահանգի միությունը	5,3	«	»
Վլադիմիրսկու միությունը	3,9	«	»
Պենզինսկու «	6,9	«	»
Ուֆիմսկու « 9	2	«	»
Կիմրսկու «	5,6	«	»
	6,5	«	»

Могубкустпромсоюз-ի հաշվեկշռին առ 1-ն օգոստոսի 19.. թվին հավասար է $15^1/_2$ միլիոն ռուբլու, ամբողջը վորպես ...ջական միջոցներ, վորոնք ստեղծվել են նույն թվականի ...յիս-հուլիս յեռամսյակում ծածկելով $1^1/_2$ մլ. ռ. դեֆիցիտ։ *)

*) „Союв Потребителей“ № 15 ноябрь 1922 г. „Кустарн... промышленность Московской Губернии“-С. Караваев.

Վերոհիշյալ վիճակագրական տվյալները միանգամ ել ապացուցում են կոոպերացիայի հսկայական նշանակությունը ...ողովրդական արդյունաբերության, իսկ այս դեպքում տնայնագործության զարգացման և արդյունավետության գործում։

Մոսկվայի նահանգը բերեցի վորպես փառավոր ապացույց ...րդյունաբերական կոոպերացիայի աներկբայելի նվաճումների։

Բացի տնայնագործներից գյուղերում կան արհեստավորներ, ...որոնք վաղուց հետ ե կտրել են իրենց կապը հողի հետ, դուրս ...ն յեկել համայնքի սահմաններից, անցնում են մի տեղից ...յուս տեղ, ուր նրանց արհեստի պահանջը մեծ է և վարձատրությունը բավարար։ Նրանք սոսկ գործավորներ են անտուն, անտեղ, չունեն մշտական ապրուստ, սովոր են թափառական կյանքին և ճկուն են գոյության կռվում։ Այս արհեստավոր-բանվորները ձգտում են համագործակցության ուժն ու ապահովությունն ...ու հանգիստը։ Այսպիսի համագործ միությունը կոչվում է **աշխատավորական արտադրողական արտել**, վոր զբաղվում է ատաղձագործությամբ, ներկարարությամբ, պղնձագործությամբ, քարտաշությամբ և գյուղատնտեսական զանազան մասնագիտությամբ։ Արտելի աշխատանքները կապ ունենալով տարվա վորոշ յեղանակի հետ, կրում է սեզոնային և կարճատև բնույթ։ Արտելը մի վորևե գործ վերցնում է կապալով «гуртом» կամ «հատ ու չափով»։ Աշխատավորության արտելի գոյությունը կարճատև լինելով չունի մշտական կանոնադրություն և ղեկավարվում է գրավոր կամ բանավոր համաձայնությամբ։ Արտելի գոյությունը յերկարատև է լինում միայն այն դեպքում, յերբ բանվորները վճռում են միանալ միմյանց հետ և մնալ մինչև վերջը, հիմք ընդունելով հաստատած կանոնադրությունը կամ կնքած պայմանագիրը։ Այս դեպքում արտելը սեզոնային գործերն ավարտելուց հետո ցրվում է իր տեղերը՝ անմիջապես հավաքվելու և գործի անցնելու պայմանով։

Առհասարակ շատ գործեր, նամանավանդ շինարարական

բնույթ կրող, օրինակ—տների, ճանապարհների, ջրանցքների ու կամուրջների շինել կամ վերանորոգելը տրվում է տերերի անդամ կառավարության կողմից առանձին անհատներին կապալով. կապալառուներն իրենց հերթին գործն ամբողջովին կամ մաս-մաս հանձնում են բանվորին կամ նրանց արտելին ոգուտ... ստույծի բաժինը վերցնելու պայմանով։ Նման շահագործման դեմ պայքարել կարող է միայն **աշխատավորական արտելն** այն դեպքում յերբ նա ունենա իր հաստատած կանոնադրությունը միացած լինի կոոպերատիվ միության։ Արտելը կարող է իր... վական ճնշում գործելով անհատ կապալառուի վրա՝ բարձրացնել բանվորների աշխատավարձը կամ վերցնել նրանից ամբողջ գործը։ Մյուս կողմից աշխատավորական արտելն ավելի մեծ վստահություն ու վարկ կունենա հասարակական հիմնարկների աչքում քան շահագործող կապալառուները։ Ուրեմն տեսնում ենք, որ աշխատավորական արտելի գլխավոր նպատակն է կոոպերացիայի ոգնությամբ վաճառելու իր անդամ բանվորների աշխատանքն ավելի ձեռնտու պայմաններով ու անհիվանդագին...

Բ

Արտելում գործնականապես պիտի իրականացնել **«մեկը ամենքի-ամենքը մեկի համար»**-աշխատանքի լոզունգը։

Միևնույն շահերով և ձգտումներով տոգորված աշխատավորները միահամուռ ուժերով կզարգացնեն արտելը, դարձնելով նրան միության, կունենան կոոպերականացված կազմակերպություն։

Արտելը, վորպես տնտեսական հիմնարկ, պետք է ունենա իր **կանոնավոր ձեվ մտական եկամուտները**։ Արտելի գործառույթների համար հարկավոր են, ա) **հիմնական դրամագլուխ ձեվ** իր **շրջանառության Ֆոնդ**-առաջինն կազմում է անդամակցային վճարումներից, տարեկան ոգուտի 50%-ից և պատահական յեկամուտներից, իսկ յերկրորդը-վարկ-փոխառումներից, անդամների կանխավճարներից ավանդներից և այլ նպատակավոր գումարներից։

Արտելի գործնեության **հաջողությունը կախում ունի** ա) անդամների միատարրությունից, բ) վարիչների գիտակցության աստիճանից ու փորձից և գ) արտելի անդամի նյութական շահագրգռումից։ Վերջին սկզբունքը իրագործելու համար պետք է ճշտությամբ գործադրել այն պլանները ու միջոցները, որ տանում է դեպի սոցիալականացման։ Արտելն **ինքնուրույն ընկերություն** մարմին լինելով պետք է թողնել նրան ազատ, ինքնաբերականությունից հեռու՝ տալով նրա գործնեության կոոպերատիվ կազմակերպ բնույթ։ **Բարեգործական սկզբունքի կիրառումը** արտելում անթույլատրելի է։

Արտելը կազմակերպվում է կամավոր յեղանակով և կոոպերատիվ սկզբունքներով։ Հայաստանի օրենսդրության մեջ (1921 թ. հունիսի 3-ի դեկրետը) այդպիսի կազմակերպությունը կոչվում կամավոր կոոպերատիվ **խմբավորում** և ունի իրավական հիմնարկի բոլոր արտոնությունները։ Կամ կոոպխումբն (Доб) ունի իր նորմալ կանոնադրությունը, վոր հաստատված է համառուսաստանյան կոոպերատիվ կենտրոնի Ցենտրոսոյուզի 7-րդ նորաշրջանի և Հայաստանի կոոպերատիվների առաջին համագումարի կողմից։

Հայաստանի միասնական կոոպերացիայի մեջ արտելն, որպես իրավազոր միավոր կազմակերպչորեն **միանում է ավյալ շրջանի միասնական** համարագրելով և իր վրա վերցնելով կոոպերատիվ պարտավորումներ։

Միասկոոպների և արտելների միությունը, Հայաստանի միասնական կոոպերացիայի կենտրոնն է **Հայկոոպը**։

Հայկոոպն վորպես կոոպերատիվ խոշոր կազմակերպություն իր ճյուղերից բաժին է հանում արտելներին, ուսումնասիրում արտադրության պայմանները, շուկաների առաջարկը ու պահանջը, ապրանքների ու վաճառային գները։

Հայկոոպը հայթայթում է արտելներին մշակելու համար նյութեր ու առարկաներ։ Հայկոոպի միջոցով արտելը պատվերներ է հասցնում կամ շուկա է հանում իր արտադրությունները։

Արտելների պարզացման գործում շահագրգռված են հետ յալ կազմակերպությունները ա) Արհեստակցական կենտ. Մի թյունն—անգործությունը վերացնելու համար. բ) Հայաստա կին-Բաժինները—կազմակերպելու կանանց արտադրողական ձե նարկների շուրջը և գ) Հայկոոպը՝, որպես Հայաստանի կոոպ րացիայի միությունն, որ ձգտում է մեր յերկրի տնտեսությու կազմակերպելու կոոպերատիվ հիմունքներով։

Համահայաստանյան մասշտաբով արտելային ցանց ստե լու համար վերոհիշյալ հիմնարկների ներկայացուցիչներից կա մվում է արտելների կենտրոնական սեկցիա կամ բյուրո, վ գործում է Հայկոոպի կազմակերպչական բաժնին կից։

Ահա այն ընդհանուր ուղիները, վորով պիտի ընթան Հայաստանի տնայնագործական և աշխատակցական արտելներ

XI

ՀԱՍՈՒՆԱՑԱԾ ՀԱՐՑԵՐ

Հայաստանի կոոպերացիայի առօրյա ու բազմազան հարցե րի թվում կան հասունացած և այժմյական խնդիրներ, վորոն պահանջում են իրենց շուտափույթ ու անմիջական լուծումն։

Այդ խնդիրներից կարևորագույնը՝ մասնավոր առևտրակա կապիտալի դեմ մղվող սիստեմատիկ պայքարն է, մեր ներք շուկայի տնտեսական դիրքերի աստիճանական նվաճումն, վոր օրեցօր զարգանում, ծավալվում և ուժեղանում է՝ ծանր հարվ հասցնելով սպառող ու արտադրող մասսաներին։

Կոոպերացիայի առաջ ծառացել է և հրամայական պահա է դարձել մի հարց՝ ընդգրկել մանր առևտուրը, նվաճել մասն վոր կապիտալի դիրքերը՝ հարթելով իր համար նոր ուղիներ։

Մեր միակոոպներն յուրացնելով առևտրի սիստեմն ու բ լոր պրիոմները՝ ակտիվ կերպով մասնակցելու յեն տոնավաճառ

ազար»-ներին. հանդես են գալու ներքին շուկաներում և իրենց առևտրական ազդեցությունը տարածելու յեն փորձի առօրյա յանքի այն յերևույթների վրա, վորոնք առնչություն ունեն ասատների փոխանակման ու գնողական գործողությունների հետ։

Խոշոր առևտրի մենաշնորհը պատկանում է Պետտռեստին, րեստներին, սինդիկատներին և Հայկոոպին։ Նրա ուժեղացման ասին խոսք չի կարող լինել։ Ճիշտ է, մեծահամբավ «Նեպ»-ը նում է զանազան մասնավոր փայատիրական ընկերություններ, գացնում է օտար ու անհրաժեշտ տարրերի մասնակցությունը ոշոր առևտրի մեջ՝ նկատվելով նրանց ազդեցությունն ընդհա-ուր առևտրի ընթացքի վրա, բայց և այնպես, պետական առև-րի հիմքերը շատ ամուր և վարքագիծը շատ ուղիղ են։

Բոլորովին տարբեր պայմաններում է գտնվում մանր առև-տուրը. այստեղ կոոպերացիան ունենալով չեզակի դեր՝ դեռևս ի ամրացրել իր դիրքերը, չի հասել իր բացարձակ տիրապետ-յան։ Մասնավոր կապիտալը մասսայական շուկաներում կատա-րում է անարգել ու համարձակ իր գործը. մինչդեռ այնտեղ կո-պերացիան չունի վոչ մի մասնակցություն։

Հայաստանի շատ վայրերում կազմակերպվում են պարբե-րաբար տոնավաճառներ. կիրակնօրյա «բազարներ»—մշտական ուկաներ, «տորգեր»-աուկցիոններ, վորտեղ վաճառքի են հանվում, ոխանակվում արտադրողի համար ամենակարևոր ապրանքները իրեր և սպառողի համար ամենաանհրաժեշտ կենսամթերքները Փաբրիկատներ։ Այդ բազարներից թվենք մի քանիսը—Յե-ևանի, Ալեքպոլի, Ղազախի, Դիլիջանի, Ջալալ-Օղլու, Վորոնցով-այի և այլն։ Այս շուկաների օրական շրջանառությունը հաս-նում է մի քանի տասնյակ միլիարդների. այստեղ ամենաակ-տիվ մասնակցում են մեծ ու փոքր առևտրականներ, սպեկուլ-ատների ու չարչիների վոհմակներ, «պոդրյադչիներ ու չողար-ներ»։

Մինչև օրս մեր միակոոպները նշանակություն չեն տվել ամ արհամարհել են բազարները. չեն յերևացել այնտեղ և չեն

փորձել մրցման դուրս գալ առևտրա- մասնավոր կապիտալի

Այն ժամանակ, յերբ մեր միաբանները չեն կարողանում իրենց միջավայրում բրդի, բամբակի, կաշվի, մորթու և վայրի տային այլ ապրանքների գնումները կատարել գոնե նվազագույն չափով, հենց նույն բնագավառում, իրենցից մի քանի քայլ հեռու, Ղազախի, Գյումրու, Վարանցովկայի քաղաքներում որոշ հարյուրավոր փթերով վալյուտա յեն ձեռքից ձեռք անցնում, և սպեկուլիացիայի օբյեկտ դառնում:

Բայց ինչքան կոոպերացիան չմասնակցի «բազարներում» շուկաներում և առևտրական հրապարակներում՝ ակտիվ դեր կատարելով սպառողի ու արտադրողի փոխանակման գործում և տարածելով իր անմիջական ազդեցությունը կոոպերատիվորեն անկազմակերպ ու իներտ մասսաների վրա:

Ռուսաստանում նույնանման փորձերը մեծ հաջողություն ունեն, Ռոստովի միաբանն արդեն առևտուր է անում քաղաքի արվարձանների բոլոր բազարներում. Сельско-союз-ն անցյալ տարի կազմակերպել էր Մոսկվայում բանջարեղենների պահեստներ և այլն:

Հարկավոր է օգտագործել նույն փորձը Հայաստանում:

Յերևանի ու Ալեքպոլի միաբանները վոչինչ չեն կորցնի, ընդհակառակն՝ կշահվեն, յերբ կազմակերպեն «Ղանթարի և Դեզերտիր» կոչվող շուկաներում կրպակներ, բուտկաներ, քյոսքեր՝ վաճառքի հանելով մեր արտադրությունը և գնելով վալյուտա ու կենսամթերք: Մեր կոոպերացիայի ասպարեզում այս նորույթը կատարյալ հաջողություն կունենա միայն այն դեպքում, յերբ միաբանքի ապարատը լինի ճկուն, աժուր և ժան:

Միաբանը քայլ առ քայլ պետք է տիրի նույն վողոցի, կազմակերպելով այսպես կոչվող «ձեռքի-վոտքի» առևտուր, վորական չարչիյություն, բայց կուլտուրական սիստեմով, տրիամներով: Փողոցի առևտրով կոոպերացիան կկապվի բանվոր-գյուղացիական զանգվածի այն խավերի հետ, վորոնք

գիտակ ու անկազմակերպ լինելով՝ իրենց խորթ ու օտար են զգում կոոպերատիվ շարժման մեջ:

Իսկ վորքան մեծ ասպարեզ կա գյուղում, նամանավանդ, ռացված ու խուլ անկյուններում, վորտեղ գոյություն չունեն կոոպերատիվ բջիջներ, վորի բնակչությունը տնքում է սպեկուլիացիայի ճանկերում:

Ահա այնտեղ պետք է գնա կոոպերատոր-«չարչին» իր «բոխչա ու խուրջինով», վոր կտանի աղքատ գյուղացու համար ճարժան ու լավ ապրանքներ և կբերի գյուղից մթերքներ իրենց իսկական գներով:

Շոշափածս հարցերն անշուշտ նորություն են մեր կոոպերացիայի պրակտիկայի, բայց չափազանց աժմեական ու հասունացած են մեր իրականության համար:

XII

ԿԻՆԸ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

Բուրժուա-կոոպերատորները կնոջ ակտիվ մասնակցությունը կոոպերացիայում չեյին համարում վորպես մի մասնիկ այն հեղափոխական պայքարի, վոր մղում է պրոլետարիատն իր ազատագրման համար: Կոոպերատոր—իդեոլոգների կարծիքով կոոպերացիան հեռու պետք է լինի այդ պայքարից ընդհանրապես և կ ի ն-բանվորուհին մասնավորապես: Կոոպերատիվ շարժումը համարվում էր վորպես բանվոր դասակարգի համակերպումը բուրժուական խավերի հետ, իսկ կին-բանվորուհու մասնակցությանը կոոպերացիայում՝ առանձին արժեք չէր տրվում:

Կոմունիստ կոոպերատորները Յեվրոպայում առաջ բերին բուրժուական կոոպերացիայում մեծ բեկում: Անմիջականորեն կապ ունենալով բանվորական մասսաների հետ՝ նրանք գործնականապես ապացուցում են բանվորուհու կզգիացած թյունը կոոպերատիվ շարժման մեջ: Կոմունիստները պարզում

նե և այն կարևոր հանգամանքը, որ խորհրդային իշխանությունը ստեղծել է **կոոպերացիայի յեվ կնոջ համար ազատագրման ուղիներ:**

Կանանց շարժման բուրժուական ղեկավարները զգալով հեղափոխական վտանգը, փորձում են համակերպել իրենց գործունեությունը կոմունիստական շարժման հետ: Բայց հեղափոխականորեն տրամադրված բանվորուհին մի վարկյան անգամ չի հավատում նման խաղերին: Նա տանում է իր գործը դեպի քաղաքական ու դասակարգային պայքարը՝ համախմբվելով ու կազմակերպվելով արհմիության և կոոպերացիայի շուրջը:

Անգլիական **կանանց կոոպերատիվ գիլդիներն** նման կին կազմակերպությունները Գերմանիայում, Շվեյցարիայում և ուրիշ յերկրներում յերևան են հանել ուժեղ գործունեություն: Կանանց լայն խավերն ամենաակտիվ մասնակցություն են ցույց տվել կոոպերատիվ շարժման մեջ: Բազմաթիվ կին-գործիչներ ունին կոոպերացիայում ամենապատասխանատու պաշտոններ: Կանայք ավելի քան գիտակցում են կոոպերացիայի դերը՝ իրենց հասարակական ու ընտանեկան կյանքում:

Խորհրդային կոոպերացիայի կարևոր դերը կայանում է նրանում, որ նրա միջոցով կարելի յե արմատապես փոխել բանվորի ընտանեկան հին կյանքը, կիրառելով հասարակական սկզբունքները: Միայն ընտանեկան կյանքը հասարակայնացնելով, տնային խոհանոցը փոխարինելով հանրաճաշարանի, տնային լվացքը՝ հասարակական լվացարանի, մանկանց ընտանեկան կրթությունը հասարակական կրթության, կարելի յե հասնել կնոջ լիակատար ազատագրմանը և նրա կուլտուրական աստիճանի բարձրացմանը:

Այստեղ, կոոպերացիան, պետական և արհեստակցական հիմնարկների օգնությամբ, կազմակերպելով հանրային ճաշարաններ, լվացարաններ, կարի և կարկատանի արհեստանոցներ և ազատելով կնոջ ընտանեկան այլ և այլ հոգսերից՝ **կբարձրացնի նրան քաղաքականապես ու կուլտուրականապես:**

Այս ուղղությամբ մեծ աշխատանք է կատարում **«Նարպիտ»** փայատիրական ընկերությունը: Բայց աշխատանքը զարգանում և աճում է բանվորական խիտ մասսաներում, սակայն գործի նորությունը, միջոցների սղությունը և աշխատավորների սահմանափակ թիվը հարկադրում է «Նարպիտ»-ի ղեկավարներին աշխատանքները տանել դանդաղությամբ: Ինարկե, «Նարպիտ»-ի ջանքերն ազատագրել կնոջը խոհանոցից ունի հասարակական ու քաղաքական խոշոր նշանակություն. ուստի կուսակցական, պրոֆեսիոնալ, կոոպերատիվ կազմակերպություններից ու աշխատավորական լայն մասսաներից պահանջվում է լուրջ ուշադրություն շոշափած հարցի նկատմամբ:

Բայց «Նարպիտ»-ի ընդհանրական ճաշարաններին զուգընթաց պետք է զարգանա և փայատիրական սկզբունքով կազմակերպված ճաշարանները այն վայրերում, ուր հնարավոր չի ընդհանրական ճաշարանների հիմնումը:

Ընդհանրական ճաշարան կազմակերպելիս նկատի յե առնվում ճաշողների վորոշ կոնտինգենտ, վորոնք խմբված են մի շրջանում և համաձայն են օգտվելու ճաշարանից. նույնպես և աչքի առաջ է առնվում ճաշարանի հարմար շենքը, կահավորությունը և ծառայողների շտատը:

Փայատիրական ճաշարաններ կարող են կազմակերպվել և հաջողությամբ գործել. յեթե 5—6 ընտանիքի կամ 15—20 անդամ համաձայնվում են անդամագրվելու: Այս դեպքում չի պահանջվում առանձին շենք կահավորություն և հաճախ էլ չի պահանջում հատուկ աշխատողներ:

Այսպիսի ճաշարանների էությունը հետևյալն է. մի խումբ անձինք կամենալով ազատվել զատ-զատ կերակուր յեփելուց. փոխադարձ համաձայնությամբ վորոշում են փայական սկզբունքով կազմակերպելու ճաշարան:

Այս նպատակով վորոշվում է վորոշ փայավճար դրամով կամ մասամբ կահավորությամբ, (խոհանոցի ամանեղեն և այլ պարագաներ) հրավիրվում է մի փորձված խոհարար տնտեսուհի

դրսից կամ անդամներից և սովորաբար այն խոհանոցում, պատրաստվում էր մի ընտանիքի համար ճաշ կամ ուր մի քանի տանտիկիններ միևնույն օջախի վրա տեղի նեղության պատճառով հաճախ իրարու հետ կռվում էյին։ Այժմ կարելի է միանգամից առանց աղմուկի մի քանի տասնյակ անձանց համար ճաշ յեփել։

Ճաշարանի ծախսերը բաշխվում են փայեր մուծող ճաշողների թվի համեմատ։ Անդամները ճաշում են իրենց տներում կամ ընդհանուր սեղանատան, յեթե այդպիսին կա։

Յեթե փայատիրական ճաշարանի կազմակերպման մասնակցում են համեմատաբար ավելի անդամներ, այն ժամանակ խոհանոցից ազատված տիկիններից ընտրվում են որպահներ, վորոնք հսկում են ճաշի մաքրության և վորակի վրա և միաժամանակ օգնում են խոհարար տնտեսուհուն։

Այսպիսի որպահությունները ամեն մի տիկնոջից մի ժամանակ կպահանջի, վորովհետև այս հերթապահությունը կատարեն անխտիր բոլորը, վորոնք առաջ ամեն օր խոհանոցում էյին լինում բացի այս՝ այն տղամարդիկ, վորոնք քիչ աշխատանքներ ունեն նույնպես կարող են որպահ լինել։

Տնական խոհանոցից անցնելով փայատիրական ճաշարաններին բավականաչափ խնայողություն կստացվի վառելիքից կենսամթերքներից նույնպես և կկրճատվեն այլ ծախսերը. Մեծ խնայողություն կլինի և ժամանակի, վորովհետև այս ձևով միևնույնթվով անձանց համար միևնույն ժամանակամիջոցում փոխանակ 5—6 անձի կաշխատեն 1—2 հոգի։

Այս պատճառով այնտեղ, ուր հասարակական ճաշարանների կազմակերպումն այս կամ այն պատճառով ներկայիս անհնար է. առանց սպասելու պետք է սեփհական ույժերով կազմակերպել փայատիրական ճաշարան, վորը կարող է հաջողվել ամեն վայրում, ուր ապրում են թվով 10—15 հոգի թե գյուղում թե քաղաքում։ Առաջին հերթին, իհարկե, այդպիսի ճաշարաններ պետք է կազմակերպվեն այն տներում, ուր մեծ տոկոսով կոմունիստներ և բանվորներ են ապրում։ Կոմունիստների տները, նըրանց ընդհանուր խոհանոցով մի գեղեցիկ օրինակ և նմուշ տեղակի ճաշարանների, մանավանդ վոր կազմակերպման համար բացի բարի ցանկությունից ուրիշ վոչինչ չի պահանջվում։

Նրանք, վորոնք ստամոքսի շահերը բարձր էր դասում քան կնոջ ազատությունը, թող գիտենան, վոր փայատիրական ճաշարանում նույնպես կարելի յե ստանալ անհատական ճաշակի համապատասխան կերակուր ի հաշիվ ճաշ պատվիրողի։

Փայական ճաշարանը նոր կենցաղի փոքր, գրեթե աննշան աստիճանն է. սակայն այս աստիճանը պետք է բարձրանալ, վորպեսզի ըստ հնարավորության հեշտությամբ ազատագրել կնոջը խոհանոցից։

Չնայած այս բանին, վոր մենք այժմ գտնվում ենք համաշխարհային խոշոր դեպքերի շեմքին, բայց և այնպես պետք է խոսել կենցաղի այս չնչին կողմի մասին, անհրաժեշտ է ագիտացիա մղել փայատիրական ճաշարանների կազմակերպման համար, վորովհետև խոհանոցը զրկում է կնոջը մասնակցելու պատմական այժմյան խոշոր անցքերին։

Կոոպերացիայի միջոցով հնարավոր է նաև բարձրացնել կընոջ մասնագիտական աստիճանը, կռվել անգրագիտության դեմ զարկ տալով կուրսերի ու առանձին պարապմունքների միջոցով կնոջ գրագիտական զարգացմանը, բանալով նրա առաջ կոոպերացիայի դռները բոլոր ասպարեզներում։

Խորհրդային Հայաստանի Կոմկուսի կինբաժինները վերջերս փորձում են համախմբել անգործ կանանց աշխատավորական ու արտադրողական արտելների շուրջը։ Հայաստանի կոոպերացիան մինչև 1922 թ. այդ ուղղությամբ վոչինչ չի արել։ Կենտրոն. կոմի հրահանգների համաձայն բանվորուհիների և գեղջկուհիների պատգամավորական ժողովում պիտի կազմակերպվի կոոպերատիվ յենթաբաժիններ-սեկցիաներ, վորոնց նպատակն է ծանոթացնելու կանանց լայն խավերին կոոպերացիայի հետ՝ համախմբելով նրանց կոոպերատիվների շուրջը։

Բ.

Հայաստանում գոյություն ունին տնտեսագործական ձևեր -ջուլհակություն, գորգագործություն, կավեգործություն, զամբյուղագործություն և այլ առհեստներ. տնայնագործութ... ժարյա ամբողջովին զբաղված են կանայք: Մեր յերկրում տնայնագործության յեկամուտը կազմում է գյուղացու բյուջեի բավականին աչքի ընկնող տոկոսը: Գյուղում տնայնագործակ(ան) արհեստը լրացնում է ընտանիքի կարիքները: Հիմք ընդունելով տնայնագործական փոքր արհեստը—կարելի յե նրա շուրջը կոոպերատիվ սկզբունքներով համախմբել գյուղական կանանց: Նույնը և քաղաքներում, վորտեղ կինը հանդես է գալիս վորպես բ... վոր՝ վաճառքի հանելով իր աշխատանքը: Տնայնագործական կոոպերացիան պետք է կազմակերպվի արտելային ձևով:

Արտելը կամավոր կերպով միացնում է բոլոր նրանց, վորոնք զբաղվում են միևնույն արհեստով, կազմակերպում է անդամների աշխատանքը, մատակարարում է նրանց զանազ(ան) նյութեր, ընդունում ու վաճառում է նրանց ձեռագործները ընդհանուր արհեստանոցում կազմակերպում է տնայնագործական փոքր արտադրություն:

Տնայնագործուհիները անձամբ, հավասար և կամավոր կերպով մասնակցում են արտելին՝ համարվելով իրենց գործի տերն ու տնօրենը: Արտելը ընդհանուր ուժերով հեշտացնում արտադրության տեխնիկան՝ գործադրելով մեքենաներ և հրավիրելով գործին հմուտ մասնագետներ:

Ինչ տիպի արտելներ պետք է կազմակերպել կանանց համար: Մեր յերկրում—կանանց խավերում ամենաընդունված արհեստը ջուլհակությունն է: Ջուլհակությունը հոգում է վոչ միայն աշխատողի անձնական կարիքները, այլ և նրա արտադրությ(ան) վորոշ մասը դուրս է հանվում շուկա: Պակաս զարգացած չե նաև գորգագործությունը—նամանավանդ Ղազախում, Լոռում, Զանգեզուրում, Շուշում և այլ գավառներում:

Գյուղատնտեսական ճյուղերից կանանց աշխատանքը կարևոր դեր է կատարում կաթնատնտեսության մեջ: Մեր յերկրի կաթնատնտեսության պրիմիտիվ ձևերի պահպանողը կուլտուրապես ու քաղաքականապես անպատրաստ գեղջկուհիներ են:

Ռացիոնալ կաթնատնտեսության պիոներները Հայաստանում կարող են դառնալ գեղջկուհիները, յեթե կազմակերպվեն կաթնատնտեսական արտելների շուրջը:

Կանանց աշխատավորական և արտադրողական արտելները համարվելով կոոպերատիվ կամավոր խմբավորումն պետք է կազմակերպվեն Հայաստանի միասնական կոոպերացիայի կենտրոնի—Հայկոոպի շուրջը:

Հայկոոպն ունի տնտեսական խոշոր կազմակերպության բոլոր առավելությունները: Նա գիտե շուկաների պայմանները պահանջն ու առաջարկը, գների յելևէջները, նա ավելի հեշտ կարող է ձեռք բերել վարկ, ապրանք, հարկավոր նյութեր և կատարելագործված գործիքներ ու մեքենաներ: Հայկոոպը կարող է կազմակերպել արտելների համար նյութական և տեխնիքական օգնություն, զարգացնել կանանց մեջ կուլտուրական աշխատանք տալով նրանց մասնագիտական, կրթություն իր կուրսերի թե հիմնարկների միջոցով:

Կանայք կազմակերպվելով արտելների շուրջն՝ ակտիվ մասնակցում են կոոպերացիայի միջոցով մեր յերկրի շինարարության: Բանվորուհին և գեղջկուհին արտելում հանդես են գալիս վորպես ղեկավար և աշխատակից, իսկ սպառկոոպերացիայում—վորպես վարչական անդամներ, գործավար, հաշվետար ուրիշ պաշտոններում:

Պետք է կիրառել Լենինի հետևյալ միտքը «Մեզ հարկավոր է, վոր բանվորուհին հավասարվի տղամարդու հետ, վոչ միայն օրենքով, այլ յեվ կյանքում: Դրա համար հարկավոր է, վոր բանվորուհին ավելի ու ավելի մասնակցի հասարակական ու պետական ձեռնարկությունների կառավարչական մարմիններում:

XIII

ՄԵՐ ԿԵՆՑԱՂԸ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

I

Վերջին ժամանակներս շատ է խոսվում մեր կյանքի կուլտուրական բարեկարգման, ընտանեկան կենցաղի արմատական հեղաշրջման և մասսաների հասարակական բնազդների աղնվացման և դաստիարակման մասին:

Մինչ դեռ կենցաղային բարեփոխման խնդրին սկսել մոտենալ գործնական տեսակետով, մեր առօրյա նիստ ու կացի հեղաշրջման համար պետք է սկսել ընտանեկան և հասարակական փոխհարաբերությունների ամենաաննշան ու աննկատ յերևույթներից. ուսումնասիրել կենցաղային անցուդարձը ամենայնի, վորոնել ու գտնել նրանց տնտեսական տարբերը, վերլուծել նրան մասնիկների և ապա մշակել նոր կուլտուրական միջոցներ **խորհրդային կենցաղ** ստեղծելու համար:

Ավելի պարզ ասած՝ կենցաղային խնդիրները ճիշտ լուծելու համար հարկավոր է թափանցող միտք, խորամիտ անալիզ, Մարքսիստական դիալեկտիկ մեթոդ: Միայն այս դեպքում կարելի յե հասկանալ և ըմբռնել մասսաների այսօրվա տրամադրումներն և վաղվա գեղապայծառ ձգտումները:

Վերցնենք մեր գյուղի հենց մոտիկ անցյալը: Ով է գյուղացուն պահում իր ամբողջական ազդեցության տակ—**յեկեղեցին յեվ կուլակ-զորբան**, առաջինը հոգեպես, իսկ յերկրորդը տնտեսապես: Գյուղի գոնե արտաքին տեսքին ծանոթ մարդը չի նկատել, վոր գյուղական գետնափոր նեղլիրթիկ, հողածա… մի խոսքով, քոխնոֆոնյան տանիքների կենտրոնում բարձրանում է որբաշեն հոյակապ յերկ-գմբեթ յեկեղեցին:

Այս դեպքում, միթե չի պարզվում մեզ համար գյուղացու հոգու և մտքի ապրումները ու մտապատկերները, այս պայմաններում ինչ կուլտուրական մտորումներ կարող է ունենալ մեր գյուղացին, ինչպես կարող է նա զարգացնել իր հասարակական և հեղափոխական բնազդը, յերբ նա գյուղ-կոլլեկտիվի մի մասնիկն լինելով՝ իր առօրյա կյանքում իր նմանների հետ մոտենում, շփվում է գյուղական ոդայում կամ կրպակում՝ «**Մկիտան Ձաքոս**»-ի մոտ կամ հոգեկան բավարարություն է զգում գյուղական «ժամում» տերտեր ու տիրացուի եկստազային զառույի ազդեցության տակ: Բնական է, վոր գյուղական ոդան կամ մկկիտանի խանութը թունավորում են նրան **ալկոհոլով**, իսկ յեկեղեցում **հոգևոր ոփիումով**: Հոգեպես և տնտեսապես ստրկացած գյուղը կորցրել է իր մեջ փրկության վորևե հույս, ընդվզումի և ըմբոստության վորևե նշմարելի կայծ: Խավարապատ գյուղում, սոցիալական խմբավորումների առօրյա շահերի բաղխումից, դասակարգային շերտավորման պրոցեսում պատվաստվեց հեղափոխական վոգին և խմորվեց ազատագրման գաղափարը: Գյուղի ազատատենչ տարրերը խարխափելով և բնազդորեն զգացին հեղափոխության ալիքների ծփումը և նոր—կյանքի ակնկալումը:

Հոկտեմբերը տակն ու վրա արեց գյուղի տնտեսական ու հասարակական փոխհարաբերությունը, հեղափոխական փոթորիկն քամուն տվեց հին ու թանձրացած փոշին. դասակարգային պայքարը ստեղծեց ժամանակակից գյուղում սոցիալական նոր ուժեր, առաջացրեց հասարակական նոր արժեքներ:

Խավարապատ գյուղում սկսվեց արևածագը, հեղափոխական միտքն անցավ ստեղծագործության: Հիմք դրվեց հավաքական աշխատանքին. բեղմնավորվեց կոմունիստական սաղմերը:

Իներտ ու կզզված գյուղացին ազդվեց հեղափոխական ըյալ կամքից—**կենսունակացավ, առողջացավ**: Գյուղացու տեսողությունը թափանցեց դեպի անծայր հեռուն, զանգակատնից դենը, դեպի ապագայի հեռանկարը:

Տակն ու վրա յեղավ գյուղական հին կենցաղը։ Անց[...] իր ամբողջ դիմակով ու մերկությամբ կանգնեց ներկայի ա[...] Կյանքը պահանջեց ստեղծել նոր արժեքներ, հին կուռքերի [...]տակների վրա բարձրացնել հեղափոխական կոթողներ։ Մարդ[...] միտքն իր վորոնումների մեջ ձգտեց դեպի ցանկալին ու կատ[...]յալը։ Մեր կենցաղում հասեց նոր ցոլքեր, հնչեց կուլտուրա[...] հնչյուն աններդաշնակ լարեր։ Հասարակական կենցաղի հ[...]շրջման գործում ակտիվ դեր ստանձնեց **համագործակցությ[ու]նը—կոոպերացիան։**

II

Կոոպերացիան իր ուժերով պետք է ձեռնարկի մեր հա[...]րակարգի տնտեսական ու մտավոր վերնաշենքի հոյակապ [կա]ռուցվածքը։ Բայց ինչպես սկսել, ինչպես իրականացնել [կեն]ցաղային վերածնունդը՝ կոոպերացիայի տարրյա ու սոսկ [...]նարկների միջոցով.—հարց կտան մեզ կոոպերատորները։ [...] դեռ կյանքը այդ հարցերը արդեն սկսել է լուծել։ Որից[...] աննկատ ու անաղմուկ, հինի, կործանվածի փլատակների [...] բարձրացնում և կանգնեցնում ենք կյանքի ամուր հիմք[...] խրոխտ և կանգուն սյուները։

Հին կենցաղը կորցրել է իր վոտի հողը, յերկրյալ ու [...]տանյալ վիճակում է, մեր աշխատանքները տանվում են այ[...]սի ուղիներով, վոր քայլ առ քայլ տիրում ենք հին կյանքի[...], խլում ենք նրա կենցաղային դիրքերը։

Հարակավոր է այդ աշխատանքը խորացնել ու ծավալ[...]

Հարկավոր է կոոպերացիան կազմակերպել այնպես, վոր ընդգրկի գյուղացու ու բանվորի ընտանեկան վողջ կյա[...] վոր ամեն տեղ ու ամենուրեք զգացվի նրա ազդեցությու[ն]ը, շոշափվի նրա նվաճումները։

Հարկավոր է գյուղում «ոդայի, մկիտանի և ժամի» ընդ[ար]ձակ և հոյակապ շենքերի փոխարեն կազմակերպել կոոպե[րա]ցիան իր բազմազան ձեռնարկներով ու հիմնարկներով, վոր[...]

[...]ոման աշխատավորության համար հանգստի, հոգևոր ապ[...]ումի և մտավոր սնունդի օջախ։

Կոոպերացիան հեղաշրջելու է գյուղի կենցաղը, մտցնելու կուլտուրական թարմ-կենսաբեր հոսանք գյուղացու ընտանե[կա]ն կյանքում, մարմնացնում է հավաքական աշխատանքը և ա[...]յդ ու լավատես է դարձնում մարդուն։ «Կոոպերացիան կա[...]ի զավակ ես-ասում ենք մենք։ Փարատենք բանվոր-գյուղա[...]կան հոգսեր—ահա եական ու արժեքավոր խնդիր—մեզ հա[...]որ։ Կոոպերացիայի միջոցով շատ բան կարող ենք անել։

Վերցնենք մեր գեղջկուհուն և բանվորուհուն, նրանք իրենց [տղ]ամարդու, հոր և յեղբոր հավասար աշխատում, տնքում են [...]աշում արհեստանոցում և գործարանում։ Բայց վորքան [...]ղիվ նրանց տեսնում ենք, մեզ հետ միասին, ժողովներում, [...]արկություններում և իրավունքի ատյաններում։ Այս յերե[...]ույթի բացատրությունը պետք է վորոնել վոչ թե նրանց հե[...]աճեցության, այլ մի ուրիշ ծանր հանգամանքի—ընտանեկան [...]ղերի, ամուսնական ու ծնողական անձուկ պարտականու[թ]յունների կատարման մեջ։

Բավական է կազմակերպենք կոոպերատիվ **ճաշարաններ, մանկապարտեզներ, արհեստանոցներ, մանկասեներ, մանկա[...]րեզներ խոս ցանց, վարժեզք հին կենցաղը հալվի նա[...]նա** և անհետանա։ Միայն այն դեպքում մեր կյանքը կբարելավ[...], պայծառ ու գրավիչ կդառնա. մարդս անհատորեն կվե[...]ածնվի, նրա հասարակական բնազդը կզարգանա և կբեղմնավոր[...] կոմունիստական սաղմերով։

Միայն այս դեպքում կինն ակտիվ մասնակցելով հասարա[...]կան կյանքին՝ հետ չի մնա տղամարդուց։

Կոոպերացիան և նրա ղեկավարները պետք է փնտրեն նոր [...]ղիներ, պետք է մշակեն նոր մեթոդներ, այնպես վոր նրանք [կո]ոպերացիայի մեջ կգտնեն իրենց տնտեսական ու մտավոր կյան[ք]ի ազատագրումը։

Բավական չէ գնել, ընտրել և գյուղացուն ու բանվորին

առաջարկել լավ տեսակի ապրանքներ, հարկավոր է ժառա… ճանաչել նրա ընտանիքին, ուսումնասիրել նրա կարիքները, բասուցվել նրա հոգեկան ապրումների մեջ, բաժանել նրա վիշտ ու թախիծ, ուրախություն և սեր: Միայն այս դեպք… կոոպերացիան կդառնա գյուղացու կամ բանվորի հարազ… կազմակերպությունը, միայն այս դեպքում նա օրգանապես կկ… վի գյուղացու տնտեսության, գյուղացու ընտանիքի հետ:

Նոր կոոպերացիան դառնալու է Խորհրդային կենցաղի հ… նադիրը, մեր հասարակարգի հոյակապ շենքի կառուցողը:

XIV

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

Ա.

Յերևանում, Ալեքպոլում և գավառական այլ քաղ… ներում, վորոնք համարվում են վարչական ու տնտեսական կ… րոններ բնակարանային տագնապն օրից-օր ստանում է … և յերկարատև բնույթ:

Ազգաբնակչության տնտեսապես անապահով մասը տեղ… վորված է մութ, խոնավ ու նեղ բնակարաններում կամ զուրկ… մշտական օթևաններից: Մեր քաղաքի բանվորի, ծառայողի աղքատ արհեստավորի համար բնակարանային խնդիրը դարձ… դամոկլյան սուր, վոր մշտական հոգս ու ցավ է պատճառ… նրան:

Քաղաքի ազգաբնակչությունը վերջին յերկու տարվա ը… թացքում, ըստ վիճակագրական տվյալների, խոշոր ավելաց… ճել է: Այս հանգամանքն ի նկատի առնելով հարկավոր է ձե… նարկել ավեր ու խարխուլ շենքերի վերանորոգմանը:

Շինությունների կառուցման գործով շահագրգռված չեն մ… մանր ու խոշոր առևտրականները, վորոնք լավ գիտեն, վոր… և ինչպես պետք է շահագործեն իրենց դրամագլուխը: Իսկ ի…

…երաբերում է Գավխորհուրդներին ու կոմունխոզներին՝ նրանք …երկայումս զուրկ են տրամադրվելիք խոշոր ռեսուրսներից, վո…րոնք հարկավոր են վերանորոգման գործին:

Բայց և այնպես բնակարանային հարցը-վորպես սոցիալա…ան յերևույթ անփարատելի չէ խորհրդային իշխանության հա…մար: Բնակարանային տագնապը վերականգնելու համար կան մի …արք արմատական միջոցներ. վորոնցից ամենագործնականն ու …ինկերոր-համագործակցությունն է - **բնակարանային կոոպե…ացիան**:

Արտասահմանում բնակարանային կոոպերացիան ունի մեծ …որձ և հասել է խոշոր հետևանքների:

Բելգիայում 1889-1911 թ. ընթացքում կոոպերացիան կա…ուցել է 52,530 բնակարան: Անգլիայում 344 սպառկոոպներ— …7,267 բնակարան: Կան այնպիսի կոոպերատիվներ, վորոնք …տեղծել են հիասքանչ «քաղաք-այգեստաններ»: Գերմանիայում 1913 թ. գործում եյին 1,346 բնակարանային կոոպեր. և այլն:

Բնակարանային կոոպերացիան ավելի զարգացավ և ծավալ…եց պատերազմից հետո, օրինակ Գերմանիայում 1913—1920 թ.թ. …րջանում բնակարանների թիվը 1,346-ից հասավ 2,642-ի:

Հասկանալի է, վոր կապիտալիստական հասարակարգում բնա…արանային կոոպերացիան չի կարող հասնել իր զարգացման …ագաթնակետին: Մինչդեռ խորհրդային իրավակարգում բնակա…անային կոոպերացիան ունի զարգացման ոբեկտիվ նպաստա…որ պայմաններ:

Ահա ինչու բնակարանային կոոպերացիայի կազմակերպու…ը Հայաստանում մենք համարում ենք **խիստ այժմեական ու …արվածային խնդիր**:

Անդրկովկասում, այս ուղղությամբ վորոշ քայլեր արվել են …այն Թիֆլիսում՝ շնորհիվ մի խումբ կոոպերատորների համառ …ոռկուն աշխատանքներին: Բայց այդ մի կաթիլ է—կարիքի …ովում:

Հարկավոր է ավելի ակտիվ կերպով հանդես գալ և ավելի

գործնական միջոցների դիմել բնակարանային կոոպերացի[ա] կազմակերպելու ու խորացնելու համար։

Անհրաժեշտ է քաղաքի ազգաբնակչության ամենալայ[ն] խավերին հասկացնել ամեն օր ու ամեն ժամ, որ բնակարան[ա]յին տագնապը փարատելու միակ միջոցը կոոպերացիան է։ Հա[ր]կավոր է մեր ընկեր բանվորներին ու խորհրդային ծառայող[ներին] ամեն րոպե հիշեցնել, որ իր բնակարանային հարցը լուծել[ու] միակ ճանապարհը կոոպերացիան է։

Կենսական անհրաժեշտություն է մեզ համար, որ ա[մենա]միջապես ու առաջին հերթին կազմակերպվի Յերևանում—բն[ա]կարանային կոոպերատիվ։

Բ.

Այժմ անհրաժեշտ եմ համարում ծանոթացնել ը[նկ]թերցողներին բնակարանային կոոպերացիայի հերթական գործնական խնդիրների և նրանց կազմակերպչական ձևերի հե[տ]։

Կոոպերացիայի անմիջական նպատակն է տրամադրել ա[ն]դամներին հարմար ու ձեռնտու պայմաններով բնակարան[ներ]։ Բայց այս նպատակին հասնելու համար կարելի յե ընդգծել [մի] քանի ուղիներ— տրամադրել անդամին բնակարան ընդմիշ[տ] ի սեփականություն, դյուրություն տալ անդամներին ոգտվել[ու] ընդարձակ ու լուսավոր բնակարաններից և վերջապես բնակ[ա]րանային կոոպերացիան կարող է կառուցել իր անդամների հա[մ]մար գաղութներ «Այգի-քաղաքներ», որ կոոպերացիայի հեռ[ա]վոր, բայց վերջնական նպատակներիցն է։

Մեզանում կոոպերացիան իր գործունեության առաջ[ին] քայլերից ձգտելու է թեթևացնել գոյություն ունեցող բնակ[ա]րանային սուր տագնապը, ստեղծելով բանվորության համ[ար] նպաստավոր պայմաններ, ունենալու ըստ ամենայնի հարմար արժեքավոր մատչելի բնակարաններ։

Հայաստանում բնակարանային կոոպերացիայի գործել[ու] շրջանը Յերևան և Ալեքպոլն են. որտեղ բնակարանային տագ[նապն] հազպն առաջացել է հետևյալ պատճառներից. ա) համաշխարհայ[ին]

պատերազմի հարվածներից. բ) ազգաբնակչության տնտեսական կյանքի փլուզումից. գ) խարխուլ և փլած շենքերի լքումից, դ) մասնավոր կապիտալի շինարարարխույս ձգտումներից և նման հանգամանքներից։

Հայաստանի այս յերկու քաղաքների բնակարանային տագնապը փարատելու համար կոոպերացիան ձեռնարկելու յե ոչ թե նոր հոյակապ տների վերանորոգումներ, այլ կիսաքանդ ու լքված տների վերանորոգումներ, որ պահանջում է ավելի պակաս ռեսուրսներ յեվ յերանցի նվազագույն սպառումն. Նամանավանդ պետք է ի նկատի ունենալ և մի նպաստավոր նախապայման, որ լքված ու կիսաշեն բնակարանների խոշոր տոկոսը գտնվում է կոմունխոզների տրամադրության տակ։

Այսպիսով, պարզ է, որ կոոպերացիան իր գործունեության համար ունի ամենանպաստավոր պայման— կիսաշեն բնակարանների ու կառուցվող նյութերի խոշոր քանակություն։ Այս դեպքում կոոպերատիվի շինարարական աշխատանքի կեսից ավելին կատարված է։

Մյուս կողմից հաստատ կարելի յե հուսալ, որ մեր կոմմունխոզները կոոպերացիային կը տրամադրեն ամենաձեռնտու պայմաններով կիսաշեն ու խարխուլ շենքերը։ Մեր բնակարանային կոոպերացիան առաջին հերթին ձեռնարկելու յե շենքերի վերանորոգումն։

Այժմ տեսնենք բնակարանային կոոպերացիան Յերևանի ու Ալեքպոլի բնակչության վո՞ր սոցիալական խավերին պետք է կազմակերպի ու ընդգրկի։

Բնակարանային տագնապը, վորպես սոցիալական չարիք «Նեպ»-ի շրջանում՝ ամենից շատ ու ամենից ծանր ընկել է խորհրդային բանվորի ու ծառայողի ուսին։ Հակառողջ ու խարխուլ բնակարաններում տեղավորված է բանվորությունը, որ տարել է հեղափոխությունը, ստեղծել է մեր յերկրում բանվոր-գյուղացիական իշխանություն, մինչդեռ հանուն հեղափո-

խության խորացման չէք մեր հալածված չերկրի տնտեսակ[ան] վերածննման՝ առանձնապես բնակարանային խնդրում՝ չարա[չար] տուժում է: Այս դեպքում, խորհրդային բանվոր ու ծ[առ]այողի վերաբերմամբ կարելի չի ասել— «շատ աշխատողին՝ լե շապիկ» ժողովրդական առածը: Պարզ է, վոր կոոպերացի[ան] առաջին հերթին պետք է ծառայի գլխավորապես բանվոր[ու]թյան կարիքներին:

Բացի դրանից, Հայաստանի ազգաբնակչության 15-20 [...]-ից ավելին կազմում են մանր-արհեստավորներ տնայնագ[ործ]ներ, վորոնց մասին Կ. Կաուտսկին ասել է.— «Նրանց առ[...]ցույց է տալիս վոչ թե մանր արդյունաբերության կենսու[նա]կությունը, այլ ավելի շուտ նրա քայքայումը: Այս դեպ[քում] մանր-ձեռնարկությունները կրում են պրոլետարական բնույ[թ]»:

Ահա այս սոցիալական միջանկյալ խավն էլ բնակարա[նա]յին տագնապից տառապում ու տանջվում է:

Երևանի ու Ալեքպոլի արհեստավորներն ու տնա[յն]ագործներն ավելի չեն շահագրգռված բնակարանային կոոպե[րա]ցիայի հաջողությամբ:

Նշանակում է բնակարանային կոոպերացիան հանդ[իսա]նում է բանվորների, ծառայողների ու մանր արհեստավոր[ների] տնտեսական կազմակերպություն, վոր կազմակերպչորեն մ[...]նալու չի Հայաստանի կոոպերացիայի կենտրոնի միութ[յան] Հայկոոպի հետ ընդհանուր հիմունքներով:

Այժմ մի քանի խոսք էլ բնակարան.-կոոպերացիայի ձևերի մասին: Նոր կոոպերացիայի ֆինանսները կազմվելու [են] այն սիստեմով և օգտվելու չեն այն աղբյուրներից, վոր ա[...]նում է մեր բանվոր-գյուղացիական կոոպերացիան, այն է՝ [...] հիմնական (անձեռնմխելի), բ) շրջանառության, և գ) հատ[ուկ] դրամագլուխներ: Հիմնական դրամագլուխը կազմվում է, ա) [ա]նձեռնմխելի դրամագլուխներից, վոր ընկերության պատկան[...] այս կանոնադրության հաստատման որը, բ) ընկերության [...]րեկան զուտ օգուտի 50 տոկոսի հատկացումից:

Հիմնական դրամագլուխը—գլխավորապես գործադրվում է շենքեր ձեռք բերելու, նաև ծածկելու ընկերության այն վնասները, [վ]որ կարող են առաջանալ ընկերության գործողություններից, [...]այց և կարող է ընկերության շրջանառության մեջ լինել:

Շրջանառության դրամագլուխը կազմվում է անդամավճարներից, փոխառություններից, ավանդներից և ուրիշ ձևի վարկերից ու գործադրվում է ընկերության առևտրական ընթացիկ գործառումների համար:

Ահա բնակարանային կոոպերացիայի կազմակերպչական կառուցվածքի ուրվագիծը:

Սկզբունքային փոքրիկ հետախուզումներից հետո՝ հարկավոր է անցնել կյանքի փորձին—բնակարանային կոոպերացիայի կազմակերպմանը:

Գ.

Նախորդ գլխում մենք տվինք տեղեկություններ կոոպերացիայի այն տեսակի մասին, վոր հայթհայթում է բնակարան՝ վորպես սեփականություն. այս անգամ տալիս յենք տեղեկություններ նրա նորագույն ձևի մասին*):

Բնակարանային նորագույն ձևն այն է, վոր իր անդամներին հայթհայթում է բնակարան՝ միմիայն օգտվելու համար: Սրա [...]կությունը նրանումն է, վոր մասնավոր սեփականություն հակադրում է հավաքական սեփականությանը և իր անդամներին մղում է դեպի համագործակցություն:

Նպատակ դնելով անդամներին հայթհայթել բնակարան՝ միմիայն օգտվելու համար և վորքան կարելի յե մատչելի վարձով, ընկերությունները կառուցում են բազմահարկանի շենքեր, վորոնցում զետեղված են լինում բազմաթիվ 2—3 սենյակից բաղկացած բնակարաններ և վորոնք անհամեմատ աժան արժեն քան առանձին փոքրիկ տները: Բազմահարկ տների կառուցումն անհրաժեշտ է դառնում մանավանդ այն մեծ քաղաքներում, ուր հողը շատ բարձր արժեք ունի:

(* Այս գլուխը վերցված է «Закавказская Кооперация № 9—10 1923 թ. ամսագրից ընկ. Հ. Տ. Մ-ի թարգմանությամբ:

Ոգտվելու պայմանով բնակարան հայթհայթելն ունի և այն առավելությունը, վոր կեցողի ձեռքերը կապված չեն և նա հարկ յեղած դեպքում կարող է թողնել բնակարանը և ձեռք բերել մի այլ տեղ, յեթե նա հարկադրված է պաշտոնով տեղափոխվել այլ վայր։

Թերևս կարծվի, վոր այս դեպքում, այսինքն միմիայն ոգտվելու դեպքում, կեցողները կարող են վռնդվել բնակարաններից, սակայն այդպես կարծելը հիմք չունի այն պատճառով, վոր նախ բնակարանը պատկանում է վոչ մասնավոր անհատի, այլ կոոպերատիվի, յերկրորդ՝ վոր կեցողներն իբրև կոոպերատիվի անդամներ, իրանք ել հանդիսանում են ուղղություն տվողը նրա գործերին։

Ընկերություններ, վորոնք կառուցում են բազմահարկ տներ և իրանց անդամներին հայթհայթում են մատչելի վարձով բնակարաններ, ամենից շատ տարածված են Գերմանիայում. դրանք կոչվում են խնայողա-կառուցումների ֆերեյնաներ։ Դրանց կարգին. պատկանում է 1892 թվին հիմնված Բեռլինի ընկերությունը։

1914 թվին այդ ընկերությունն ուներ 6,000 անդամ, վորի 62 տոկոսը բանվորներ եյին, 20 տոկոսը ծառայողներ։ Նա կառուցած ունի մի շարք բազմահարկ տներ՝ բազմաթիվ մանր բնակարաններ պարունակող, վորոնց վարձը ամսական միջին հաշվով 10 ռուբլի յե, ասել է 25 տոկոսով աժան, քան մասնավոր բնակարանը։ Մինչև 1914 թիվը ընկերությունը կառուցել եր 1,500 բնակարան, այդպիսով բավարարել եր անդամների մեկ քառորդ մասին։ Այս ընկերության գլխավոր միջոցները կազմում եյին հասարակական հիմնարկություններից վերցրած փոխառությունները։

Բնակարաններից ոգտվելու համար գոյություն ունեն վորոշ կանոններ և յուրաքանչյուր տան վրա նշանակված կառավարիչներ։ Բացի այդ, վորպեսզի կեցողը հոգ տանի բնակարանի պահպանության վրա, շենքի վերանորոգության համար հատկացված ծախքերի խնայողությունից վճարվում է պարգև այն կեցողներին, վորոնք խնամքով են պահում բնակարանը։

Բացի հատուկ ընկերություններից, բնակարանային հայթհայթման ֆունկցիաներ կատարում են նաև սպառողական ընկերությունները, վորոնց մեջ առանձին տեղ է գրավում «Պրոդուկցիոն» կոչվող Համբուրգի ընկերությունը, վորը բանվորական կազմ ունի։

Այն անդամները, վորոնք կամենում են ոգտվել «Պրոդուկցիոնի» բնակարաններից, բացի սովորական անդամավճարից, պարտավոր են մտցնել նաև 100 մարկ, այն է 40 ռուբլի հատուկ վճար, վորից հետո մտցվում են ցուցակի մեջ և մասնակցում են նոր կառուցվելիք բնակարանների բաշխմանը։

1919 թվի սկզբում բնակարանային փայեր մտցնողների թիվը հասնում եր 1,318 հոգու, վորը կազմում եր անդամների թվի 8 տոկոսը։ «Պրոդուկցիոնն» իր գործունեությունն այդ ուղղությամբ առանձնապես ընդարձակեց 1919 թվի սկզբներում. նա քաղաքի զանազան մասերում, գլխավորապես ծայրամասերում, ձեռք եր բերել 75 հողամաս։ Վորոնց վրա կառուցել եր 70 տուն՝ ծախսելով մոտավորապես 9 միլիոն մարկ։

Առաջին հարկերը ծառայում եյին վորպես խանութներ, իսկ մյուս հարկերը վորպես բնակարաններ 2-3 սենյակից բաղկացած։ Բնակարանների վարձերն այնքան չափավոր եյին, վոր նույն իսկ ընթացիկ ծախքերը չեյին ծածկում։ Որինակ, 1918 թ. ծախքը կազմում եր, կառուցման— 384.000 մարկ հարկ եր, ապահովագրական ծախքեր—99,000 մ. լուսավորություն, մաքրություն ևայլն ծախքեր 110,000 մ., ամորտիզացիա 187 հազար մ. ընդամենը 739,000 մ., մինչդեռ վարձ ընդամենն ստացվել եր 593,000 մ.։ Պատերազմի ընթացքում «Պրոդուկցիոնի» կառուցողական գործունեյությունը կրճատվեց. բայց յեթե ի նկատի ունենանք, վոր նա 1918 թվի վերջերում իր անդամներին հայթհայթած ուներ ավելի քան 1000 բնակարան,

հասկանալի կլինի այնուամենայնիվ նրա կենսունակությու[ն]

Սակայն բնակարանային կոոպերացիան գործունեությ[ան] հիշյալ ձևերով չբավականացավ, նա ծրագրեց կառուցել, ա[յս]-պես կոչված, «Այգի Քաղաքներ» կամ «Այգի-գյուղեր», վորոն[ք] տակն եր խույս տալ մեծ քաղաքների ժխորից ու փոշուց [...] բնակչություն հաստատել քաղաքներից վոչ հեռու բնությ[ան] ծոցում: Այստեղ կառուցվում եյին մի ընտանիքի համար փ[ոք]-րիկ տներ իրանց պարտեզներով ու այլ հարմարություններ[ով] այդ տները պատկանում եյին ընկերությանը և տրամադրվ[ում] եյին անդամներին ժառանգաբար վարձով ապրելու պայման[ով]

Այդպիսի գյուղեր հիմնված կան Բեռլինի շրջակայք[ում] և կրում են «Իդեալ», «Ֆալկենբերգ» և «Պարադիզ» անուններ[ը]

Այսպիսի գյուղեր Անգլիայում հիմնվում են կոոպերատ[իվ] շինքի սկզբունքներով գործող ընկերությունների ձեռքով:

Իսկ ամենաուշագրավը Բազելի մոտ, Շվեյցարիայում, կ[ա]-ռուցված կոոպերատիվ գյուղն է, վոր կոչվում է «Ազ[ատ] գյուղ»:

Այս գյուղի հիմնադիրները հանդիսացան Շվեյցարիայի [կ]-ոպերատիվների Միության ծառայողները: Պատերազմի հետև[անք]-քով Բազելում նույնպես ծագեց բնակարանային ճգնաժ[ամ] Այս բանից զրկված Միության վարչության նախագահը Մի[ու]-թյան ծառայողների և բանվորների ժողովում կարդաց [իր] կումցումը Բազելի մոտ մի օրինակելի գյուղ կառուցելու առ-ջարկով:

Ձեկուցումից հետո կազմվեց միության 145 ծառայողնե[րից] ու բանվորներից կոոպերատիվ և իրան անվանեց «Ազատ գյուղ[ի] կոոպերատիվ», վորը և հիմնեց ծրագրած գյուղը՝ Բազելից [մի]-ամենը 10 րոպե հեռավորությամբ: Այդ ընկերությունը մ[...] թյունը ավել 7 ու կես միլիոն վարկ: Գյուղը հիմնելու հա[մար] ընտրվեց 9 հոգուց բաղկացած վարչություն, վորը սակայն գ[որ]-ծում եր ձրիաբար, միայն վարձ ստանում եր հատուկ հրավ[իր]-ված մասնագետը: Գյուղի կառուցմանը մասնակցում եյին [...]

200 ֆիրմաներ, ստանձնելով այս կամ այն աշխատանքը, որա-կան միջին հաշվով աշխատում եյին 500—600 մարդ: 1920 թվի վերջերում արդեն կառուցվել են 144 տուն իրանց պարտեզնե-րով, ձգված եյին փողոցներ, շինված եր կոյուղի և ձեռնարկ-ված եր տրամվայ տանել այդ տեղից քաղաք: Տները կառուց-վում եյին մի քանի ձևի. ընդհանրացած ձևը յերկու հարկանի յեր իր հատուկ պարտեզով, առաջին հարկում զետեղված եյին սեղանատունը, հյուրասենյակը և խոհանոցը, իսկ յերկրորդ հարկում 2 սենյակ-ննջարան և լողարանը: Այդպիսի տունը բռնում եր 571 քառ. մետր գետին, կառուցումը նստում եր 32,570 ֆրանկ և տարեկան վարձ վերցնում եր 850 ֆր.: Տնե-րը տրվում եյին անդամներին կապալով, բայց անդամները կարող եյին նաև գնել տունը, սակայն մի պայմանով՝ այն, վոր գետինը մնում է կոոպերատիվի սեփականություն և անդամը յեթե հե-ռանա ընկերությունից, տունը վերցնում են նրանից և վճարում նրան տան արժեքը, միայն վոչ ավելի, քան նա վճարել եր: Բացի տներից, այդտեղ կառուցված է անդամների համար ըն-դարձակ ժողովրդական տուն իր դպրոցով, գրադարանով, ճա-շարանով, համարներով և 400—500 հոգու համար դահլիճով: Ներքին կյանքի վրա հսկելու համար ընտրված են վարչության կողմից լուսավորության, առողջապահության, զվարճություննե-րի. կարիքավորների օգնության հասցնող և այլ հանձնաժո-ղովներ:

Ինչպես տեսնում եք, բնակարանային կոոպերացիան փնա-լով ընդհանրանում է, անհատական ու մասնավոր սեփականա-տիրական ձևերից սկսելով, անցել է հավաքական ու համագոր-ծակցական ձևերին. նա մուտք է գործում նաև սպառողական կոոպերացիայի բնագավառը. բացի այդ, իրանց միջոցներով գալիս են նրան օժանդակելու պետական և հասարակական մար-մինները ու դրամական հաստատությունները:

Բնակարանային կոոպերացիայի կարիքը մեղմում հա-սունացած պետք է համարել. այդ գործի կազմակերպումը ըն-

տանձնել է Հայկոոպը, իբրև կոոպերատիվ պատրաստի ապ[...]
րատ և վորպեսզի նա կարողանա այդ ուղղությամբ գործ կ[...]
տարել, անհրաժեշտ է, վոր պետական և հասարակական հի[...]
նարկությունները ու դրամական հաստատությունները լ[...]
աջակցություն ցույց տան նրան։

XV

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՆՈՐ ՁԵՎԵՐ

Վերջին ժամանակներս կոոպերատիվ համագումարներում, մ[...]
մուլում և կոոպերատորների լայն շրջաններում մտադրաղ[...]
նյութ է դարձել և լուրջ կերպով քննվում է սպառկոոպեր[...]
ցիայում կամավոր անդամագրման հարցը։

Անդամագրման կամավոր ձևը գործնական արժեք ունեն[...]
լով հանդերձ՝ նա սպառկոոպերացիայի ծավալման ու խորացմ[...]
գործում միայն արմատական ու յեղակի միջոց չէ։

Կամավոր անդամագրման խնդրին մենք մոտենում ենք վ[...]
միան սկզբունքորեն, այլ և գործնական տեսակետով, այս դե[...]
քում մեզ հետաքրքրում է վոչ թե «գլխարկի ձևը թե գլխա[...]
կի կերպը» այլ ինքը, մեր անմիջական ոբեկտը-ազգաբնակչո[...]
թյան կոոպերացման հասունացած հարցը։

Մեր իշխանությունն շահագրգռված է վոչ թե կոոպեր[...]
ցիայի նոր ձևերով, այլ նրա ույժալ պարունակությամբ և գո[...]
ծառման կոնկրետ հետևանքներով։

Սպառկոոպերացիայի յերեք տարվա փորձերը, նրա անվե[...]
փորոնումները ու տատանումները, կատարած եկսպերիմենտնե[...]
արդյունքները բավական են, վոր կոոպերացիայի համար կա[...]
մակերպչական նոր ուղիներ ընդգծելու, զարգացման ու խորա[...]
ման նոր պրակտիկ ձևեր մշակել։

Միասկոոպները ձգտելով բավարարելու աշխատավոր մա[...]
սաների սպառողական կարիքները՝ կազմակերպում են իրե[...]

ապրանքները այնպես, վոր նրանք, դյուրությամբ կարողանան
կատարել վաճառման ու բաշխման ֆունկցիաները։ Կոոպերատիվ
աշխատանքը դառնում է ավելի դժվար ու պատասխանատու, նա-
մանավանդ այն դեպքում, յերբ մասնավոր կապիտալը պաշտ-
պանողական դրությունից անցնում է հարձակողականին։ Այս
հանգամանքը պահանջում է կոոպերացիայի ղեկավարներից ու
կոոպերացած մասսաներից մեծ հեռատեսություն, ինքնա-
գործ ու նախաձեռնող վոգի, ակտիվ ու ինքնուրույն քայլեր։

Աշխատավոր մասսաների տնտեսական ու սպառողական
պահանջները լիակատար և մատչելի յեղանակով բավարարելու
համար՝ կոոպերատիվ կենտրոնը և նրա նախնական բջիջներն ի-
րենց ուշադրությունը պիտի ուղղեն առաջադրած խնդիրների
անմիջական ու խելացի իրագործման։ Կոոպերացիայի նախնա-
կան ցանցը հանդիսանալու է նոր կազմակերպված ձեռնարկների
անկյունաքարը։

Զուտ տնտեսական բնույթ կրող մեթոդներով պետք է կազ-
մակերպել սպառող և արտադրող մասսաներին կոոպերացիայի
շուրջը՝ դարձնելով նրան գերազանցորեն զանգվածային ու հան-
րականացած կազմակերպություն։

Ազգաբնակչության ակտիվ մասնակցությունը կոոպերացի-
այում խոշոր չափով կախում ունի անդամակցական վճարների
ու դրամական մուծումների նվազագույն չափից։ Անհրաժեշտ է
ստեղծել անդամների համար ամեն տեսակի ֆինանսական ու
նյութական արտոնություններ։ Ազգաբնակչության չքավոր մասի
համար կոոպերացիայի դռները միշտ պետք է բաց ու ազատ լինե
կոոպերացիան չպետք է գտնվի օրենսդրապես ապահով խավերի
կազմակերպություն։

Մեզ, կոոպերատորներիս, մտահոգություն է պատճառում
Ակ-
խորհրդային կոոպերացիայի կազմակերպչական նոր ձևերը։
Ակ-
նահայտնի այն հանգամանքը, վոր յեթե կամավոր անդամագրու-
թյունը կիրառվելու է շահագրգռման սկզբունքի միջոցով և մաս-
սաների գործոն մասնակցությամբ՝ նշանակում է կազմակերպչա-

կան նոր մեթոդների գործադրումը լինելու է անհիվանդագին արդյունավետ: Նախանշված Հայաստանում պարտադիր ան[դա]մագրման սկզբունքը կիրառվել է բացառապես անդամների [...] տեսապես շահագրգռման միջոցով:

Յերեւանի, Ալեքպոլի, Դիլիջանի և ուրիշ շրջանների մ[...] կոոպները յեթե որեցոր դառնում են զանգվածային կազմակ[երպ]ություն — այդ յերեւույթի պատճառը բացատրվում է գլ[խ]ավորապես կոոպերացիայի այն սխալով, վոր իր մեջ պա[րու]նակում է մեր յերեք տարվա եքսպերիմենտների հետևա[նք]ներ ու գործնական պրիոմները:

Մի հանգամանքի վրա ևս անհրաժեշտ է կանգ առնել: [Հա]յաստանի կոոպերացիան իր սոցիալական բնույթով գ[երա]զանցորեն գյուղացիական է: Ժամանակակից գյուղում կո[ոպերա]ցիան պատվաստելու և ծավալելու միակ գործնական ու հնա[րա]վոր ձևը — կամավոր անդամագրման և անտեսականորեն շա[հա]գրգռման սկզբունքներն են:

Մեր կոոպերացիան իր ցանցն աստիճանաբար խո[ր]ցնում է մասսայական ինքնագործ ու ինքնօգնող ուղին[երով]: Մեր գյուղկոոպներից՝ Զարխեչի, Ուզունլարի, Կառա[...] Ղամարլվի, Դավալվի կազմակերպությունները վերստեղծվ[ել] հիմնավորվել են բացառապես տեղական ինիցիատիվով ու նյու[թա]կան տվյալներով: Ահա ինչու Խորհրդային կոոպերացիայի կ[ազ]մակերպչական ստրուկտուրան խորթ չե մեր գյուղի համար:

Այդպիսով կազմակերպչական նոր ձևերի կիրառումը կոոպերացիայի փորձերի ու վորոնումների տրամաբանական տևանքն է: Կամավոր անդամագրման ձևին տալով ավելի [...] պրակտիկ բնույթ, և ընդունելով, վոր կոոպերացիայի աշխատա[նքի] նոր մեթոդը բխում է մեր բանվորա-գյուղացիական մասսա[ների] արտադրողական ու սպառողական հարաբերությունների ց[...] ցապատ հյուսվածքից՝ պետք է հաստատված շեշտել, վոր կամ[ավոր] անդամագրման սկզբունքը խոշոր զարկ է տալու Խորհրդ[ային] կոոպերացիայի ամրապնդման ու մասսայականացմանը:

XVI
ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՆՈՐ ՄԵԹՈԴՆԵՐ
(Ցենտրոսայուզի փորձումները)

I
ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Կոոպերացիան նոր պայմաններում պետք է դառնա բանվորի և գյուղացու հասարակական դպրոցը, վորը կոչված է մշակելու, կազմակերպելու և նոր միջոցներ կիրառելու հասարակական անտեսության մեջ: Այս խնդրում՝ հիմնական աշխատանքն և համարվում սպառկոոպերացիայի կամավոր անդամագրության անցնելը: Տվյալ շրջանի միավորումը ծառայում են վորպես հիմք կամավոր կոոպերատիվի: Ընկերության գործունեության շրջանը վորոշում է, անդամների ընդհանուր ժողովը: Կոոպերատիվի շինա[...]րության ցանցը ներկա պայմաններում պետք է տարբեր[...] քաղաքներում և արդյունաբերական կենտրոններում բազմակերպակային սիստեմով, գյուղում միակրպակային կամ բազմակրպակային՝ նայած թե գործունեության շրջանը ինչ առանձնահատկություններ ունի: Սպառկոոպերացիայի կամավոր անդամագրության անցման հետ՝ անհրաժեշտ է վերակազմել գոյություն ունեցող սպառընկերությունները, վորոնք, իրենց հերթին կարողանան կազմակերպչական տեսակետից նյութ ծառայել նոր բացվելիք սպառընկերություններին: Անդամների թվի մինիմումը, վոր անհրաժեշտ է սպառընկերության գոյության համար վորոշվում է հետևյալ նորմայով. գյուղական վայրերում — 50 անդամ և հետևյալ նորմայով. գյուղական վայրերում — 200 անդամ, քաղաքներում և բանվորական վայրերում անհրաժեշտ է գործող միա[...] Անդամների թվի մինիմումը, վորը անհրաժեշտ է սահմանում է Հայկոոպը, կոոպների և կենտրանկոոպների համար սահմանում է Հայկոոպը, նրանց գործունեության շրջանի համար՝ կիրառելով գուղական

վայրերում 15%-ը տնատերերի. քաղաքներում և բանվոր
վայրերում 25%-ը պրոֆմիության բոլոր անդամների։

Սրա հետ միաժամանակ անհրաժեշտ է հրավիրել ը
նուր ժողովներ բոլոր սպառընկերությունների և կենտրանկ
ների և ժողովի օրակարգի մեջ դնել Կենտգործկոմի ու Ժող
խորհի վորոշումների և սպառկոոպերացիայի մասին յեղած որ
դրության ծանոթության հարցերը։

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ժամանակակից գյուղատնտեսության վիճակը, վոր ա
ընկնում իր առանձին գլխավոր ճյուղերի զարգացմամբ, սպա
պերացիային առաջադրում է խորացնել իր աշխատանքները
շած ուղղությամբ և փոխադարձ կապ ստեղծել քաղաքի ու
ղի հետ՝ կազմակերպելով գյուղատնտեսական մթերքների
ռումը և գյուղտնտեսության կարիքների հայթհայթումը և
ժամանակ գյուղին մատակարարելով պետարդյունաբերու
ապրանքները։

Կոոպերացիայի գյուղական աշխատանքների հիմքը պե
կազմի գյուղական մթերքների հավաքումը և սպառումը,
պեսզի մի կողմից հնարավոր լինի չեզոքացնել միջնորդնե
մյուս կողմից՝ ապահովել գյուղացուն, վոր նրա մթերքներն
վելի բարձր գներով վաճառվեն։ Կոոպերացիան ամեն մ
պետք է ձեռք առնի գյուղատնտեսական մթերքների և արդ
նաբերության ապրանքների արժեքների հավասարակշռութ
բացակայության դեպքում՝ գյուղին հայթհայթել նրա տնտե
թյան արտադրության միջոցները հայթհայթել՝ սերմացու,
տուկների կեր, գործիքներ, կենդանի և մեռյալ ինվենտար։
ոպերացիաներից առաջացող հնարավոր վնասները, սպառկո
րացիան պետք է ծածկե այլ առևտրական ոպերացիաներից
րադիրներից ու գլխավորապես գյուղատնտեսության մթերքն
վաճառումից, վորը հնարավոր է, յեթե այդ ոպերացիան
տարվեն կազմակերպված և լայն չափերով։

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

Հարկային յեռանդուն կամպանիան գյուղում, վոր տարվում
լխավորապես ազգաբնակությունից դրամանիշներ ստանալու
ղությամբ՝ խորացրեց գյուղական ազգաբնակության գնողա
ն ույժի կրիզիսը։ Կրիզիսի հիմքը կազմում է այն, վոր «մկրա
» ծայրերը միաժամանակ գնում են յերկու ուղղությամբ։
տարդյունաբերության ապրանքների գների բարձրացումը
ցարվում է նրա շրջանառության սուղ միջոցներով
նույնպես պետարդյունաբերության իր տնտեսությա
պճեպ վերականգնմամբ։ Մյուս կողմից գյուղատնտեսա-
ն բերքերի և առանձնապես հացահատիկների ցած գնահա-
ւթյունը հետևանք է սպառման շուկայի անկազմակերպ վի-
կի և բերքը ռեալիզացիա յենթարկելու կամպանիայի ռեսուրս-
րի աղությանը։ Կրիզիսը առաջացել է տնտեսական պայման-
րի օբյեկտիվ դրությունից վորոնք ներկայիս հանդիսանում են
ուսումնասիրության նյութ։ Բայց և այնպես մեղքի մի վորոշ
ը ընկնում է կոոպերացիայի վրա։ Ժամանակակից առևտրի
եկտիվ պայմանները հարկադրում են վերաքննել և պարզել
ն խնդիրները, վոր կոոպերացիան դնում է իր առաջ կատա-
լու առաջիկայում։ Այս նպատակներն ի կատար ածելու համար
ազգաբնակության շահագրգռման սկզբունքով կոոպերացնելու
ակետից՝ անհրաժեշտ է վերադիր ծախսերը հասցնել նվազա-
յն չափերի։ Այս կրճատումները, այլ միջոցների հետ, պետք
ձգտեն հասնելու ի հաշիվ խելացիորեն կազմակերպված կոոպե-
տիվ ցանցի, վորը վորոշակի չափով պետք է հենվի տնտեսա-
ն նպատակահարմարության սկզբունքի վրա։

Ժամանակակից կոոպերացիայի ծանր դրության լուրջ պայ-
ններից մեկն էլ հանդիսանում է արագ շրջանառության չը հա-
պատասխանող պարտքերի վճարումը, վորը կոոպերացիայի
մար առանձնապես զգալի է շնորհիվ այն բանի, վոր նրա մի-
ները՝ ապառիկների ձևով ցրված են կոոպշրջաններին, վո-
ք, չեն վերադարձնում ժամանակին։ Այս հանգամանքը ան-

հրաժեշտ տալով թելադրում է վերացնել ցենտրալիզմի վար[չակա]յին սիստեմը և համաձայնեցնել այդ կոոպերատիվ շրջանների հետ։ Ձգտելով ներկայիս մեզ վրա վերցնելու սպառողական [կոոպերացիայի] բնույթ կրող ամբողջ արդյունաբերության վաճառքը և անկ[ախ] լինելով պետարդյունաբերության հայթհայթելու հում նյութ[երով]՝ կոոպերացիան պետք է իր համար առողջ հիմք ընտրի պ[ետ]արդյունաբերությունը կապելու կոոպերացրված սպառող ու տարբող մասսաների հետ՝ ապահովելով արդյունաբերութ[յան] վաճառքը համեմատ կազմակերպված սպառողների պահան[ջին] ապահովելով նրան հում նյութերով։

XVII

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

(Պատմա-տնտեսական ակնարկներ)

«Մեր գլխավոր գործը կայանա[լու է] նրանում. վոր սովորեցնենք մանր-գ[յուղ]ացիության հավաքական աշխատա[նքի] կոոպերատիվ տնտեսությունն»։

Ֆր. Էնգելս

Ա.

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԴԵՐԸ ՅԵՎ ՈԲԵԿՏԸ

Գյուղատնտեսական կոոպերացիան հանդիսանում է խոր[հր]դային իրավակարգում մանր տնտեսության ցանկալի ուղեկ[ից]։ Այս տիպի կոոպերացիայի արտակարգ կարևոր դերը բացատր[]վում է այն բանով, վոր գյուղկոոպի միջոցով գյուղացին հ[նա]րավորություն կունենա ծանոթանալու խոշոր տնտեսության առավելությունների և օգուտների հետ։

Գյուղատնտեսական կոոպերացիայի տարբեր ձևերը ֆունկցիաները—վարկային, արդյունաբերական, խոշոր գնու[մներ]ի, արդյունքների վերամշակման ու սպառման—վորոնք միավորում են մանր-արտադրողներին իրենց շուրջը՝ դառնալով ապա[գա]յում պատկառելի կազմակերպություններ՝ հաջողությամբ կա[րող] են մրցել կապիտալիստական նույնանման ձեռնարկների [հետ]ն։ Գյուղատնտեսական կոոպերացիան բարձրացնելով յերկրագործության վորակը և արտադրողական չափը՝ դարձնում է նր[ա]ն կենսունակ, ճկուն և զարգանալու ընդունակ։

Ընդհանրապես գյուղացիական տնտեսությունն ունի մի առավելություն կապիտալիստականի հանդեպ, վոր նա իր տեխնիկական պայմանների շնորհիվ արտադրության կողմից ավելի [ա]րդյունավետ է, քան կապիտալիստական ձեռնարկությունը։ [Բ]այց մյուս կողմից գյուղացիական տնտեսությունը փոխանակ[ման] գործում ավելի վատ պայմաններում է գտնվում, քան կա[պ]իտալիստական տնտեսությունը։ Կոոպերացիան հիմնովին փոխ[ում] է գյուղատնտեսության դիրքը. նրա օգնությամբ գյուղա[ցի]ն կարողանում է ձեռք բերել վարկ ստանալու իրավունք և [հ]նարավորություններ, այնպես ինչպես կապիտալիստները՝ վաճառքի [հա]նելով իրենց տնտեսության արդյունքները և գնելով ձեռնտու [պ]այմաններով իրենց համար անհրաժեշտ նյութեր ու իրեր։

Կոոպերացիան ընդգրկելով գյուղական տնտեսությունը՝ [հ]իմնովին չի փոխում նրա էությունը. վորքան էլ համագործակ[ց]ությունը փորձի հեղաշրջել ու վերափոխել մանր, թզու[կ]ային տնտեսությունը, բայց նա դարձյալ կունենա իր անհա[տ]ական բնույթագծերը, մանր արտադրողական առանձնահատկու[թ]յունները և ձգտումները։ Կոոպերացիան վոչ միայն չի սպառ[ն]ում գյուղացիական տնտեսության ինքնուրույն կյանքին, այլ [ն]պաստում, զարկ է տալիս նրա կատարելագործման, բարձրաց[ն]ելով նրա տեխնիկան և դարձնելով նրան կենսունակ և կա[յ]ուն։

«Սխալ է այն կարծիքը, ասում է Տուգան-Բարանովսկին, [վոր]թե կոոպերացիան առաջ է բերում գյուղատնտեսության մեջ [կ]ենտրոնացում՝ հող պատրաստելով սոցիալիզմի համար»։ Բայց և

այնպես կոոպերացիան գյուղական տնտեսության մեջ առաջ բերելու հիմնական հեղաշրջում: Կոոպերացիան ամենից առա պիտի վերացնի մանր տնտեսությունների կղզիացած, անջատ անհաղորդակից վիճակը, խորտակելու և նրանց միջև անջրպե և հալեցնելու է նախնական միացորդների քարացած ձևերը:

Հին ժամանակ յուրաքանչյուր գյուղացու տնտեսակ հաջողությունը կախում ուներ նրա անհատական ճիգ ու ջան քից: Գյուղացին ամփոփված իր տնտեսության, հանդ ու հա դաստանի նեղ շրջանակում և անջատված արտ-աշխարհից՝ զանգակատնից դենը չէր տեսնում: Ավելին ասենք, ժամանակ կից գյուղացին իր պատյանում պարուրված՝ խուսափում է մ տական փոխ-հարաբերություններից՝ անգամ կողք-կողքի ապր հողը-հողին կից, ջուրը-ջրին խառն և տնտեսական նույնանմ պայմանների մեջ գտնվող հարևան գյուղացու հետ: Այդ մի պաղաղ միջավայրում սնվող ու արտադրող գյուղացին դառն է ծայրահեղ իրապաշտ, յեսասեր և պահպանողական ու խավ րասեր:

Կոոպերացիային է վերապահված հիմնովին փոխելու գյուղաց ական միակերպությունը, խորտակելու գյուղի «իդիլլիան», հալ ցնելու գյուղացու անտարբերության սառույցը՝ վարժեցնելով նր կոլեկտիվ աշխատանքի և համագործակցության: Ճիշտ է, ա դեպքում էլ գյուղացին դարձյալ տեր է իր տան, բակին, տա ու մաղին, բայց նա արդեն զգալու է, որ ինքն ամբողջությ մի անբաժանելի մասնիկն է, համագործակցության բջիջը, վ պատվաստելով ու ծավալվելով գյուղում՝ աստիճանաբար տ րածվելու յե ամբողջ յերկրում: Գյուղի յուրաքանչյուր տնտ սական միավորի հաջողությունը՝ անդրադառնալու յե գյուղ տնտեսական կոոպերացիայի ծավալման ու խորացման վր Գյուղացու անկախ գործունեյության համար դարձյալ կմ նույն ասպարեզն—անհատականորեն արտադրել և սպառելը: Բա մյուս կողմից կոոպերացիան կտրամադրի գյուղացուն իր գ գակատնից դենը նայելու, հաղորդակից լինելու աշխարհի հետ, վ

պես արտադրող՝ շուկա դուրս գա այս դեպքում միայն նա ի խորց սրտի կ՛զգա, որ ինքն և իր դաճած տնտեսությունը հսկա կոլեկտիվի մի մասնիկն են, նրա ամենափոքր, բայց ամենա-կարևոր պտուտակները: Գյուղի արտադրությունը կդառնա փո-խանակման օբեկտը: Գյուղացու տնտեսությունը, իբրև տնտե-սական միավոր կորցնելու յե հետզհետե իր անհատական բնույ-թագիծը: Նրա ներքին բովանդակությունը դառնալու յե ավելի րդ և ստանալու յե այնպիսի բնույթ, որ մանր-արտադրողը զգալով իրեն առաջվա նման ազատ և իր ուժերի վրա հենված՝ կանգնի սերտ ու ամուր կապ իր հարևանի և դասակարգի հետ: Ահա այս է գյուղատնտեսական կոոպերացիայի ամենակարևոր նշանակությունը: Գյուղատնտեսական կոոպերացիան միանգա-մից վոչ կործանում է մանր արտադրությունը և վոչ էլ հիմնո-վին հեղափոխում է նրան: Որքան լայն ծավալվի կոոպերացի-ան գյուղում և որքան ամբողջովին ընդգրկի գյուղատնտեսու-թյունը, այնքան կուժեղացնի մանր տնտեսությունները՝ դար-ձացնելով համագործ ու փոխադարձ օգնության սաղմերը և կեն-սունակ դարձնելով բնական տնտեսությունը: Բայց դրանից չի հետևում այն, որ գյուղացիական կոոպերացիան իր էությամբ խում, բացասում է սոցիալիզմը: Վերջինիս իրականացումն ամ-բողջովին պայմանավորված է կապիտալիստական հասարակարգի վերջնական տապալումով, իսկ կոոպերատիվ շարժումն նույն տնտե-սակարգի հարազատ զավակը լինելով՝ չի ձգտում սոցիալիզմին, չի պահանջում մանր սեփականության վոչնչացումն և հավաքական րտադիր աշխատանքի ու ընկերավարական կենցաղի իրակա-նացումն:

գծած ուղիով՝ կտա գյուղացուն մեծամեծ օգուտներ՝ բարձրաց
լով նրա տնտեսական արտադրական ուժը։ Խորհրդային գյու

*) Резолюции Вср. Конференций РПК—«Правда» 1922.

ող և համագործակցության միջոցով աստիճանաբար կատա-
ագործել գյուղատնտեսական ձևերը՝ միացնելով կոլեկտիվ
նարկի շուրջը մանր տնտեսությունները և վարժեցնելով ար-
դրողներին հավաքական աշխատանքի և կոոպերատիվ ըն-
ության։

Բայց գյուղացիության, վ՞ր խավը կարող է առաջին հեր-
ն օգտվել գյուղատնտեսական կոոպերացիայից։ Անկասկած
ղացիության ունևոր մասը, որ կարող է կոոպերատիվին
մադրել թե աշխատող ձեռքեր և թե նյութական միջոցներ։
տերազմից առաջ մեզանում և մինչև օրս կապիտալիստական
կրներում՝ գյուղատնտեսական կոոպերացիայից շահվել են
ն հարուստ և կուլակ գյուղացիությունը, նրանք միայն
րողացել են մտցնել խոշոր բաժնեվճարներ և ավելի գիտա-
լինելով՝ ըմբռնել կոոպերացիայի նշանակությունը։

Հիմնական հարցը, որ պահանջում է մեզանից, լրիվ պա-
սխան, այդ այն է, թե գյուղացիական վ՞ր խավն է մինչև օրս
ավել կոոպերացիայից և կազմում է նրա տնտեսական առ-
ջքը։

Այդ հարցով զբաղվել են Ռուսաստանի համարյա բոլոր
տեսագետները, բայց ուղիղ և տրամաբանական յեզրակացու-
ան են հանգել բացառապես մարքսիստները կամ մարքսիստա-
ն աշխարհահայացքն ընդունող գիտնականները։

Տուգան-Բարանովսկին իր «Կոոպերացիայի Սոցիալական
մունքները» աշխատության մեջ հանգում է այն յեզրակա-
թյան, որ գյուղատնտեսական կոոպերացիայի սոցիալական
քը կազմում են աղքատ ու միջակ գյուղացիությունը. մինչ-
հարուստ ու կուլակ տարրերն օգտագործելով քաղաքական
րավորությունները՝ դարձրել են կոոպերացիան, նամանա-
նդ նրա զարգացման առաջին շրջանում, իրենց շահագործման
ոթը. նորմալ պայմաններում գյուղատնտեսական կոոպերա-
այի հիմքը կազմում են չքավոր ու միջակ գյուղացիությունը.
ոպերացիայի վիճակագրությունը ցույց է տալիս, որ վարկա-

յին կոոպերատիվի յուրաքանչյուր 100 անդամին հասնում է

	1906 թ.	1908 թ.	1909 թ.	1910 թ.	1911
Ձի չունեցող	2 տ.	3 տ.	3 տ.	4 տ.	4 տ.
1 ձի ունեցող	16 տ.	25 տ.	27 տ.	27 տ.	28 տ.
2 » »	29 տ.	31 տ.	32 տ.	31 տ.	32 տ.
3—4 »	34 տ.	29 տ.	26 տ.	27 տ.	25 տ.
4 ձիուց բարձր	19 տ.	12 տ.	12 տ.	11 տ.	11 տ.

Սույն աղյուսակը ցույց է տալիս, որ վարկային ն նական կոոպերատիվներն, իրենց զարգացման սկզբնական ջանում ընդգրկում են գլխավորապես ունևոր գյուղացի թյունը, բայց հետագայում կոոպերացիան ընթանալով իր բ կան հունով՝ դառնում է չքավոր ու միջակ գյուղացիութ տնտեսական հանգրվանը. գիտնական—կոոպերատոր Ս. Պրոկո վիչն ուսումնասիրելով գյուղացիական բյուջեն և զուգորդ կոոպերատիվ վիճակագրության տվյալների հետ՝ տալիս է տևյալ ցիֆրական աղյուսակը:

ԿԱՏԵԳՈՐԻԱ	Ազգաբնակչություն		Արտելի անդամները		[illegible]
	Տնտեսու-թյուն	Տոկոսը	Տնտեսու-թյուն	Տոկոսը	
Կով չունեցողներ	161	8,8	1	0,1	0,0
1 կով ունեցողներ	452	24,8	79	7,9	0,3
2—3 կով ունեցողներ	632	34,7	409	40,9	1,1
4—5 » »	284	15,1	235	23,5	1,5
6-ից ավելի »	301	16,5	276	27 6	1,6
Ընդամենը	1820	100,0	1000	100,0	1,00

Վերոհիշյալ թվական տվյալները մեզ պարզորեն սում են, որ մինչև որս գյուղատնտեսական կոոպերացիա սոցիալական հիմքը կազմելով միջակ գյուղացիությունը՝ գեր

ռել է բունդքավոր տարրի տնտեսական ազդեցությունը: յդ այս ցերևույթն ինքնահատուկ էր բուրժուական հասարակարգին, որ տիրապետող դասակարգերի մարմնացյալ աշտպանն էր:

Պրոլետարիատի քաղաքական գերիշխանության ժամանակ ուղատնտեսական կոոպերացիայի սոցիալական հիմքը կազում է աղքատ ու միջակ գյուղացիությունը, որ և համարվում Խորհրդային իրավակարգի ամրակուռ սյունը, բանվորության միահարազատ ընկերն ու լծակիցը:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ կոոպերացիան ատահանվեց կապիտալիստների և գյուղական ունևորների րանկումից: Այդ անհրաժեշտ էր, նամանավանդ այն տեսակեց, որ Խորհրդային իրավակարգում կոոպերացիան վերականգնլ է միայն չքավոր գյուղացիության համար: Բանվոր-գյուղաական իշխանությունը «քյասիրի արևևի կապը չի փոխի հաւսա-զորքայի գլխով»: Իսկ որպեսզի չքավորներն ուժ ստան, ոտքի կանգնեն—պիտի համախմբվել կոոպերացիայի շուր, ով չունի յեզ, կով ու գործիքներ, կուլակին կուլ չգնալումար պիտի միանա իր նմաններին՝ կոոպերացիայի, արտելի, կերության միջոցով բարելավելով իր տնտեսականը, դառնալ շահագործողների գայլի ախորժակը և միհամուռ ջանքերով րգծի կոոպերատիվ տնտեսություն: Յեթե քյասիր գյուղացին ոպերացիային մասնակցելու համար չունի նյութական միջոցր, նա կարող է դիմել Խորհրդային կառավարության՝ տալու են գյուղատնտեսական ֆոնդից յերկարատև վարկ, որը և կրամաչքի կոոպերացիային: Շատ անգամ չքավոր գյուղացինե միանալով կազմում են անկախ ընկերություններ, որոնք վելի քան կարիք են զգում փոխադարձ օգնության և կառարության աջակցության: Այս դեպքում Խորհրդային կառարությունը, հակառակ իր ցանկության, հնարավորություն չի նենում զգալի օգնություն հասցնել նրանց: Այդ տեսակետից պատահական է, որ չքավոր գյուղացիները չբաժանվեն

միջակներից, որ կոոպերացիայի միջոցով հնարավոր լինի
ավել ունեվորի լծկաններից և արտադրական միջոցներից:

Գյուղատնտեսական կոոպերացիան առավել ույժ ու կ
կունենա, յերբ նա միացնի իր շուրջն ամբողջ գյուղացիութ
օգտագործելով ունևորների տնտեսական հնարավորությու
ըը: Բայց հարկավոր է միջոցներ ձեռք առնել, որ չքավոր գ
ղացին իրեն ազատ ու համարձակ զգա կոոպերացիայի մեջ,
կառավ պարտադրին կոոպերատիվ հիմնարկն, ընկնելով կու
ների ձեռքը՝ կծառայի բացառապես նրանց շահերին: Գյու
տնտեսական կոոպերացիայի զարգացումն ունի այն գործն
նշանակությունը, որ նա զարկ է տալիս գյուղացիության ի
նագործնեությանը: Գյուղացիությունը կոոպերացիայի միջ
ընտելանալու յե հասարակական սովորություններին: Մանր-գյու
ցին միայն այն ընկերություն և հետաքրքրվում հասարակա
գործերով, յերբ՝ նրանք առնչություն ունեն իր տնտեսության:
Գյուղացու անտարբերությունը կվերանա միայն այն ժամա
յերբ նա մոռանա «моя хата с краю» պահպանողական նշանա
նը, իսկ այդ կլինի միայն այն ժամանակ, յերբ գյուղը թ
տա իրենից հնության փոշին, սահեցնի ամուր շաղկապ քաղ
հետ և իր տնտեսության մեջ մակարդի համագործ սաղմեր:

«Գյուղատնտեսությունը բարձրացնող պետական բար
րոգումները, լիակատար հաջողություն կունենան միայն այն գ
քում, յերբ նրանք իրագործվեն կոոպերացիայի միջոցով և
նեն համագործակցության ուղիով: Գյուղատնտեսական գիտե
ները հեշտությամբ կարելի յե տարածել տեղկոոպների միջո
Ցերկրագործության բարելավումն և հողի մշակման կատար
գործումն ամբողջովին կախված է գյուղատնտեսական կոոպ
ցիայի հաջողություններից»: Այսպես է ասում Խորհրդային
ատանի նախկին Հողժողկոմ Օսինսկին: *)

*) Н. Осинский—«Восстановление Крестьянского Хоз
тва» 1923 г. «Новая деревня».

Խորհուրդների Համառուսական IX Համագումարը մեծ նշա
կություն տալով գյուղատնտեսական կոոպերացիայի զարգաց
նը՝ թվում է նրան առաջադրած նպատակները. 1) բարձրա
նել գյուղատնտեսությունն ըստ վորակի. 2) պահպանել մանր
գյուղատնտեսական կայունությունը. 3) զարգացնել գյուղացիության
ինքնագործունեությունը. 4) յուրացնել, տալ գյուղացիության
տնտեսական վերանորոգումները՝ տնտեսական նոր քաղաքականու
թյան հիմունքներով և 5) հեշտացնել մանր գյուղացիական
տնտեսությունը՝ խոշոր տնտեսություն դառնալու և այլն:

«Գյուղացիների միությունը կոոպերացիայի շուրջը, ասում
Օսինսկին, կբանա դեպի միասնական սոցիալիստական տնտե
սություն առաջնորդող ուղին, որ կիրականանա յերկրի ելեկ
տրիֆիկացիայից հետո. «սոցիալիզմը հավասար է Խորհրդային
իշխանության՝ պլյուս ելեկտրոֆիկացիան»,—ասում է ընկ. Լենինը
յերկրագործության հիմնական ձևերի հեղաշրջումը ստեղծելու յե
արտադրական կոոպերատիվների խիտ ցանց, վորը ընդգրկելու յե
ողորդական տնտեսությունն՝ ապրանքային փոխանակումը
ղի տալով մթերքների հասարակական բաշխմանը»:

Գյուղացիությունը՝ սկզբում խուսափում եր կոոպերացիայից,
վախենում եր գյուղկոոպին տրամադրել իր կարողության ամե
ոչնչին մասը: Գյուղկոոպը դեռես գործնականապես չի համոզել
գյուղացուն, վոր նա գյուղացիական սեփականության հետ գի
և վարվել այնպես, ինչպես անհատ-գյուղացին «իր աչքի լույս,
որ ու արև յեզան կամ կովի» հետ: Հենց այդ տեսակետից,
գյուղացիության մեջ պիտի տարածել կոոպերացիայի ամենա
ատարակ ու պարզ ձևերը, իսկ կոոպերացիայի ավելի բարդ տե
սակների պատվաստումը կատարել աստիճանաբար, զգույշ՝ պա
հանջելով սպասելիք հետևանքներն ավելի ուշ, գյուղատնտեսու
թյան կատարելագործման շրջանում:

Գյուղատնտեսական կոոպերացիայի առևտրական ձգտում
ները պիտի խրախուսել, բայց այդ առևտուրը չպիտի կրի զուտ
վաճառականական և սպեկուլյատիվ բնույթ. չէ՞ որ այս է НЭП-ի պա

հանջը և այդ մասին շատ է ասում ընկ. Լենինը.—«Արտա-
ժամկան սպառնալիքից չատրսող պատասխանատու կոմմունիստ
անծանոթ է առևտրին, չի սովորել և չի էլ ցանկանում սովոր
բայց նա, կոմմունիստը, յեթե վոչ քառասուն պերամից,
քառասուն յերրորդական վայրեր տեսնող և կապիտալիզմից ա-
ռած վել ցանկացող կոմմունիստը, պիտի սովորի առևտուրը՝
վորական գործակատարից, պահեստներում տասնյակ տար
քաշ յեկող գործակատարից...*) Յեթե անհատ-կոմմունիս-
հեղափոխական առաջնորդը պահանջում է առևտրական ու
«կարմիր վաճառական»-ի դիպլոմ, ապա վո՞րքան մեծ է պահ
կոոպերատիվ կազմակերպությունից, վոր գործում է գյուղա
սովոր և սեփականատեռնչ միջավայրում: Հարկավոր է գյու
տնտեսական կոոպերացիայի հետ շաղկապել չքավոր ու մի
գյուղացիներին, փոքծված ու գիտակ գյուղատնտեսներին, կ
միր բանակայիններին, խորհրդային ու կուսակցական գործ
ներին:

Այդ նպատակի համար հարկավոր է կազմակերպել կոո
րատիվ կուրսեր, դպրոցներ և ինստիտուտներ՝ պատրաստ
կոոպերատոր հրահանգիչներ, կոոպերատոր—կամերալիստ
հաշվապահներ և տեխնիկներ: Խորհուրդների Համառուսակ
IX Համագումարը պարտավորեցրել է բոլոր խորհրդային հիմնա
ներին, առաջին հերթին ժողկոմատներին՝ նպաստել գյուղատն
սական կոոպերացիայի շինարարության 1) պատրաստելով կ
պերատիվների համար հրահանգիչ-ագրոնոմներ և շրջային գ
ծիչներ և 2) մղել գրավոր թե բանավոր կոոպերատիվ ագիտացի
պրոպագանդա և այլն:

Գյուղատնտեսական կոոպերացիան չի կարող ինքնուրույն
զարգանալ գյուղի կղզիացած միջավայրում, յեթե գյուղացի
թյան ու բանվորության մեջ գոյություն չունենա ընդհանուր
շաղկապ, գյուղատնտեսության ու արդյունագործության մեջ

*) XI С'езд РКП стенографический отчет 1922 г.

նական կապ և գյուղի ու քաղաքի մեջ սերտ ու մշտական
րերություն: Տնտեսական նոր քաղաքականությունը НЭП-ը
հանջում է պրոլետարիատի ու գյուղացիության՝ խորհրդա-
յերկու դաշնակիցների միջև գոյություն ունենա СМЫЧКА:

Այս լոզունգն առաջին անգամ հայտարարել է ընկ. Լենի-
XI համագումարում: «Մենք սեղծում յենք մեր եկոնոմի-
ն գյուղացիության հետ, վոր բազմիցս անգամ փոփոխելով,
ց վոչ կործանելով՝ պետք հասցնենք մինչև վերջ յեվ գա-
վորենք այնպես, վոր մեր սոցիալիստական աշխատանքի, խո-
արդյունագործության յեվ գյուղատնտեսության մեջ, այսինքն
ղացու ծանրաբեռ, տանջալից, կարիքից ճմլված ու անգիտակ
ատանքի մեջ. լինի շաղկապ—СМЫЧКА»...

«Ահա, պիտի ցույց տալ այդ СМЫЧКА-ն վոր մենք տեսնենք,
ողջ ժողովուրդը տեսնի, գյուղացիական մասսան տեսնի, վոր իր
ծանր, ավերված ու թշվառ կյանքի և սոցիալիստական հե-
ռանկարի, աշխատանքի միջև կա կապ,
վոր իդեալների անունով տարվող աշխատանքի միջև կա կապ,
Մեր նպատակն է ստեղծել գյուղի հետ СМЫЧКА, ա-
պակ... Մեր նպատակն է ստեղծել գյուղի հետ СМЫЧКА, ա-
ցույցանել գյուղացուն, վոր մենք սկսել ենք հենց այն բանից,
վոր իրեն մոտիկ է ու ծանոթ և նրա թշվառության զուգոր-
ն և վոչ թե սկսում ենք նրանից, վոր նրա համար խորթ է,
ռնակայական, այդպիսով հարկավոր է ապացուցանել, վոր
ք, կոմմունիստները կարող ենք նրան օգնել նույն իսկ և այն
ժամանակ, յերբ նա գտնվում է թշվառության մեջ, թալանված
ու հանկացած վիճակում, քաղցի և այլ տառապանքների յենթարկ-
ն մաժնատին»:

Գյուղատնտեսական կոոպերացիան, ընկ. Լենինի պահան-
ված կենդանի СМЫЧКА-ն է: Խորհրդային իշխանությունն հենց
դ տեսակետից զարկ է տալիս կոոպերացիային, վոր ընդունակ
ի հետ միացնելու չքավոր և միջակ գյուղացիության՝ վարժեց-
ով նրանց կոոպերատիվ սովորությունններին և բարեկարգելով
ողական տնտեսությունը կոլլեկտիվ հիմունքներով:

Գյուղատնտեսական կոոպերացիան ստեղծելու և Խորհրդա-
ն գյուղում մի պատվանդան, վորի վրա հենվելու է ապագա
գյուղատնտեսությունը:

XVII

ԿԱԹՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

(Պատմա-տնտեսական ակնարկներ)

Ա

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Կաթնատնտեսական կոոպերացիան զարգացած է Յեվրոպայի գյուղացիական յերկրներում և տարածվելու նպաստավոր հող ունի առավելապես Անդրկովկասում։ Գյուղատնտեսական կոոպերացիայի ամենաժողովրդական տիպը-կաթնատնտեսական **ընկերություն կամ արտելն** է, վոր ծավալված է գլխավորապես այն յերկրներում, ուր կան ալպիական արոտատեղեր, ընդարձակ մարգագետիններ—Դանիա, Շվեյցարիա, Հոլանդիա, Շվեցիա, Ավստրիա և այլն։ Այդ կողմից վորքան առավելություն ունի Անդրկովկասը իր «յայլաղ»-ները և խոտառատ «...լաներ ու լեռները»։ Առանձնապես Հայաստանն անասնապահության ու կաթնատնտեսության համար ունի մի շարք բարենպաստ պայմաններ—Լոռին, Ն-Բայազետ, Փամբակ, Ապարան, Ազբա... կարծես անասնապահության համար են ստեղծված։ Բայց կաթնատնտեսական կոոպերացիան ունեցել է մեր յերկրում մի խոչընդոտ, նրա զարգացման առաջ բարձրացել է մի պատվար. դա մեր **խավարապատ** գյուղն է, հետամնաց ու անշարժ գյուղացիությունն է, վորին մանավորապես հեղափոխականացնելու և տնտեսապես վերածնելու համար խորհրդային կառավարությունը վոչ մի—ջանք չի խնայում։

Միջակ ու չքավոր գյուղացիները հիմնելով կաթնատնտեսական կոոպերատիվ՝ կարող են ուժեղացնել իրենց տնտեսությունները — ազնվացնելով անասուններին, բարձրացնելով կաթի վորակն ու քանակը և բարելավելով իրենց կյանքի պայմանները։

Կաթնատնտեսական **կոոպերատիվ կամ արտել** կազմակերպելը շատ դժվար գործ չէ. մի գյուղում յեթե գտնվեն 10-15 գիտակից, կոոպերացիայի նշանակությունը հասկացած և հավաքական աշխատանքին ընդունակ գյուղացիներ, կարելի է ասել, որ գործի կեսը արդեն կատարված է, հարկավոր է մի նախաձեռնող—կոոպերատոր կամ մասնագետ—կաթնատնտես, վոր կարողանա հիմնադիրներին հավաքել մի տեղ ժողովի, վորին ցանկալի է մասնակցի գավ-գործկոմի ներկայացուցիչը կամ գավառական ագրոնոմը։ Յերբ ժողովին մասնակցողներն ըստ ամենայնի կհամոզվեն և կընդունեն կաթնակոոպ հիմնելու կարևորությունը և օգուտը—նոր միայն քննության պիտի դրվի և մշակվի կոոպերատիվի կանոնադրությունը կամ արտելի պայմանագիրը։

Ինչպես ամեն մի կոոպերատիվ—կազմակերպություն, այնպես էլ կաթնակոոպը գործելու է վորոշ կանոնադրության հիման վրա։ Կանոնադրությունը տալիս է կոոպերատիվին ավելի մեծ իրավունքներ ու արտոնություններ—քան արտելին՝ պայմանագիրը։ Այսպես, օրինակ՝ կանոնադրությամբ կաթնակոոպը կամ արտելը կարող է ձեռք բերել անշարժ կայք—հող, ագարակ ձեռնարկություններ ու շենքեր. մինչդեռ սոսկ պայմանագրով ղեկավարվող կոոպերատիվը չունի շատ անգամ այդ իրավունքները։

Միապետական կարգերում թե կանոնադրությունը և թե պայմանագիրը հաստատելու համար պահանջվում է մի շարք ձևականություններ, «բարեհուսյուն» վկայականներ, զինվորական հետախուզումները, բյուրոկրատական կապրիզներ և նահանգապետի, «բարեցակամությունը», վորոնք խանգարելով կոոպերացիային՝ դժվարացնում և դանդաղեցնում էին նրա զարգացումը։

Կաթնատնտեսական արտելի կանոնադրության կամ պայմանագրի էական կետը այն է, վոր յուրաքանչյուր անդամ պարտավորվում է չվաճառել ուրիշին իր կովերի կաթը՝ վոչ հում և վոչ էլ մշակված դրությամբ: Նորակազմ կաթնակոոպն այս պայմանագրին ճշտությամբ պիտի հետևի, վորովհետև այս կետի իրագործումից է կախված գործի ամբողջ հաջողությունը: Կոոպերատիվի համար միանգամ ընդմիշտ անհանդուրժելի է իր անդամների պարտազանցությունը, ընդհանուր գործը զոհաբերելով անձնական շահերին: Կաթնակոոպի հիմնադիրներն ապա պիտի վորոշեն, գործարանի տեղը և արոտատեղերի տարածությունը. Խիստ նպատակահարմար է, վոր կաթնագործարանը հեռու չլինի ճանապարհներից և գավառի կենտրոնից, իսկ միյուս կողմից արոտատեղերը տարածված լինեն գործարանի շուրջը և 10 ք. վերստ շրջապատ ունենան: Այդ տարածության վրա պիտի պահել 300 կովից վոչ ավելի, վոր լինեն, կը բավարարի գործարանի կարիքները:

Կաթնակոոպի անդամները կովատեր գյուղացիներն են, վորոնք պարտավորվում են տալ փայավճարներ, ըստ կովերի քանակի: Բացի դրանից՝ յուրաքանչյուր անդամ, անկախ իր կովերի թվից, պարտավոր է վճարել մի փայ ևս: Սովորաբար բաժնեվճարը նշանակվում է 5-10 ռ. նախապատերազմական գներով կամ 2-3 ոսկե ռուբլի՝ յուրաքանչյուր կովի համար:

Կովերի ամբողջ կաթը հանձնվում է գործարանին: Անդամներին ավելի դյուրություն տալու համար կաթնակոոպն ունենում է մի սուրհանդակ և մի ձիատայլակ, վոր շրջում է գյուղից-գյուղ, ագարակից-ագարակ, տնից-տուն և ստանալով կաթը՝ հասցնում է գործարանին:

Բերած կաթը ստուգում և ընդունում է հատուկ խորհուրդը, վոր բաղկացած է առնվազն 3 հոգուց և ընտրվում է ընդհանուր ժողովում:

Կաթնագործարանը ղեկավարում է պատասխանատու կառավարիչը: Կաթը մշակում է կաթնատնտես—վարպետը, իսկ մնացած աշխատանքները կատարվում են բանվոր-բանվորուհիները՝

Պատրաստած կաթնամթերքները վաճառվում է միասկոոպի կամ գյուղկոոպի միջոցով, կամ բաշխում է անդամներին—գործարանին կից՝ սպառող խանութում: Բացի դրանից սպառխանութից բաց է թողնվում բոլոր անդամներին կաթնամթերքներով փոխանակած կամ առանձնապես ձեռք բերված ապրանքներ—մանուֆակտուրա, նավթ, աղ, սապոն և այլն անհրաժեշտ առարկաները:

Կոոպերատիվի անդամներից ստացած կաթի համար՝ պահվում է առանձին հաշիվներ: Սեզոնի ընթացքում յուրաքանչյուր անդամ իրավունք ունի իր հանձնած կաթի հաշվին ստանալու սպառխանութից մթերքներ, ապրանքներ և դրամ: Կաթնակոոպի զուտ oգուտը բաժանվում է տարին կամ սեզոնը վերջանալուց հետո՝ կանոնադրության և ընդհանուր ժողովի վորոշումների համաձայն:

Կաթնակոոպի անդամներն, ըստ կանոնադրության, պարտավորվում են կովի կթի և խնամքի վերաբերյալ կատարելու վորոշ հրամաններ. կաթնակոոպն իր հերթին պարտավորվում է ձեռնարկելու միջոցներ՝ ազնվացնելու կաթնատու անասուններին բարձրացնելու նրանց կաթնատվության աստիճանը: Կաթնկոոպի մասնագետը մշակում է ռացիոնալ կերակրման ընդհանուր միա-[...]որներ և տալիս է գործնական հրահանգներ:

Գործարանում կաթն ընդունվում է համաձայն յուղի տո-[...]ինանին, այս հանգամանքը ստիպում է կովատերերին առանձին ուշադրություն դարձնել կաթի վորակի ու քանակի վրա՝ հետևելով մաքրության եվ զգուշանալով կեղծիքներից:

Կաթնատնտեսական կոոպերացիայի զարգացման հետևանքով աճում է կաթի արտադրությունը և ամենաբարձր աստիճանի հասնում անասնապահությունը:

Բայց կաթնակոոպերները չեն լինի արդյունավետ ու հաստատ, յեթե գործեն ցատ-ցատ՝ միմյանցից հեռու ու կղզիացած՝ առանց միության և ընդհանուր կոոպերատիվ շինարարության:

Այնտեղ, ուր ծավալվում է կաթնատնտեսական կոոպեր-
ցիան և ստեղծում է կաթնակոոպերի խիտ ցանցը՝ կազմակերպ-
վում, հրապարակ է գալիս կոոպերատիվի միություն — **Միություն**
Այս կաթնատնտեսական կոոպերացիայի նկարագրի ընդհ-
գիծը։ Այժմ անցնենք նրա պատմական անցյալին։

Բ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Կաթնատնտեսական կոոպերացիայի հայրենիքը — **Դանիան**
Այնտեղ առաջին կաթնակոոպը հիմնել է **Շտիլլինգ-Անդերսեն**
— **1882 թվին ուղիղ 40 տարի առաջ,** Խեդինգ գյուղում։ Բա
տարվա ընթացքում փոքրիկ Դանիան ծածկվեց կաթնատնտես
կան կոոպերացիայի խիտ ցանցով։ Համագործակցության շնոր
հիվ հիմնովին հեղաշրջվում է գյուղատնտեսությունը՝ ազատվ
լով մշակման նահապետական սիստեմից և պրիմիտիվ գործիքն
րից — անցնում է ինտենսիվ տնտեսության, որի հիմքը կազմ
է անասնապահություն և կաթնատնտեսությունը։ Կոոպերացի
այս շնորհիվ Դանիայի ժողովրդական հարստությունը փրկվում
անդրովկիանյան անհավասար մրցումից։ Դանիայի կաթնատնտ
սական կոոպերացիան իր արդյունքներն է արտահանում համաշ
խա հայտնի շուկան — Մեծ-Բրիտանիա — Լոնդոն։ Դանիական յուղ
պանիրն ու ձուն հաշակվում են Յեվրոպայում։ 1913 թ. Դանի
յում գոյություն ունեյին 1177 կաթնակոոպներ, 156,000 անդա
ներով և 326 միլիոն տարեկան շրջանառությամբ։

Յուրաքանչյուր կաթնակոոպ լինելով ավտոնոմ կապված
մյուսների հետ յերկրային կուռ և ուժեղ միության միջոցով։

Դանիայի կաթնատնտեսական կոոպերացիայի արագ և հ
ջող զարգացման պատճառը հասկանալու համար, հարկավոր է
նկատի ունենալ այն պատմական դրությունը, որի ընթացքո
պատվաստվեց և ծավալվեց կոոպերացիան։

Սերգաս սեպարատորի գյուտը հիմնովին փոխեց յուղագո
ծության սիստեմը։ Սկզբում սեպարատորի գործադրությու

արկ ավելի կապիտալիստական կաթնատնտեսության, վորովհետև միջակ գյուղացու ուժից վեր եր գնել նորահնար մեքենա։ Բայց հետագայում կոոպերատիվ կազմակերպությունները ստեղծեցին գյուղացու համար մի շարք դյուրություններ, ձեռք բերելու սեպարատոր և գործադրելու իր տնտեսության մեջ։ Նոր մեքենայի տարածվելը հնարավորություն ավեց կոոպերատիվ յուղագործությանը՝ հետ մղելու և անգամ չեզոքացնելու կապիտալիստական կաթնատնտեսությունը։ Ճիշտ է, կապիտալիստական յուղագործարանն էլ օգտվում եր նույն նորագույն մեքենաներից, ինչպես կոոպերացիան, բայց հարցը նրա մեջն եր, վոր յուղի հատկությունը կախված եր, գլխավորապես կաթի վորակից, իսկ վերջինիս արտադրությունն ամբողջովին կենտրոնացած լինելով գյուղացիության ձեռքին՝ կալվածատիրական ու ֆերմերական տնտեսությունները անզոր եյին մրցել գյուղացիականի հետ։ Կապիտալիստական կաթնարանն յուղ պատրաստելու համար կաթը պիտի ստանար գյուղացիներից, իսկ կաթի այս ձեռ գնումն ուներ այն բացասական կողմը վոր գործարանը հնարավորություն չուներ ստուգելու կաթի վորակը, մինչդեռ վերջինից եր կախված յուղի հատկությունը։ Այդ տեսակետից պահանջվում է, վոր կաթի արտադրությունը և մշակումը գտնվի միևնույն անհատի կամ կազմակերպության ձեռքին։ Հենց այդ կողմից անմրցելի եր կոոպերացիան, վոր միայն կարող եր կաթնատնտեսությունը դարձնել գյուղատնտեսության խոշոր ագ-ճյուղերից մինը։ Կաթնատնտեսական կոոպերացիան արագ տեմպով **զարգացել է նաև Գերմանիայում, Իռլանդիայում, Ավստրիայում, Ավստրալիայում և ուրիշ յերկրներում։ Գերմանիայում** կաթնակոոպերացիան կազմակերպվել է հետևյալ յեղանակով, Նախ և առաջ կաթնակոոպերները հիմնել են միություններ, վորոնք տալիս են տոն և ուղղություն յուրաքանչյուր կոոպերատիվի գործունեությանը։ Հենց գործի սկզբում կոոպերատիվը ստանում է միությունից կաթնագործարանի և այլ շենքերի կատարելագործված մակետը և տեխնիկական հրահանգները։

Միության մասնագետներն են անմիջապես հսկում գործարա-
կառուցմանը. բոլոր մեքենաներն ու գործիքները, նմանապես ձ
և բերվում Միության միջոցով։ Միությունը ղեկավարում է
ողի հաշվապահությունը և գործավարությունը՝ հաճախ գործու-
ղելով այնտեղ իր հրահանգիչներին ու հաշվապահներին։ Մի-
թյան նախաձեռնությամբ կազմակերպվում են պարբերակ-
կուրսեր, դպրոցներ, զրույցներ և այլն։ Իսկ ինչ վերաբերում
կոոպերատիվի ֆինանսական դրության, սրա մասին հոգում
Միությունը՝ տրամադրելով կոոպերատիվին անհրաժեշտ դրամ-
գլուխ և այլ ռեսուրսներ։ Նորակազմ կաթնակոոպը՝ Միությ-
միջնորդությամբ, ստանում է պետական բանկից և կոոպերատ-
կազմակերպությունից յերկարատև վարկեր։ 1913 թվին Գերմ-
նիայում գործում էին 3,488 կաթնակոոպերներ 400,000-ից ա-
վելի անդամներով։

Կաթնատնտեսական կոոպերացիան զարգացած է նաև Ռու-
սաստանում։

Կոոպերատիվ կազմակերպության առաջին փորձերը կատար-
վել են 70-ական թվականների սկզբներում։ Կաթնատնտեսակ-
կոոպերացիայի պիոներ Նիկոլայ Վերեշչագինն է, վոր հաս-
րակական հիմնարկությունների և զեմստվոների օգնությամ-
բաց արեց Տվերսկիի, Յերոսլավսկիի, Նովգորոդսկիի և այլ
նահանգներում մի քանի տասնյակ պանրագործարաններ։ Բայ
շուտով կոոպերատիվ գործը անհաջողության հանդիպեց։ Կաթ-
նատնտեսությունը կրելով անհատական ձեռնարկի բնույթ
վերածվեց մասնավոր կապիտալիստական կազմակերպությա-
Այս անհաջող կոոպերատիվ փորձը հետևանք էր այն օբյեկտիվ
պայմանների, վորոնցով կաշկանդված էր Ռուսաստանի բազ-
մամիլիոն գյուղացիությունը։

Դեռևս ռուս-գյուղը չէր յուրացրել կոոպերացիան և չէ
ընդունել նրա որիենտացիան։ Միայն 20-րդ դարի սկզբում հա-
սարակական—հեղափոխական մեծ մտքի հղացումը բարեփո

ազդեցություն գործեց գյուղացիական զանգվածի վրա։ Հեռավոր
Սիբիրը դարձավ կաթնատնտեսական կոոպերատիվների և արտել-
ների օրրանը։ 1910 թվին Սիբիրում արդեն գործում էին 1,227
կոոպերատիվ պանրագործարան և յուղագործարան։ Սիբիրի յու-
ղը չնայած Դանիական յուղի հետ չէր կարող մրցել, բայց միջազ-
գային շուկաներում մեծ համբավ ձեռք բերեց։ Մոտավոր հաշվով
Սիբիրում պատրաստած յուղի 60 տոկոսը կոոպերացիայի ար-
տադրությունն էր։ Կաթնատնտեսական կոոպերացիան ամրա-
պնդելով իր հիմքերը և նվաճելով շուկան՝ կռվի դուրս յեկավ
կապիտալիստական նույնանման ձեռնարկությունների դեմ և մի
քանի տարվա ընթացքում դուրս քշեց ասպարեզից՝ նվաճելով
նրանց դիրքերը։

1907 թվին կազմակերպվեց Սիբիրի կաթնակոոպների միու-
թյունը, կապելով իր հետ 400 կաթնատնտեսական արտելներ։
1912 թվին Միության շրջանառությունը հասավ 21,000,000
ռուբլու (վոսկով)։

«Բախտը խաբուսիկ է,—գրում է Տուգան-Բարանովսկին,
դեռ ես մոտիկ անցյալում կաթնատնտեսական կոոպերացիան
վերածվում էր կապիտալիստական յուղագործարաններին, իսկ
այժմ վերջինները անզոր են մրցելու կաթնակոոպերացիայի
հետ»։

1907 թվից սկսած արտահանվում է արտասահման Սիբի-
րից յուղ և պանիր, 1915 թվին արտահանումն հասնում է իր
ռեկորդին —5.918.000 փթի, վոր միջին թվով՝ հաշված 14 ռ.
փութը հավասար է 80 միլիոն ռուբլի վոսկու. այս խոշոր գու-
մարը, վորպես յեկամուտ վերադառնում է գյուղացիությանը։

Սիբիրի սպառկոոպերացիան կատարում է իր խոշոր դերը
կաթնատնտեսական մթերքների արտահանման ու վաճառման
գործում։ Այդ տեսակետից ամենաակտիվ դեր էր խաղում Ալ-
տայսկի կոոպերատիվ միությունը։ Ինչպես այս, այնպես էլ Նո-
վոնիկոլայեվսկայի, Չերեպանովսկայի, Բիյսկու, Սեմիպալատին-
սկու, Օմսկու և Կուրգանի միությունները իրենց ֆունկցիան-

րով ինտեգրալ կոոպերատիվներ էյին։ Սպառմիությունները մրցման դուրս գալով Սիբիրի արտելների հետ և ձեռնարկելով կաթնատնտեսության 1918 թ., յուղի արտադրությունը հասցրին 32 տոկոսի։

Սպառմիությունների յերկրային կենտրոնը—"Закупсбыт" Սիբիրի արտելների հետ զուգնթաց, զբաղվելով յուղի արտադրությամբ՝ հասավ այսպիսի հետևանքների։

1916 թ. 3.213.000 փութ յուղից արտելները պատրաստեցին 2.942.000 փ.
«Закупсбыт» 240.000 փ.
1917 թ. 3.125.000 փութ « » 2.514.000 փ.
«Закупсбыт» 759.000 փ.
1918 թ. 2.280.000 փութ « » 1.800.000 փ.
«Закупсбыт» 400.000 փ. *)

Վերոհիշյալ կոոպ. միությունները գործ ունենալով արտասահմանի հետ և հարմարվելով արտաքին շուկաների կարիքներին՝ հիմնեցին օրինակելի յուղագործարաններ և հրավիրեցին գործին հմուտ մասնագետ—հրահանգիչներ։ Սիբիրի յուղը ներկայումս ազատ մրցում է Դանիական ու Ավստրիական յուղերի հետ։

Յուղի արտահանությունը 1919 թ. բոլորովին դադարեց շնորհիվ այն հանգամանքի, վոր Խորհրդային Ռուսաստանը բլոկադայի հետեվանքով կտրված էր ամբողջ աշխարհից։

1920—1921 թ.թ. կատարվեց Սիբիրում կոոպերացիայի արմատական վերակազմում. կաթնատնտեսական արտելները ու վարկոոպները լուծվելով՝ կազմակերպվեց կոոպերատիվ կենտրոն —Ցենտրոսայուզի բաժանմունք, վորն ունենալով ինտեգրալ ֆունկցիաներ կաթնատնտեսական մթերքների մշակումն ու ռեալիզացիան կատարում է իր ապպարատների միջոցով։ Ներկայումս սպառկոոպերացիան իր խիտ ցանցը փռել է Սիբիրում, ընդգրկելով ամբողջ գյուղացիությանը։ «Сибсоюз»-ը վերածվելով գյուղատնտեսական կոոպերացիայի՝ ղեկավարում է կաթնատնտեսական արտելները և գյուղկոոպները։

*) „Союз потребителей“ № 4 1923 г. „Маслодельная промышленность в Сибири“

Հետևյալ աղյուսակը պարզորեն ցույց կտա Սիբկոոպերացիայի 1922 թ. կատարած աշխատանքները.

Կազմակերպություններ	Փոխանակությունից փ.	Պարենտուրքից փ.	Ընդամենը	Տոկոսը	Յուղագործարաններ
Սպառկոոպերացիան	15800	47000	205000	45	1181
Սիբգյուղմիութ.	62000	60000	122000	26,6	Անվորոշ
	—	54000	54000	11,9	—
Ուրիշ հիմնարկներ	75000	—	75000	16,5	—
Ընդամենը	385000	161000	456000	100	—

Վերոհիշյալ թվերը ապացուցանում են, վոր յուղի արտադրությունը 1915 թ. հետ համեմատած՝ ընկել է տասն անգամ, վոր ներկա մասշտաբով, սպառկոոպերացիան յուղի արտադրության գործում բռնում է առաջին տեղը՝ մշակելով իր 1181 յուղագործարաններում, ամբողջ յուղի 45 տոկոսը։

Բայց դժբախտաբար վոչ միայն տասն անգամ է ընկել յուղի արտադրությունը, այլ և նրա վորակի անկման պատճառով դժվարացել է նրա սպառումն Մոսկվայի և Պետրոգրադի շուկաներում։ Այս հանգամանքը բացատրվում է գլխավորապես յուղագործարանների անկմամբ, վոր հետևանք է իմպերիալիստական պատերազմների։ Ներկայումս գործարանների խախտման և փչացման պատճառով՝ մի փութ յուղ ստանալու համար հարկավոր է 4—5 փութ ավելի կաթ քան առաջ։

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարելի է ասել, վոր 1922 թ. 450.000 փ. յուղ մշակելու համար կարելի է 1.350.000 փութ կաթ կամ 67.000 փութ յուղ, վորը, յեթե հաշվելու լինենք փութը 12 ռ., կստացվի 810.000 ռ. վոսկի, իսկ յեթե այս գումարի վրա յել ավելացնելու լինենք վատ յուղի պակասորդը, կստացվի 1.000.000 ռ. վոսկու գումար։ Միայն այս գումարի ստացու-

ման հնարավոր կլինէր կազմակերպելու 500-ից ավելի յուղագ… ծարաններ։

Խորհրդային Ռուսաստանում կաթնատնտեսական կոո… ցիան փորձում է ծավալվել ու խորանալ։ Գյուղատնտեսակ… արտելի գործնեությունն ըստ ամենայնի խրախուսվում է Հ… ժողկոմատի կողմից։ Ընկ. Ոսինսկին կոոպերացիային նվիր… իր հոդվածում գրում է «Գյուղատնտեսական կոոպերացիայի… նարարությունը թե քաղաքական և թե անտեսական տեսա… տից կարևորագույն խնդիր է մեզ համար։ Այս խոշոր խնդ… լուծումն հանձված է կոոպերացիայի Համառուսական կենտ… նին։ Սպառելու կամ վաճառելու համար ամենից առաջ հարկ… վոր է արտադրել, իսկ այդ գործնեության համար անհրաժ… է համախմբվել, կաթնատնտեսական արտելների շուրջը՝ քյա… գյուղացիներին՝ սովորեցնելով համագործակցության և վար… ցնելով «Միությունն ուժ է»-նշանաբանին։ Նույն իսկ սպա… ղական կոոպերացիայի կենտրոնը,—«Ցենտրոսայուզը», որ մի… չև օրս յեղել է Պարժողկոմի փոխանակման, հայթհայթման… բաշխման խոշորագույն ապպարատը՝ գիտակցելով կյանքի պ… հանջը՝ փորձում է իր շուրջը համախմբել գյուղատնտեսակ… արտադրողական բջիջները։

Մի ուրիշ հոդվածագիր տառանձնապես շեշտում է մի յեր… վույթ, որ արդեն է հանդիսանում կաթնատնտեսական արտ… ների հաջողությունը—**դա վարկի կարիքն է։** Պետբանկը իր… միջոցներով հանդերձ՝ անզոր է յեղել ոգնություն հասց… տասնյակ հազար կաթնակոոպներին, վորոնք որ ըստ-որե ա… լով ու ծավալվելով՝ դառել են գյուղատնտեսության զարգացմ… հիմնական ազդակը։

—«Կոոպերացիան ստեղծվել է ներքևից՝ գյուղացիակ… ստորին խավերից,—ասում է մի գյուղական կոոպերատոր,—… մեր պարտականությունն է խորացնել նրան վերևից ներք… **բայց այդ առանց վարկի, առանց դրամի, անկարելի յէ։»**

—«Ջեռ, Ջեռ, բացականչում է գիտողը, Թափիր վոսկե ան- Դանայի գիրկը»*)...

III

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Անդրկովկասը ներկայացնում է անասնապահության ու կաթ-…նտեսության զարգացման համար անչափ նպաստավոր մի-…ջավայր։ Կուրի, Արաքսի և Ռիոնի հովիտները կարող են արածաց-… միլիոնավոր խոշոր և մանր յեղջյուրավոր անասուններ։ Փոքր …կասյան լեռնաշղթայի լանջերի ու սարոտների անծայր արո-…տավայրերը դեռ ևս շատ սակավ են ոգտագործվել. այդ տարա-…ծությունները ծովի մակերևույթից այնքան էլ բարձր չլինելով …500—2.000 ֆուտ) ունեին անհամեմատ բարեխառն կլիմա …եղմ ձմեռ։

Այդ լայնածավալ ձմեռային արոտատեղերը «Ղշլաղները», … 2.4 միլլիոն դեսյատինի է հասնում, կարող են խնամել ան-…ար անասուններ։ Այս բարենպաստ հանգամանքը սովորեցրել …ովկասյան նոմադներին ու քոչվորներին չմտածելու կերի— … ու դարման—հավաքելու և պաշարելու մասին։

Մյուս կողմից լեռների բարձրության—սարահարթների …, ծովից 5—6000 ֆուտ դեպի վեր, վորտեղ վերջանում է …առային բուսականությունը՝ սկսվում է ալպիական ու վեր-…ալպիական խոտ ու սեզեր։ Այդ տեղերը ամառային «յայլաղ»-ներ …, վորոնք բռնում են 3.5 միլլիոն դեսյատին տարածություն։ …տեղ բուսականությունը փարթամանում է մայիսի սկզբներին …որանում է ոգոստոսի վերջերին։ Ձմեռանոցներում ամենաառաք …աշի միջին բարեխառնությունը հասնում է 25 աստիճանի և ա-…ի վորն ամառն անասունների համար դառնում է անտանելի և …աջացնում հիվանդություններ, մինչդեռ «յայլաղներում», նույն

*) "Известия„ № 141—1922 г. „По молочным артелям" …рк Креницкий.

յիզանակին, միջին բարեխառնությունը չի անցնում 12—15 տիճանից, վոր բարերար ազդեցություն ունի անասունների ռողջության վրա: Սովորաբար յերկու արոտատեղեր գտնվ են իրար կից և կազմում են մեկը մյուսի շարունակությու Այդպիսով Անդրկովկասում Ցգեւազանցում է նոմադական ու փառ.-կան անասնապահությունը, բայց պատահում է նաև սանստակյաց վիճակ, յերբ ազգաբնակչությունը սովոր չին նստակյաց կյանքին՝ բարձրանում է սարերը ամառվա ամե տաք ամիսներին, տանելով իր հետ նախիրներ ու հոտեր: Ա պիսի վայրերից են Բորչալուի և Ղարայազի տափաստաննե վորոնց վրա ապրող գյուղացիությունն հուլիս—օգոստոս ամ ներին, շոգերից փախչելով՝ հեղեղում Ղարադաղի, Լալվարի, ջանի, Մայմեխի լեռնալանջերը: «Սար-քոչելին» այնքան ս րական ու համատարած յերևույթ է Անդրկովկասում, վոր նատեղծի վոգևորությանն ու յերգի առարկա է դարձել.

Ահա գարնան հետ և շարան շարան,
Դաշտավայրերից դեպի հով սարեր.
Զգվեց սայլերի, ուղտերի քարվան.
Փախչում են շոգից թե թուրք թե հայեր...

Բայց կան Անդրկովկասում վայրեր, վորտեղ նստակյաց նասնապահությունն իր զարգացման համար ունի բոլոր նպ տավոր պայմանները: Այդ շրջանները ձգվում են Անդրկովկ հարավային լեռնատանի ստորոտներով, Ղարսի, Ախալքալաք Ալեքպոլի գավառները, նամանավանդ Ծալկան, Լոռին և Փ բակը: Գլխավորապես այս բնագավառներում զարգացել են նասնապահություն և կաթնատնտեսություն, վորոնց զարկ տվել ռուս, մոլական և գերման գաղութները:

Անդրկովկասյան անասնապահության յերկրորդ առանձ հատկությունը՝ մանր գյուղացիական բնույթն է: Յեթե հաշվի չիննենք նույն շրջաններում պատերազմից առաջ «удельны արքայապատական կալվածներին և մասնավոր ագարակատե րին պատկանյալ մի քանի տասնյակ հազար անասունները՝

ը ամբողջովին պատկանում է գյուղացիությանը:

Անդրկովկասի աշխարհագրական դիրքը և կլիմայական պայ- նները մի կողմից ու քոչվորական անասնապահության սովո- թը մյուս կողմից՝ զարգացրել են գլխավորապես մանր յեղ- րավոր անասուններ, վորոնց քանակն յերկու անգամ ավելի խոշոր յեղջյուրավորներից: Բայց խոշոր յեղջյուրավոր անա- ններն էլ հայտնի չեն իրենց միջին քաշով: Նշանավոր մաս- գետ Ա. Բալանթարի վկայությամբ, Անդրկովկասի հյուսի- ին մասում մացու անասունի կենդանի քաշը հասնում է 6 փթի, իսկ հարավային մասում 8—12 փթի: Նույն հետա- ողի կարծիքով Անդրկովկասում յեղջյուրավոր անասունները լի յե բաժանել յերկու խոշոր խմբերի. ա) տեսակներ, վո- ք տարածված են Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի ստո- ներում ու Կուր գետի ձախ ափերում և բ) տեսակներ վո- ք տարածված են Փոքր —Կովկասյան և Հայկական լեռնաս- նում: Առաջին տեսակները տարբերվում են իրենց փոքր ան- մաչափ մարմնով, սևամորթով և կաթնապակաս հատկություն- րով: Յերկրորդը—հայտնի են իրենց խոշոր մարմնով, գեղեցիկ զմվածքով, կարմրամորթ և կաթնատու հատկություններով: վ անասուն է համարվում այն տեսակը, վորի աչքերի շուրջը ն մթնագույն շրջագծեր: Այդ տեսակի լավագույն սերունդը րաբաղի ու Ղազախի անասուններն են.

Բացի վերոհիշյալ տեսակներից Անդրկովկասում կան Ռու- աստանից, սեկտանտների բերած ռուսական ու չերկեզական, նչպես Արևմտյան յերկրների բերած գերման գաղութական, լանդական, շվեյցարական և սեմենթալական ցեղեր. բայց վեր- նները չկարողանալով դիմանալ՝ Անդրկովկասի կլիմայական ու խարհագրական պայմաններին՝ գլխովին վոչնչացան: Բացի դ յեղջյուրավոր անասուններից մեր յերկրում կան նաև գո- շ-մատակներ, վորոնք կաթնատու և յուղատ են (4—7%)

Մանր-յեղջյուրավոր անասունները՝ Ազ. Բալանթարը բա- նել է 13 տեսակի, վորոնցից նշանավոր են ա) Մազեխր-խո- ը ու կաթնատու վոչխար է տարածված է Ղարսի, Յերևանի, մասամբ Բաթումի ու Թիֆլիսի նահանգներում: բ) Ղարաբա-

դը,—մսացու և սակավակիթ տարածված է Գանձակի նահա
գում, գ) Բուլախ—տարածված է Գանձակի և Թիֆլիսի նահան
ների արևմտյան մասում և մասամբ էլ Յերևանի և Ղարսի շ
ջաններում. դ) Թուշի—որ Անդրկովկասում համարվում է լ
բրդոտ, մսատու և կաթնատու ոչխար և տարածված է Թիֆ
սի նահանգում, Նրա կաթից պատրաստվում է հայտնի Թուշ
պանիրը: ե) Լեզգու բրդի կողմից բռնում է յերկրորդ տեղը ի
միսն ու կաթը լավ հատկություն չունին: Տարածված է կա
ձախ ափերում և լեռների ստորոտներում. Հայտնի է նաև
Մերինոս ոչխար, սպիտակ բրդով, անպոչ և տարածված է գլ
վորապես Բաթումի նահանգում: *)

Յեղջյուրավոր անասուններ			Յերկու սեռի 100 բնակչին		
Տարի	Խոշոր	Մանր	Խոշոր	Մանր	Ընդհանուր
1899	2534518	6709670			
1907	3353582	7189185	64	137	100
1911	3996192	6133600	62	95	78
1912	4178400	7022315	57	95	76
1915	3278147	6944180	44	90	67

Այս աղյուսակից յերևում է, որ յերբ մանր յեղջյուրավ
անասունների քանակը մնում է նույնը՝ խոշոր յեղջյուրավ
անասունները շատանում են և այն էլ առանձնապես այն տ
րիներին, յերբ զարգանում է կաթնատնտեսությունն արտ
դրելով հազարավոր փթերով շվեյցարական պանիր և սերդա
յուղ:

Այժմ անցնենք Անդրկովկասի անասնապահության վիճ
կագրությանը. համադրության մեջ են մի քանի տարվա թվ
կան տվյալները: **)

1916 թ. գյուղատնտեսական վիճակագրությունը ցույց
տալիս, որ խոշոր յեղջյուրավոր անասունների 30 տոկո
ավելին կազմում են կովեր ու մատակներ, որ միջին թվով 1
բնակչին հասնում է 20 գլուխ կթան՝ որով գնում են տիր
բարեկեցիկ պայմանների մեջ:

*) Калантар. Состояние Скотоводства в Закавказье

**) Экономическая Жизнь Закавказья № 1 1922 г.

1915 թ. խոշոր յեղջյուրավոր անասունների պակասումն
ցատրվում է համաշխարհային պատերազմի հետևանքներով,
ուրքական ներխուժումն ռուսական նախկին սահմաններից
յս կողմ ոչնչացնում է Բասենի, Զըդրի և Կաղզվանի հարյուր
արների հասնող ամենաընտիր կաթնատու անասունները:

Անդրկովկասի ազգաբնակչությունն յեղջյուրավոր անասուն-
ը ունենալու տեսակետից գտնվում էր պատերազմից առաջ
մենաբարեհաջող վիճակում, յեթե ի նկատի ունենանք այն
նգամանքը, վոր միայն Յեվրոպական մի քանի յերկրներում
անիայում, Ռումինիայում՝ 100 բնակչին հասնում է 62—69 գլ-
ուխ անասուն, իսկ Ռուսաստանի և Սիբիրի վորոշ սահմաննե-
ում, այս թվերը ավելի բարձր են:

Սորև բերված աղյուսակը ցույց է տալիս թե Անդրկով-
ասի զանազան շրջաններում, պատերազմից առաջ, վորքան են
տարածված յեղել յեղջյուրավոր անասունները: *)

Նահանգներ	Ազգաբնակ.	Յեղջ. անասուններ		100 բնակչին	
Շրջաններ	Թիվը	Խոշոր	Մանր	Խոշոր	Մանր
1. Բաքու	1081179	506079	822911	47	76
2. Բաթումի	178144	82493	85895	46	48
3. Դաղստանի	667718	346130	1756596	52	293
4. Գանձակի	1147767	840913	1068607	74	93
5. Զաքաթալի	81417	82356	76880	101	94
6. Ղարսի	382745	532325	489691	139	128
7. Քութայիս	983170	317515	139228	32	14
8. Սուխումի	181947	82567	81938	45	45
9. Թիֆլիսի	1395887	789452	1660237	60	120
10. Սև ծովի	176999	33059	21474	18	89
11. Յերևանի	1071560	464030	818868	43	12
Ընդամենը	1361633	417840	7022315	57	95

*) Кавказский календарь 1912 г.

Դիտելով աղյուսակը՝ տեսնում ենք, վոր Անդրկովկա
զանազան շրջաններին հասնում է տարբեր քանակի մանր
խոշոր յեղջյուրավոր անասուններ. խոշոր անասունների քանա
մեծ է կամ հավասար Ղարսի, Զաքաթալայի, Դաղստանի շրջա
ներում և Սև ծովի ափերում յեղած անասունների քանակի
մի խոսքով այն վայրերում, վորոնք ունեն մեղմ ու բարեխառ
կլիմա և արոտատեղեր։ Ընդհակառակն, Անդրկովկասի արևել
մասերում տարածված են մանր յեղջյուրավոր անասուններ։

Վիճակագրությունը վերաբերում է նախապատերազմյա
շրջանին։ Պատերազմի ընթացքում, շնորհիվ մասցվի խիստ պա-
հանջին, եպիդեմիաների ավերումներին, յերկարատև սովերին
թշնամու ներխուժումներին, անասնապահությունը կրեց շշմեցու-
ցիչ հետևանքներ։ 1918 թ. և 20 թ. թյուրքական արշավանքնե-
րի հետևանքով՝ անասնապահությունը տուժեց՝ Շիրակում—8
տոկոսով, Փամբակում—95 տոկոսով, Լոռում—30 տոկոսով, Ղա-
զախում—40 տոկոս և ընդհանրապես Հայաստանում—70 տոկո-
սով։

Անասնապահությունն յերբ կրում է **նոմադական յեվ քոչ-
վորական** բնույթ շատ քիչ նշանակություն է տալիս **կերի բա-
վարար պաշարի պատրաստմանը**՝ բավականանալով անծայր արո-
տատեղերի, ձմեռային ուղեվանների մնացորդներից և դարմանից
վոր ստացվում է հացաբույսերի մշակույթից։ Այսպիսի պայ-
մաններում ռացիոնալ անասնապահության մասին խոսք անգամ
չի՝ կարող լինել, գյուղացու անասունները միշտ էլ յենթարկված
են սովին ու համաճարակի սպառնալիքներին։

Անասնապահությունն, յերբ կրում, է **նստակյաց բնույթ**
խոշոր նշանակություն է տալիս կերի, պաշարի ամբարմանը
բայց գյուղատնտեսության անկյալ վիճակը դնում է անասուն-
ներին անապահով դրության մեջ։

Այդպիսով կերի հարցն ընդունելով սուր կերպարանք՝ դարձ-

ել է անասնապահության անկումը սովորական յերևույթ և
աստում է՝ ինֆեկցիոն հիվանդությունների տարածմանը։
իբիրախտն ու տուբերկուլյոզը, քոսը ու մալարիան և այլ սուր
ություններ՝ հնարավորություն չեն տալիս անասնապահության
անոնավոր զարգացմանը։

Վերոհիշյալ տնտեսա-վիճակագրական համառոտ ակնարկը
յած մեզ շեղեց բուն նյութից—կաթնատնտեսական կոոպե-
ցիայից, բայց մեր յերկրի անասնապահության ներկա դրու-
ան անալիզը ծանոթացրեց ընթերցողին այն պայմանների
, վորոնցով շրջապատված է անասնապահությունն ընդհան-
պես և կաթնատնտեսությունը մասնավորապես—**Անդրկով-**
սում։

IV

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Անդրկովկասի աշխարհագրական և կլիմայական պայման-
րը չափազանց նպաստավոր են ռացիոնալ կաթնատնտ. զար-
ցման համար։ 1896 թ. Թիֆլիսի և 1923 թ. համամիութենական
ղատն. ցուցահանդեսները էքսպերտիզի յենթարկելով Ռուսաս-
քին նահանգների և Անդրկովկասում պատրաստած շվեյցա-
կան պանիրների տեսակները գտան, վոր Անդրկովկասինն ունի
ել բարձր վորակ, մեր պատրաստած պանրագունդը (4-5 փ.)
ամուր կեղևով, ախորժելի հոտով և համով, հասուն ու սեղմ
քով վոչնչով հետ չէ Շվեյցարիայի լավագույն կաթնագոր-
րաններում պատրաստած նույն տեսակի պանիրներից։

Անդրկովկասում, ռացիոնալ գյուղատնտեսության պիոները
ղ **կապիտալիստական տնտեսությունը**։ Դեռևս 60-ա-
ն թվականներին առաջին կաթնատնտես-նախաձեռնողները
ացին **Բորչալուի** գավառի լեռնային մասերում—Ծալկայի,
ու, Բաշքիչեթի և **Ղարաղաչի** շրջաններում։ Այդ կաթնատըն-
ները **գերման կոլոնիստներ** էին, վորոնք հետագայում
եցին Ծալկայի տափաստանում **Ալեքսանդրհիլֆ գյուղը**

և ապա Քոն-կուչենջակը և նրա շվեյցարիայի վարպետ Ամեննեռեգիրը — բանալով սեփական պանրագործարաններ։

Համարյա 30 տարի շարունակ ռուսաց կաթնատնտեսական կղզիացած գործունեությունը չունեցավ հետևանքներ և գ[…] չավեց ռացիոնալ կաթնատնտեսությանը՝ չնայած կաթնագործարանները աշխատում էին շատ հաջող արտադրելով 5000 ավելի միայն շվեյցարական պանիր։

Բայց 90-ական թվականներին, առաջ չեկան տեղացի կաթնատնտեսներ, փորձեր հետևելով կալվածատերերի օրինակին հիմնադրին կաթնագործարաններ. Չիչկին, Շագինով, Մելիք-Բաբաջյան, Ռադիոնով, Կոստրիկով, Բախչինյան և ուրիշները 1[…] թ.-1911 թ. գործում էին 73 պանրագործարաններ, գլխավորապես Լոռում, Ախալքալաքում և Կարսի ու Գանձակի նահանգներում։

Գործարանների մեծ մասը պատկանում էր կապիտալիստ կաթնատնտեսներին, օրինակ 34-ը շվեյցարացիներին, 23-ը մոլոկաններին և 16-ը գերմանացիներին, հայերին և թուրքերին։ Կոոպերացիան դեռ չէր սաղմնավորել գյուղատնտեսական խոշոր ճյուղը։ Ամբողջ յերկրում 1912 թ. գործում էին միայն 6 կաթնակոոպեր։ Կաթնատնտեսական կոոպերացիայի զարգացումն և դանդաղ ընթացքը հետևանք էր մեր գյուղացիության անծայր հետամնացության, նյութական միջոցների և մասնագետ-կաթնատնտեսների բացակայության։

Ամենահին և անդրանիկ կաթնակոոպը գործում էր Գառաղաջի ուեզդում՝ Ծալկայի, Ալեքսանդերսհիլֆ գերմանական գաղութում։ Այս գործարանը հիմնված էր դեռ ևս 1[…] թվին, համայնքի նախաձեռնությամբ և կառավարության 2.[…] ր. յերկարատև վարկով։ Կաթնակոոպը գործում էր արտելային սկզբունքով և 1914 թ. ուներ 100 անդամ՝ արտադրելով տարեկան 3,000 փ. շվեյցարական պանիր, 600 փութ կարագ յ[…] 1,000 փ. ռաժան, 1,600 ժաժիկ (ТВОРОГ) և 150 փ. հասարակ յուղ։

Կաթնատնտեսական մթերքներն արտահանվում էին Թիֆլիս։

1901 թ., Վարանցովկա գյուղում, Ռադիոնովի և Կոնստրիկինի նախաձեռնությամբ հիմնվեց կաթնատնտեսական արտել, որ հետագայում բաժանվեց յերկուսի։ Ռադիոնովի արտելն ուներ 11 անդամ և արտադրում էր 110 փ. շվեյցարական պանիր, 185 փ. կարագ յուղ և 350 փ. չիչիլ. իսկ Կոստրիկովի արտելը, որ ուներ 13 անդամ և արտադրում էր 600 փ. շվեյցարական պանիր, 150—200 փ. կարագ յուղ և 150 փ. չիչիլ պանիր։ 1903 թ. Վարանցովկում հիմնվեց յեղբայրք Բիրկնինի արտելը, որ ուներ 15 անդամ և արտադրում էր 1500 փ. յուղ և 350 փ. չիչիլ։

1912 թ. վրաց գյուղատնտեսական ընկերության նախաձեռնությամբ հիմնվեց Թիֆլիսից 12 վերստի վրա գտնվող Լիլո գյուղում կաթնատնտեսական արտել, որ 1914 թ. ուներ 125 անդամ և 338 կով։ Արտելն արտադրում էր միայն թարմ կաթ, որ սպառվում էր Թիֆլիսում։ 1912 թ. վաճառել է 1400 փութ, 1913 թ. 3650 փ. և 1914.—3480 փութ կաթ։

Լոռվա Գյուղացիության զբաղմունքի առաջնակարգ ճյուղը անասնապահությունն է, իսկ մյուս պարապմունքները միայն յերկրորդական նշանակություն ունեն։

Յեթե վերցնելու լինենք Լոռվա հողային տվյալները, հիշենելով և գյուղացիության 1922—1923 թ.թ. ունեցած անասունների թվի խոշոր տարբերությունը, դարձյալ պետք է ընդունենք, որ անասնապահությունը Լոռում կազմում է գյուղատնտեսության հիմքը։

Լոռին ունի մոտ 33,000 դես. վարելահող, 32,500 դես. խոտհարք և 85,000 դես. արոտահողի։ Վերջին թվի մեջ չեն մտնում անտառի ձմերանոցային մասերը։

Ըստ վիճակագրական տեղեկությունների՝ 1923 թ. այդ շրջանի գյուղացիությունն ուներ 65.000 գլուխ խոշոր յեղջյուրավոր և մոտ 60.000 մանր անասուն, մինչդեռ 1922 թ. ունեցել է մոտ 40,000 խոշոր և նույն չափ էլ մանր անասուն։

Ազգաբնակչության թիվն է մոտ 65,000 շունչ, չհաշվել գաղթականությունը՝ ուրեմն, յուրաքանչյուր շնչին միջին հաշվով ընկնում է մեկ ու կես դես. արոտատեղի ու խոտհարք մյուս կողմից մեկ խոշոր ու մեկ փոքր անասուն։

Մինչև խորհրդայնացումը՝ Լոռում գյուղական տնտեսությունը տարվել է մասնավոր-անհատական ձևով. առերևույթ համայնական ձևով տնտեսություններ վարել են մի քանի մոլական գյուղեր, բայց նրանք ըստ էության վոչնչով չեն տարբերվել անհատական, մասնավոր տնտեսություններից։ Յեղել Լոռում և խոշոր կալվածատիրական տնտեսություններ, ինչպես օրինակ՝ Գոտլիբի, Կուչենբախի, Մոսինովի և այլն, վորոնք գյուղացիությանը վոչ մի օգուտ չեն տվել, բացի վնասից։

Խորհրդային իշխանության հաստատումով հիմք է դրվել մեկ նոր տեսակի տնտեսության (իհարկե վոչ պարտադիր), վոր ահագին հեղաշրջում է առաջ բերել Լոռվա գյուղական տնտեսության մեջ։ Դա արտելների, ընկերությունների միջոցով տնտեսություն վարելն է, վորի արտադրական ուժն ավելի է քան մասնավոր-անհատական տնտեսության. այդ ապացուցվել է վոչ միայն Խորհրդային Ռուսաստանում, այլ և Յեվրոպայի բուրժուական մի քանի պետություններում։

Խոր ըմբռնելով այդ ձևի տնտեսության օգտավետ լինելը Լոռվա գիտակից գյուղացիներից արդեն կազմվել են 7 կաթնատնտեսական և 4 հողագործական-անասնապահական արտելներ ու յերկու կոմմունաներ, վորոնք միայն մեկ տարվա կյանք ունեն և վորոնք գործնականով ապացուցել են իրանց կենսունակությունը և արագ քայլերով ամրապնդում են արտելային **տնտեսության հիմքերը։**

Վորոնցովկայի շրջանում 1923 թ. վերակազմվել ու գործում են հետևյալ կաթնատնտեսական արտելները։

I **Ղորա-Խսայի**—«Беднота»-ն, վորին միացել են 15 տնտեսություն 102 շունչ (57 տղամարդ և 45 կինարմատ). ունի 6[illegible] կով, 47 երինջ, 2 բուղա, 22 ձի, 53 վոչխար, 2 խոտհնձող մեքենա և այլն։ Արտելի կանոնադրությունն հաստատված է Հող-ժողկոմի և Հայկոոպի կողմից։

II **Բլագոդարնոյե.**—«Рассвет»-ն, վորին միացել են 6 տընտեսություն, 57 շունչ (27 տղամարդ և 30 կինարմատ). ունի 13 կով, 34 երինջ, 11 ձի, 34 վոչխար և հինգ արտադրող բա[illegible]աներ։ Արտելի կանոնադրությունը հաստատված է և ունի վար[illegible]ություն։

III **Բոգդանովի.**—«Интернационал»-ն, վորին միացել են 25 տնտեսություն, 161 շունչ. ունի 299 կով, 166 երինջ, 35 յեզ, 52 ձի, 8 արտադրող բուղա, 25 վոչխար, 18 խոտ հնձող մեքենա, 15 այլ գյուղատնտեսական գործիքներ։ Արտելը վերակազմված է ու կանոնադրությունը հաստատված է։

IV **Վորոնցովկայի.**—«Крестьянин» պանրագործական արտելը կազմակերպված է 1923 թ, դեկտեմբերի 13-ին։ Իսկ կանոնադրությունը ներկայացված ու հաստատված է նույն թվին դեկտեմբերի 17 ին։ Արտելին միացել են 26 ընտանիք, վորոնց տնտեսական դրության մասին վիճակագրական տվյալներ չկան։

V **Վորոնցովկայի.**— «Заря» արտելի կանոնադրությունը հաստատված է 1923 թ. նոյեմբերի 21 ին և անդամագրվել են 12 ընտանիք տնտեսություն 64 շունչ, վորոնք ունին 50 լծկան անասուն, 90 կով, 80 վոչխար, 40 մեղվի փեթակ, 12 յերկրագործական մեքենաներ և այլն։

Ձեռքիս տակ յեղած տեղեկությունների համաձայն Վորոնցովկայի շրջանի հինգ կաթնատնտեսական արտելներին միացել են 84 ընտանիք կամ 287 շունչ, վոր ունեն 506 կով, 297 երինջ, 85 յեզ, 15 արտադրող, 95 ձի, 192 վոչխար և այլն։

Այսպիսով միջին թվով մի արտելին հասնում է մոտ 17 ընտանիք կամ 57 շունչ, վոր ունին միջին թվով մոտ 101 կով, 49 երինջ, 17 յեզ, 3 արտադրող, 19 ձի, 38 վոչխար և ուրիշ կենդանի ու մեռյալ ինվենտար։

Յեղած արտելների մեջ աչքի յեն ընկնում «Զարյա», «Ինտերնացիոնալ», «Բեդնոտա», «Ռասսվետ» և մյուս կաթնատըն-

տեսական արտելները, վորոնք առաջին հետաքրքրություն առաջ բերել թե Անդրկովկասի մեծ քաղաքներում և թե Մ... կվայի ցուցահանդեսում իրանց պատրաստած կաթնատնտե... կան մթերքներով, մանավանդ շվեյցարական պանրով։

Յոթը կաթնատնտեսական արտելների 1923 թ. արտադր... կան ուժը կարելի յե պատկերացնել հետևյալ թվերով.—շվեյց... րական պանիր—3,500 փութ, չանախ կամ թուշի պանիր 1,000 փ. և կարագ, յուղ 500 փութ։ Այդ արտելներն ու... սիմենթալ, և մետիս (խառնուրդ) կովեր։ Ամենամե... արտելն ուներ 299, ամենաթույլը 54 կթի կով։

Տեղային Հողբաժինն ընդառաջ գնալով այդ արտելներ... տրամադրել է նրանցից մի քանիսին, ըստ պահանջի, լրացուցի... հողամասեր, արոտատեղի ու խոտհարք, և աջակցել է բոլ... արտելների կազմակերպմանը։

1923 թ. հաշվետվության տարին լրանալով՝ այդ արտ... ների համար պահանջ է դառել յերկու գլխավոր խնդիր, վ... առանց կենտրոնի—Հողժողկոմատի օժանդակության նրանք... տեղային հողօրգաններն անկարող են լուծել։

Առաջին—ազնվացնել անասունների ցեղը՝ կովեր և ցուլ... ձեռք բերելով և վարել կանոնավոր անասնապահություն գոր... և յերկրորդ—ձեռք բերել նոր հիմք դրած կաթնատնտեսակ... գործարանների համար ինվենտար։

Այդ նույն պահանջն զգում են և մյուս կաթնատնտեսակ... «ընկերությունները», վորոնք թեպետ արտելային ձևով չեն տ... նում իրանց տնտեսությունները, բայց նրանք տեսնելով գոր... նականի մեջ խորհրդային իշխանության ցույց տված օժա... դակությունը, թեպետ սահմանափակ, իրանք ևս պատրաստ... կամություն են հայտնել կազմելու արտելներ։

Վորպեսզի ուժեղացնենք ու լավ հիմքերի վրա դնենք ա... դեն իսկ կազմված արտելները, վորպեսզի նոր արտելներ կա... մակերպելուն զարկ տանք և վորպեսզի վերջիններիս արդյունա... պահանջը բավարարած լինենք, անհրաժեշտ է կազմակերպ...

...տական սուբսիդիա վարկի ձևով. սա միակ յելքը։ Արտել... ...ի և անասնապահների այդ պահանջը պետք է լուծվի հար... ...ային կարգով, յեթե մենք ցանկանում ենք Խորհրդային ...յաստանի յեզակի անկյունում անասնապահությունն ու կաթ... ...նտեսությունը դնել օրինակելի վիճակում ու արտադրական ...ը հասցնել մաքսիմում չափերի։

Համաշխարհային պատերազմի առաջին տարիներին Լոռու ...ֆասանում զարգացավ և ծավալվեց կաթնատնտեսական ...պերացիան 1917 թ. գործում էին 11 արտելներ, վորոնք ...վում էին Վորոնցովկայում՝ 4 և ունեյին 3000 անդամ, Նո... -Միխայլովկում 1 արտել—60 անդամ, Պրիվոլնոյի 1 արտել— ...0 անդամ, Ջալալ-Օղլու Սլաբոդկայում 1 արտել—120 անդամ, ...ո-Ալեքսանդրովկայում 1 արտել—80 անդամ, Նովո-Պակրով... ...ում 1 արտել—130 անդամ։ Սայուղ-Բուլաղում 1 արտել—40 ...դամ և Նովո-Նիկոլայեվկում 1 արտել—85 անդամ։ 1919 թ. ...տելները միանալով կազմեցին՝ Միություն, վոր զբաղված եր ...թնատնտեսական մթերքների արտահանությամբ, վոր նույն ...ում հասնում եր 5,000 փ. յուղի 15,000 փ. շվեյցարական ...նիր։ Լոռում կաթնատնտեսության արագ զարգացումը բա... ...րվում է. ա) պատերազմի թատերաբեմի հեռավորությունը, ...Տիֆլիսի շուկայի մոտիկ կայը և գ) ռուս գյուղացիության ...կուլտուրական զարգացման բարձր մակարդակը։ Բայց պատե... ...զմի ընդացքում ընթհանրապես խիստ ուժեց կաթնատնտե... ...կան գործը Անդրկովկասի-ուրիշ վայրերում դեռևս 1915 թ., ...րսի շրջանի բոլոր պանրագործարաններն ու արտելները թա... ...նվեցին ու ավերվեցին։ 1918 թ. թյուրքական արշավանքնե... ...ժամանակ բավականին վնասվեցին Բորչալու գավառի Բաշ... ...կենտի կաթնագործարանը և բոլորովին վոչնչացավ Ուզունի ...պանրագործարանը և ուրիշները։

Անդրկովկասի կաթնատնտեսությունը, դեռևս 1990 թ. հա... ...ձայն Ալ. Քալանթարի տված տեղեկությունների, արտադրում ...12,000 փ. շվեյցարական պանիր, իսկ 1911 թ. գործող 30—

յուղա և 73—պանրագործարաններն արտադրում էին 75,000 միայն շվեյցարական պանիր: Բացի շվեյցարական պանրից ... կաթնագործարաններում և գյուղական տնտեսություններ... պատրաստվում էին տեղական պանիրներ «Ոսի», Թուշ... «Ղարաբաղի», «Իմերեթինի», Մինգրելի և «Չեչիլ»։ որոնց ամենալավ տեսակը համարվում է «Թուշի» և «Ոսի» պանիրը...

Պատերազմից առաջ Անդրկովկասում տեղական պանրի ... տադրությունը հասնում էր հարյուր հազար փթերի:

Շվեյցարական պանիրն ամբողջովին արտահանվում էր Ռ... սաստանի ներքին նահանգները: Անդրկովկասի պանրի մրց... թյան շնորհիվ պակասեց Շվեյցարիայից նույնանման պա... ներմուծումը, որ հասնում էր 20 հազար փթի:

Անդրկովկասում, ավագ մասնագետ Ալ. Թամամշյանի ... կուցման համաձայն, 1910—1913 թ. թ., պատերազմի նախ... յակում, կաթնատնտեսության և պանրագործության զարգաց... մը կանգ էր առել:

1910 թ. արտադրվել է 72.167 փ. շվեյցարական պանիր
1911 » » 69.824 » » »
1912 » » 74.456 » » »
1913 » » 72.071 » » »

Միայն Բորչալվի գավառում արտադրվել է 1910 ... 44,605 փութ շվեյցարական պանիր կամ 65 տոկոսը, 1911 թ. ... 42,634 փ. կամ 62 տոկոսը, 1912 թ.—45,558 փ. կամ 66 տո... սը և 1913 թ.—42,756 փ. կամ 64 տոկոսը:

Կարսի շրջանում—արտադրվել է 1910 թ. 21,300 փ. կ... 45 տոկոսը 1911 թ. 23,193 փ. կամ 47 տոկոսը, 1912 թ... 26.368 փ. կամ 48 տոկոսը և 1913 թ. 25,537 փ. կամ 48 ... կոսը:

Գանձակի նահանգում 1910 թ. աշխատում էին 5 պ... րագործարան—2590 փութ պանիր, 1911 թ.—4 գործ. 770 ... 1912 թ.—3 գործ. 310 փ. և 1913 թ.—3 գործ. 313 փութ շվ... ցարական պանիր: Կաթնատնտեսության անկումը Գանձակի ...

...նգում վերագրվում է գլխավորապես սակավահողությանը, որի ...տաճառով տարեց-տարի կրճատվում էր արոտատեղերի տա... ...ծությունը: Բացի դրանից շվեյցարական պանրի արտադրու... ...թյան նվազման գլխավոր պատճառն այն հանգամանքն էր, որ ...թնատնտեսության արագ զարգացման հետ զուգընթաց՝ չա... ...ջագինեց նաև տեխնիկան, որի պրիմիտիվ միջոցները, հնա... ...վորությունը չէին տալիս կապիտալիստական կաթնատնտե... ...թյան ուժեղացմանը: Առանձնապես շվեյցարական պանրի ...տրաստումը պահանջում է կատարելագործված տեխնիկա և ...տակ ու մանրակրկիտ աշխատանք:

Կաթնատնտեսության աննորմալ զարգացումը բացատրվում ...այն հանգամանքով, որ դեռևս կոոպերացիան չէր խորացել ...յուղատնտեսական այս ճյուղում: Համագործակցությունը բա... ...հանջող պայմաններում հրաշքներ է կատարում: Հիշենք Դան... ...ն և Սիբիրը—կաթնատնտեսական կոոպերացիայի օջախները:

Անդրկովկասը հանդիսանալով անասնապահության օրրան՝ ...րող է դառնալ կաթնատնտեսական կոոպերացիայի համար մի ...ր Դանիա, յեթե խորհրդային կառավարությունը նույն թա... ...ով տանի գյուղատնտեսության զարգացումը:

Խորհրդային իրավակարգում կաթնատնտեսական կոոպե... ...ցիայի շինարարությունը համարվելով առաջնակարգ խնդիր՝ ...րավելու յե պետական բոլոր հիմնարկների ուշադրությունը և ...անալու յե նրանցից ամեն տեսակի օգնություն:

Կաթնատնտեսական կոոպերացիան ունի մեծ ապագա ...նդրկովկասում:

ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

Կաթնատնտեսության զարգացումը որգանապես կապված ...անասնապահության զարգացման հետ: Բայց հարցն նրանումն է ...ե արդյոք հարկավոր է վարել տալ հին պրիոմներով ու սխտե... ...ով գյուղատնտեսական այդ ճյուղին. Նրա քանակի և որակի ...տեսակետից: Անդրկովկասում կաթնատու անասունների խոշոր

տոկոսը դեռ ևս գտնվում է անկազմակերպ ու հատնտեսակ[...] գյուղացիության ձեռքին: Արտադրած կաթի մի մասը, վոր[...] յուղ և պանիր, հանվում են ներքին շուկաներ: Բայց դժբախ[...]բար մեր յերկրի կաթնատնտեսական մթերքների վորակը ց[...] գովասանքից, վորովհետև պատրաստվում են ավելի քան նահ[...] պետական յեղանակով:

Հայաստանի յուղի և պանրի արտադրությունը կատար[...] լագործելու և նրանով մեր ներքին շուկան նվաճելու համ[...] հարկավոր են. ա) անասնապահությունը բարձրացնել վոչ [...] նախապատերազմական ստանդարտին, այլև նրանից բարձր և [...] ցիոնալ սիստեմով. բ) ուժեղացնել կաթի արտադրությու[...] գ) նպաստել կաթնատնտեսական ու յուղագործական կոոպեր[...] ցիայի զարգացմանը:

Պետք է առանց վերապահումների ասել, վոր անասուննե[...] ազնվացման տեսակետից մենք վոչինչ չենք արել: Ցեթե ավել[...] ասեմ, անասնապահության ուսումնասիրության խնդրում վեր[...] 3-4 տարիների ընթացքում մենք մատը մատին չենք խփել:

Հայաստանի տնտեսական ու աշխարհագրական բազմազան[...] թյան, հաղորդակցական միջոցների բացակայության և ագ[...] գրական կուլտուրայի տարբերության տեսակետից յելնել[...] կաթնատնտեսությունը վորպես ժողովրդական տնտեսութ[...] մշտական աղբյուր՝ կանոնավոր չի կազմակերպված: Կաթը, վ[...] պես թարմ կենսական կարևորագույն մթերք իր սպառման [...] մար չի նվաճել մեր յերկրի ներքին շուկան: Կաթնատնտե[...] թյունն արդյունք կարող է տալ միայն այն դեպքում, յ[...] կաթը մշակվի ու դարձվի գլխավորապես շվեյցարական պանի[...] սերդատի յուղ:

Միայն այժմ կազմակերպվում է կաթի տեղափոխությ[...] քաղաք՝ կոոպերացիայի միջոցով. 1922 թ. Թիֆլիսի բ[...] կոոպը կարողացավ ներմուծել քաղաք որական մի քանի հարյ[...] փութ կաթ և իր խանութների միջոցով բաժանել սպառողներ[...] կաթնատնտեսական մթերքների սպառումն ու բաշխումն կոո[...]

[...]ցիայի միջոցով դեռ ևս նոր է սկսել, նրա փորձը դեռևս շատ [...]նուկ է ու կիսակազմակերպ:

Կաթի և յուղի կազմակերպված վաճառումն առաջ է բե[...] [...]ու գյուղացիության մեջ շահագրգռումն և հետաքրքրություն [...]ի կոոպերացիան: Այս բանն ապացուցելու համար, վորպես [...]րոշ փաստ, կարող է ծառայել գյուղացիական տնտեսության [...]լյուցիան Դանիայում:

Յերբ 70-ական թվականներին փոքրիկ Դանիան, Գերմա[...]կան պատերազմից ավերվելով, իր տնտեսական փրկությունը [...]ավ կոոպերացիայի մեջ: Դրանով ազատվեց դանիական գյու[...]ցիությունը՝ քայքայումից:

Կաթնատնտեսական կոոպերացիայի շնորհիվ բարելավվեց [...]անասնապահությունը, կատարելագործվեց անասունների կերն [...]խնամքը և կուլտուրական հեղաշրջման յենթարկվեց գյուղա[...]տնտեսությունը: Ներկայումս Դանիան կոոպերացիայի օրրանն է, [...]ի գյուղացիությունն ամբողջովին կոոպերացված է:

Հայաստանի գյուղական տնտեսության պայմաններն նույն [...], ինչ վոր հիսուն տարի առաջ Դանիայում:

Մեր յերկիրն էլ տնտեսապես քայքայված, և ինչպես այն [...]ժամանակ Դանիան, մեր գյուղատնտեսությունն էլ տարվում է [...]հապետական սիստեմով ու պրիմիտիվ միջոցներով, ինչպես [...]ս դար առաջ—Դանիայումն էր:

Հայաստանի գյուղատնտեսության բարձրացման համար [...]րագույն հնարներ հարկավոր չեն: Մեր գյուղատնտեսության [...]ղաշրջման գործում ամենախոշոր դերը կոոպերացիային է վե[...]պահված: Իսկ կոոպերացիան լիակատար չափով գյուղատնտե[...]ության մեջ կիրառելու համար մենք պետք է համա[...]ությամբ իրագործենք ընկեր Լենինի առաջարկը—«Մեզ [...]ում է մի բան, մեր ազգաբնակչությանն այնքան «քաղաքա[...]ել» դարձնենք, վոր նա հասկանա կոոպերացիային մասսա[...]կանորեն մասնակցելու բոլոր օգուտները յեվ գլուխ բերի [...]ը խնդիրը»:

XIX

ՀԱՅԿՈՈՊԸ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ՅԵՌԱՄՅԱԿՈՒՄ

(Պատմական ակնարկներ)

I.

ՌԱԶՄԱ-ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Խորհրդայնացման նախորյակին Հայաստանում գործ եյին 286 կոոպերատիվներ, որոնք ընդգրկում եյին 111,957 ան դամ—սպառողներ: Կոոպերատիվներն իրանց անդամներով ըս գավառների բաժանվում եյին հետևյալ կարգով:

Ցերևան քաղաք		8	կոոպ.	11,345	անդամ	մի	կոոպ.	1,418	ընդ
Ցերևանի գավ.		62	»	11,366	»	»	»	173	»
Էջմիածնի	»	48	»	14,528	»	»	»	303	»
Ն.-Բայազ.	»	14	»	3,885	»	»	»	277	»
Սուրմալուի	»	11	»	2,683	»	»	»	—	»
Ալեքպոլի	»	90	»	29,354	»	»	»	244	»
Ղազախի	»	22	»	10,910	»	»	»	3[illegible]6	»
Ղարսի	»	4	»	6,668	»	»	»	496	»
Զանգեզուր.	»	1	»	490	»	»	»	1,667	»
Յերկաթուղի		1	»	6,000	»	»	»	6,000	»
Լոռու	»	25	»	14,728	»	»	»	589	»
Ընդամենը		286	կոոպ.	111,957	անդամ	»	»	392	»

(Տես «Հայաստանի Կոոպերացիա»-ի 1920 թ. № 18)

Յեթե ի նկատի ունենանք, վոր յուրաքանչյուր ընտանի մեր յերկրում, միջին թվով բաղկացած ե 5 շնչից, նշանակում կոոպերացված ազգաբնակչության թիվը հասնում եր մոտավ-

պես 560,000 շնչի, վոր մեր յերկրի զանգվածների խոշոր տո-ն եր կազմում

Բայց կոոպերացիայի ծավալման զուգընթաց չեր նկատվում **շարժման խորացումն.** *այդ մասին տալիս ե ճիշտ բնորո-շում Հայկոոպի նախկին ղեկավարներից մեկը. «Չնայած կազ-մակերպված սպառողների այսպիսի մեծ թվին՝ սպառողական կոոպերատիվները վերջին ամիսներում մեծ մասամբ մատնված եյին անգործության: Սեփական նյութական լայն միջոցների և ապ-րանքների բացակայությունը, յերկրի տնտեսության դժվարին պայմանները, ռուբլու արժեքի անկումն՝ հաղորդակցության մի-ջոցների անկանոն վիճակը և մի շարք այլ հանգամանքների շնորհիվ՝ ստեղծվել ե մի դժվարին կացություն սպառող զան-գվածների համար: («***Վերածնունդ***» **ժողովածու, Հ. Լազարյա-նի հոդվածը**):*

Դաշնակցական Հայաստանում կոոպերացիան իր մի քանի -րյուր ապպարատներով հանդերձ՝ դարձել եր կատարյալ ֆիկ-ցիա—ապրում եր իր հոգեվարքի վերջին գալարումները. այդ մի-ջոցին կոոպերատիվ միավորներից շատ շատերը վորպես անույժ անանձնական հիմնարկներ՝ քայքայվում են ու կորչում, իսկ հետա-գա տարիներում նրանց կործանված ավերակների վրա բարձրա-նում ե **խորհրդային կոոպերացիայի—Միասկոոպի վերնաշենքը,** *վոր սկզբում թույլ, անորոշ ու տարտամ, իսկ այժմ ուժեղ ու -ական քայլերով բանել ե նոր ուղիներ և ունի գործնեյու-թյան գրավիչ հեռանկարներ:*

Խորհրդային իշխանությունն իր գործնեյության հենց ա-ռաջին որերին արմատական վերակազմության յենթարկեց կոո-պերացիան և նրա կենտրոն «Հայկոոպ»-ը՝ ձևակերպելով նրանց ֆունկցիաները հատուկ հրաման-վորոշումներով:

Խորհրդային Հայաստանում կոոպերացիան վերակազմվեց պատերազմական կոմմունիզմի վերջին ետապում և սրբագործվեց նը-րա հիմունքներով: Գոյություն ունեցող կենտրոնական ու շըր-ջանային կոոպկազմակերպությունները համապատասխան չլինե-

լով խորհրդային Հայաստանի Սոցիալիստական Հանրապետու-
թյան կարիքներին՝ լուծված է համարվում—Ալեքպոլի «Շիրակ»,
Ղամարլվի «Գառնի», Դիլիջանի, Լոռվա և Ն.-Բայազետի գավ-
առական Միություններն իրանց շրջաններով է համարվում
«Հայկոոպի» բաժանմունքներ:

Պարզ և վորոշ ձևակերպվում են խորհրդային կոոպերացի-
յի անմիջական անելիքները. «Աշխատավոր ազգաբնակչությ-
լայն մասսաների ջանքով ստեղծված կոոպերատիվ կազմակե-
պությունները կարող են պետական այնպիսի խնդիրների իր-
գործման լավ ապարատ դառնալ, վոր վերաբերում են կենս-
մթերքների, այնպես էլ գյուղական տնտեսության այլ և ա-
մթերքների բաշխման և մասամբ էլ հայթհայթման գործին»

«Սակայն մինչև այժմ Հայաստանում գոյություն ունեց-
կոոպերատիվ կազմակերպությունները սերտ կապով միացած չ-
յեղել կենտրոնի հետ»:

«Հաճախ նրանք գործել են աշխատավորների շահերին հ-
կառակ և չեն տվել այն արդյունքները, վորոնցից բանվոր-
գյուղացիական իշխանությունն իրավունք ունի պահանջե-
ներկա պատասխանատու մոմենտում:

«Առաջնորդվելով ՌՍՖՍՀ 1919 թ. մարտի 20-ի սպառող-
կան կոոպերացիային վերաբերվող դեկրետով և նպատակ ունե-
նալով աստիճանաբար մոտեցնել և միացնել ամեն տեսակի կո-
պերատիվ կազմակերպությունները, Պարժողկոմը վորոշում
վարկային ու փոխատու խնայողական ընկերությունները, ինչ-
պես և նրանց միությունները ձուլել տեղերում գործող և բաց-
վելիք սպառողական ընկերությունների և նրանց միություննե-
րի հետ, հանձնելով վերջիններին դրանց ակտիվն ու պասիվ-
կահավորությունը և անձնական կազմը»:

«Պարտականություն է դրվում սպառողական ընկերություն-
ների և նրանց միությունների վրա վարել վարկային և փոխա-
տու խնայողական կոոպերատիվ ընկերությունների և նրանց
միությունների գործառնությունները, ապրանքների գնման, ար-

անման, միջնորդական գործողության և այլ հարցերի վերա-
րյալ, վորոնք դեռ չեն կորցրել իրանց նշանակությունը Հայ-
ստանի քաղաքական հասարակական կազմի փոփոխմամբ»:

«Սպառողական կոոպերատիվներին և նրանց միություննե-
ն տրվում է իրավունք զարգացնել նաև արտադրողական ար-
նաբերական կոոպերատիվներին հատուկ գործառնություննե-
րը»:

«Միացման գործի գործադրման պարտականությունը,
ն և այդ հիմնարկությունների ձուլման կարգը, լիկվիդացիայի
մար ժամանակ նշանակելը և այլն դրվում է Պարժողկոմին
ց կազմակերպված կոոպերացիայի կենտրոնական վարչության
րա»:

«Այդ վորոշումները կյանքի մեջ կիրառելիս առաջարկվում է
ալուրջ հետևել, վորպեսզի կոոպերացիային մասնակցողների
ները և պետության կողմից զանազան կոոպերատիվների վրա
րված պարտականությունների իրագործումը չխառնվեն» (տես
ՍՍՀ «Կոոպերացիան և դեկրետներ» գրքույկ ա):

«Սպառողական կոոպերացիան, — գրում է Գ. Պճիկյանը,
դարձավ Պարժողկոմի տեխնիկական բաշխման որգան, առանց
որեն առևտրական ֆունկցիաների: Նա դադարեց գնել ու վա-
ել: Նրա ֆունկցիաները կայանում եյին միմիայն այն
ապրանքների բաշխման մեջ, վոր նա պիտի ստանար Պարժողկոմի
ահեստներից: Ահա այն վիճակը, վորին արժանացավ մեր սպա-
ողական կոոպերացիան զինվորական կոմմունիզմի շրջանում:
պառողական ընկերությունների խանութներում գտնվող ապ-
նքների բոլոր մնացորդները յենթարկվեցին հաշվառման և
ռնագրավվեցին Պարժողկոմի տեղական մարմինների կողմից:
Բռնագրաված ապրանքների ընդհանուր գումարը հասնում եր 30
ազար ռուբլու վոսկով: Այդ սպառողական ընկերությունները
նցյալից ժառանգած վերջին մնացորդներն եյին: Պարժողկոմ
յս շրջանում չունենալով ապրանքային մեծ ֆոնդ և միջոցներ՝
«Հայկոոպ»-ի միջոցով վոչ մի գործողություն չէր կատարում:

Յեվ այսպես, այս շրջանում մեր կոոպերացիան ներկայացնում է
պատարկություն, մի անկենդան դիակ: («Հայաստանի կոոպեր-
ցիա» № 1—4 1923 թ. Գ. Պիճիկյանի հոդվածը):

II

«ՆԵՊՆ» ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

1921 թ. գարնանը, Ռազմական կոմմունիզմը տեղի տվ- **տնտեսական նոր քաղաքականությանը**: Հայաստանի կոոպերացի- այի ասպարեզում այդ թեքումն արտահայտվեց սպառողակ- կոոպերացիայի մասին հրատարակված յերկու դեկրետով (192- թ. հունիսի 3-ի և նոյեմբերի 24-ի): Այս դեկրետներով կոոպ- րացիան ազատվում եր Պարժողկոմի ոժանդակիչ մարմնի դ- կատարելուց: Նրան վերապահվում է անկախ ու ինքնուրույ- լուծելու սպառողական կոոպերացիային վերաբերող խնդիրները: Միաժամանակ առաջարկվում է կառավարության բոլոր հիմնար- կություններին վերադարձնել կոոպերատիվից բռնագրաված բո- լոր ֆոնդերը: Կառավարության վորոշմամբ իբրև հատուցու- կոոպերացիայի կրած վնասների՝ «Հայկոոպ»-ին տրվում է վո- պես անվերադարձելի փոխատվություն զանազան ապրանքն- րով 13,000 **ռուբլի** վոսկու հաշվով և **մեկ միլիարդ** հ. խ. դ- (7.410 ռուբլի վոսկու հաշվով, նույն ժամանակի կուրսով): Յե- այսպես, Հայկոոպի վարչությունն իբրև անվերադարձելի փոխ- տվություն ստացավ ընդամենը 20.410 ռ. վոսկով:

Հայաստանի կոոպերացիայի 1921 թ. գործունեությունը պատկերացնելու համար առաջ ենք բերում մի քանի հատվա- քաղվածքներ Հայկոոպի Նախկին վարչության **Տնտեսական** գ- **րագույն Խորհրդին** ուղղած զեկուցումից:

Կազմակերպչական.—Հայկոոպի գործունեության վերջի- շրջանն սկսվում է 1921 թվի ապրիլի սկզբներից: Առաջի- ամիսները Հայկոոպի համար յեղել են գերազանցապես կազմա- կերպչական ամիսներ: Չնայած սրան՝ Հայկոոպը հիշյալ ժամա- նակամիջոցում կատարել է նույնպես վորոշ աշխատանք կոոպ-

-ցիայի միջոցով Հայաստանի քայքայված տնտեսությունը բա- -վելու գործին աջակցելու համար:

Մինչև ապրիլը, շնորհիվ Հայաստանում տեղի ունեցող դեպ- -քերի (քաղաքացիական կռիվ), կոոպերատիվ ապպարատն ան- -մակերպ վիճակում եր: Հայկոոպի վարչությունը հետագա -ամիսներում բաց է անում **հետևյալ 10 շրջանային բաժանմունք**- -ները. **Էջմիածնի**—12 գյուղական կոոպերատիվ ընկերություննե- -րով, **Դիլիջանի** բաժանմունք 9 կոոպ. Դարալագյազի և Սիս- -իանի բաժանմունք, **Լոռի-փամբակի** բաժան. 33 կոոպ., **Նոր**- **Բայազետի** բաժանմունք 12 գյուղ. կոոպ., Ալեքպոլի բաժան. -նք 33 կոոպ. և Ղափանի բաժանմունք 12 կոոպ. ընկ., Մեղ- -րի բաժ. 2 կոոպ. ընկեր. և Յելենովկայի բաժ. 5 կոոպ. ընկե- -րություններով: Կոոպերատիվ շինարարության գործը չեր -նարկվել Զանգեզուրում:

Բացի շրջանային բաժանմունքներից՝ Հայկոոպն ուներ **…սենյակներ առևտրական հետևյալ կետերում**—Թիֆլիսում -թումում, Բաքվում, Թավրիզում, Պոլսում, Ռոստովում և Ներ- -կայացուցչություն Արևմտյան Յեվրոպայում:

Հայկոոպի վարչության կազմը շնորհիվ կոոպերատիվների -նախկին անմխիթար վիճակի նշանակված է ժողովրդական կո- -միսարների Խորհրդի կողմից:

Ապրանքների փոխանակություն.—Հայկոոպի նպատակների -մեջ գլխավոր տեղը **պետք է բռներ յերկրի արտադրական ուժերի** **զարգացումը**: Սակայն Հայաստանի համար ստեղծված տնտե- -սական պայմաններում՝ ապրանքափոխանակությունը շարունա- -կում է կատարել դեռևս գերակշիռ դեր: Հայկոոպի և նրա բոլոր -ուղների ուժերի մեծ մասը կենտրոնացած եր **ապրանքափոխա**- **նակության** գործի վրա:

Հայկոոպի վարչությունը հնարավորություն չունեցավ ի- -գործել ապրանքափոխանակությունը մեծ մասշտաբով, այն- -ամենայնիվ կոոպերացիային վորոշ չափով հաջողվել եր շատ -ջաններում, յեթե վոչ արմատախիլ անել չարաշահությունը,

գոնե այն դնել վորոշ շրջանակների մեջ։ Հայկոոպն իր շրջա-նային բաժանմունքների միջոցով վասկու նախապատերազմյան արժեքով հայթհայթեց ապրանքափոխանակության միջոցով մ 70,000 ռուբլու մթերքներ, վորոնց մեջ գերիշխող տեղ են բռ-նում առաջին անհրաժեշտության առարկաները, որինակ.

Ցորեն պատրաստված է	4000	փութ
Գարի	9000	»
Գետնախնձոր	35,000	»
Կաղամբ	3,500	»
Ձու	25,000	հատ
Կենդանիներ (կ. կշռ.) .	6,500	փութ
Յուղ	1100	»
Փայտ	14,000	»
Մանուֆակտուրա . . .	60,000	ռուբլու։

Ապրանքափոխանակության միջոցով ձեռք բերված և այ գումարի հաշվին հանձնված եր Պարժողկոմատին զանազ ապրանքներ, առավելապես ուտելիքներ։ Պարժողկոմատի ավ ապրանքների զգալի մասն ապրանքափոխանակության չենթա կվեց մասամբ այն պատճառով, վոր նրանք համեմատաբար հ եյին գտնված բաժանմունքներում, մասամբ էլ այն պատճ ռով, վոր ապրանքների վորոշ մասն, իբրև անհամապատասխ գյուղացիության կարիքներին, չեր յենթարկվում ապրանք փոխանակության։

Արդյունաբերական ձեռնարկներ. — Հայկոոպն արդյուն բերական ձեռնարկների սկիզբը եր դրել՝ բանալով Յերևանու և շրջաններում ա) ոճառի գործարան, բ) մեքենաշարժ փայտ գործարան (Շահալիում), գ) մեքենագործարան, դ) թիթեղ գործարան, յե) ծխախոտի, զ) լուցկու գործարաններ, է) չու տանոցարան. ը) սրաքարի գործարան (Ալեքպոլում). թ) ձիթ հանքեր (Էջմիածնում), ժ) կաշվի գործարան, ժա) կոշիկնե գործարան (Թիֆլիսում) եայլն։ Այս ձեռնարկների գործիքնե և ունեցած նյութի արժեքը հավասար եր մոտավորապես 100,0 ռուբլու վոսկու։

Այս ձեռնարկներից վոմանց արտադրական ունակության ասին վորոշ գաղափար տալիս են հետևյալ թվերը.

ա) ոճառի գործարան ապր.—դեկտ.
3,000 փ., 13.000 ռուբլու
բ) չուստանոց Յերևանի
9,271 զ. » 5.562 »
սանդալ 433 զ. » 350 »
գ) կաշվի գործարան
նոյ.-դեկ. 50 զ. » 896 »
դ) ծխախոտի գործարան 2.000 »
ե) ձիթահանքեր
հոկտ.—դեկ. 200 փ. » 2.000 »

եայլն։

Գյուղատնտեսական ձեռնարկներ. — Հայկոոպը 1921 թ. րնանը ձեռնարկից ծխախոտի և չալթուկի մշակման, սակայն որհիվ գործն ուշ սկսվելուն և ցրտերին՝ այս ձեռնարկները պասված արդյունքը չտվին նույնիսկ նվազագույն չափով։ յկոոպն ունեցել է նույնպես բանջարանոց, այգի և գյուղա- նտեսական այլ մանր ձեռնարկներ, վորոնք կրել են տեղա- ն բնույթ և չեն տարվել մեծ չափերով։ Հայկոոպի վարչու- յան միջոցով կառավարությունը բաց թողեց մի միլիարդ ուբլի չեկերով՝ այգեգործներին վարկ տալու համար։ Այգե- ործների ընկերությունն այդ գումարի դիմաց պարտավորվել ր տալ Հայկոոպին իր հավաքած խաղողից ստացված գինու ամարժեք քանակը։

Հայկոոպի կազմակերպած հարյուրի հասնող բաշխող ու տադրող կոոպերատիվները, այսպես կոչված արտասահմանյան րասենյակներն ու գործակալությունները շատ թանգ նստեցին նվորա-գյուղացիական պետության վրա։ Հայկոոպը տնտե- ական նոր քաղաքականության յեռամյակում չեր անցել «Սցիլ- ան ու Խարիբդան»։ Հռչակավոր «Նեպ»-ը դեռևս չեր ազդել այկոոպի գործունեության վրա, չեր փոխել նրա նախկին ըն-

թացքը։ Կոոպերացիայի ասպարեզում՝ «Նեպ»-ի տիրապետությ բացակայությունն արդյունք էր գլխավորապես Հայաստանի րական պայմաններին և բղխում էր մեր կյանքի առանձնահ իրադարձումներից։

III

ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ՅԵՎ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

Ապրանքա-փոխանակման և բաշխման սիստեմը շար նակվեց մինչև 1922 թ. փետրվար-մարտ ամիսները։ Հայկոո բարդ ու բազմածախս ապարատն անհանդուրժելի ու անն րնոու համարվեց բանվորա-գյուղացիական իշխանության հ մար։ Հազարներ կլանող գավբաժանմունքներն ու արտգրասե յակները ցուցադրեցին իրանց ամբողջ սնանկությունը։

Հայաստանում կոոպերատիվ ցանցն աստիճանաբար նոսր նալով ու լուծվելով՝ ստեղծվեց կոոպերացիայի համար անոր ու անելանելի վիճակ։

Համաքաղաքային կոոպերացիայի կազմակերպման հետևա քով 1922 թ. սկզբներում հրապարակ յեկավ **բանվորական կո պերացիան**, վոր չափազանց կարճատև կյանք ունենալով հա դերձ՝ շատ թանգ նստեց Հայաստանի պրոլետարիատին։

Կենտրոնկոոպն իր բազմածախս ապարատով թույլ անօգտակար գործունեություն ունեցավ։ Այսպես կոչված գավ ռային բանկոոպներն անկազմակերպ ու անկենսունակ լինել դարձան ավելորդ բեռ կառավարության համար։

1922 թ. ընթացքում շարունակվեց կենտրոնների ինքնա բույն ու անկախ գործունեությունը։ Կոոպերացիայի ձուլման ավելորդ ապարատների լիկվիդացիայի և նոր շինարարությա հարցը հասունացած լինելով՝ 1923 թ. սկզբում ստացավ ի վերջնական լուծում։

Ամենքին զբաղեցնում էր այն միտքը, վոր մեր բաժա մունքները և արտասահմանյան գրասենյակները պետք է վերա ցնել ու ամեն ինչ տանել կոոպերատիվների միջոցով։ Հենց Հայկոոպ

հանգչական բաժնի մի շարք քննությունները յերևան են նել բաժանմունքներից շատերում, վոչ կոոպերատիվ ու վնա-կար գործունեություն։

Պարզված էր, վոր նրանք, իրանց առևտրական ոպերացիա-ի մեծ մասը կատարել են մասնավոր անձանց հետ։ Բաժան-նքներր Հայկոոպից ստանալով խոշոր միջոցներ՝ բնավ չեն ածել վերադարձնելու մասին. շատերը լայնացնելով շրջա-ր՝ ձեռնամուխ են յեղել այլ միջոցներով զանազան արդյու-րերական ու գյուղատնտեսական աշխատանքների, վորից և ամեծ վնասներ են տացել։ Այս ամենը նկատի առնելով՝ յկոոպի նոր վարչությունը 1923 թ. հունվարից հարվածային րգով, հրահանգչական բաժնի միջոցով լիկվիդացիայի յեն-րկեց բոլոր բաժանմունքները և տեղերում կազմակերպեց ակոոպներ, վորոնց միջոցով կոոպերացիան ավելի սերտորեն պվեց լայն մասսաների հետ։

1923 թվի մարտ ամսվա ընթացքում լիկվիդացիայի նթարկվեցին Հայկոոպի արտասահմանյան գրասենյակները։

Կոոպերացիայի վերակազմության մոմենտին Հայկոոպը ներ անհրաժեշտ ապրանքային ֆոնդ, չհաշվելով գույքը, վոր ծ մասամբ անպետքացել էր։ Արժեքավոր ապրանքներ մոտ .000 ր. արժողությամբ գրավ էյին դրված բանկերում. վոր-ազի այդ արժեքավոր ապրանքներն, ինչպես օրինակ՝ մետաքսը, ը, քիշմիշը ազատեյին գրավից, ստիպված յեղան կարճ ժա-նակում ռեալիզացիայի յենթարկել ունեցած 6.000 փ. նավթ Գրավից ազատած ապրանքները դնել շրջանառության մեջ, րով զգալի չափով ուժեղացրին Հայկոոպի ապրանքային ոնդը։

Հայկոոպի վերակազմության և կենտրոնկոոպի հետ ձուլ-ան մոմենտում ծառայողների շտատը հասնում էր 210 հոգու, ևտրական գործառնությունները այնքան ոգուտ չէյին տալիս, որպեսզի ծածկեն ահռելի չափերի հասնող ծախսերը։ Անհրա-շտ էր դուրս գալ ստեղծված նեղ վիճակից։ Յեվ այդ արվեց աշխատողների շտատը 210-ից հասցնելով 45-ի։

Հայաստանի կոոպերացիայի իրական վերակազմությունն[...] վերածնունդն սկսվել է մայիսի 7—11 **համահայաստանյան հա[...]գումարից հետո**, երբ կոոպերատորներին համար վերջնական[...]պես պարզվեցին Հայկոոպի ստրուկտուրան և Միասնական[...] շինարարական ուղիները: Համագումարն ընդունելով Խորհրդայ[...] Բանվորա-գյուղացիական կոոպերացիայի վարքագիծը՝ մշակ[...] ու կերտեց նրա շինարարությունը (տես. «Հայաստանի կոոպ[ե]րացիա» ամսագիրը № 5—8):

Կոոպերատիվ համագումարի նախօրյակին, Հայկոոպի [...] ժամանումների լիկվիդացիայի ընթացքում, Հայաստանի 10 գ[...]վառներում վերականգնվել են 17 միասնականներ և 8 գյուղկոո[...]ներ: Իսկ ներկայումս սպառկոոպերացիան ունի 43 **կազմակերպություններ**, որոնք բաժանված են ըստ գավառների հետևյալ կարգով: Երևանի գավառ—7 կոոպերատիվ, Էջմիածնի—[...] Ալեքպոլի—5, Լոռու-Փամբակի—10, Նոր-Բայազետի—3, Դիլ[...]ջանի—5, Դարալագյազի—2, Մեղրիի—1, Զանգեզուրի—5, [...] դամենը՝ 43 կոոպերատիվներ:

Այս աղյուսակից պարզ է, որ Հայկոոպը ձգտել է ուժ[...]ղացնելու գոյություն ունեցող միասնականները և գյուղկոոպներ[...] ըստ ամենայնի խուսափելով նոր կոոպերատիվ կազմակերպել[...] նախաձեռնությունից, միայն բացառիկ դեպքում, երբ այ[...] գավառի միասնական անկարող է լինել ընդգրկել ամբ[...] գործունեությունը՝ բավարարելով նրա նվազագույն կարի[...]ները, կազմ-բաժինը ստիպված է լինել մի քանի տեղ[...]րում բանալ նոր միասնականներ ու գյուղկոոպներ՝ ի նկա[...] ունենալով շրջանի տնտեսական աշխարհագրական դրությ[...] առանձնահատուկ պայմանները: Այսպես օրինակ՝ Էջմիածնի կոոպ[...] հնարավորություն չունենալով ընդգրկելու ամբողջ գավառը, Հայ[...] կոոպը տեղական իշխանության համաձայնությամբ կազմակերպ[...] պեց միասնականներ՝ Աշտարակում, Արարատում և Ղուրդուղուլի[...] շրջանում: Հայկոոպը կոոպերացիայի խտացման խնդրում ղեկա[...] վարվել է այն սկզբունքով, որ ավելի լավ է գոյություն ունե[...]

[...] կոոպերատիվները տնտեսապես և ֆինանսապես ուժեղաց[...] քան նրանց քանակը շատացնել ու խտացնել: Պետք է [...]ել և այն, որ համաձայն համագումարի որոշման ու կազմ-[...]նի և Հողժողկոմատի փոխադարձ համաձայնության՝ Հայ-[...]պի ցանցի մեջ մտնում են նաև արտելներ և գյուղատնտեսա-[...]ն ընկերություններ, որոնք տամարագրվել են Հողժողկոմի [...]ւղբաժնին:

Այժմ մի քանի խոսք էլ Հայկոոպի **ֆինանսական գրու-**[...]**ն մասին**՝ կոոպերացիայի վերակազմության առաջին շրջա-[...]մ (հունվար—սեպտեմբեր):

Ակտիվ

Հուլիսի 1-ը:

Ապրանք	20,57	տոկ.:
Զանազան անձինք	27,25	»
Ընթացիկ ծախսեր	13,07	»
Զան. հաշիվներ	39,11	»
	100	»

Հոկտեմբերի 1-ը:

Ապրանք	10,3	տոկոս
Զան. անձինք	51,3	»
Ընթացիկ ծախս	8,4	»
Ապրան. կոմիսիոն	0,5	»
» գրավ դրած	7,6	»
Զան. հաշիվներ	21,09	»
	100	»

Տարբերություններ

Ապրանք	10,54	տոկոս
Զան, անձ.	23,78	»
Ընթ. ծախս.	5,3	»

	Պասիվ	
Առ հուլիսի 1-ը։		
Հիմնական դրամագլ.	34,34	տոկոս։
Պահեստի դրամ	2?,33	»
Մուրհակներ	12,01	»
Օգուտներ 22 թ.	22,45	»
Զանազան հաշիվներ	8,38	»
	100	»

Առ հոկտեմբեր 1-ը։			
Հիմ. դրամագլ.	18,3	տոկ.:	-16
Պահեստի դրամ	11,7	»	—11
Մուրհակ	11,4	»	— 0
Զան. անձինք	33,4	»	
Օգուտ	9—7	»	-13
Զանազան հաշիվ.	15,5	»	
	100	»	

Երկու հաշվեկշիռների համեմատությունից երևում է—... ծվում դեբետորների հաշիվն ավելանում է 23,78 տոկոսով։ Դ... բետորների մեջ գլխավոր, տեղը բռնում են մեր միասկոոպները... վորոնց բաց է թողնված ապրանք հունվարից մինչև հունի... 99,688,79 կոպ., հունիսին—3,812 ր. 92 կոպ., հուլիսին—15,7... րուբլի, օգոստոսին—37,663 ր. 88 կոպ., և սեպտեմբերին 19,014 ր. 60 կոպ., ընդամենը—77,952 ր. 28 կոպ., իսկ հու... վար—օգոստոս ամիսներում միասկոոպներից ստացված է միա... 14,?0 ր. 11 կ. զանազան մթերքներ կամ բաց թողած է գ... մարի 8 տոկոսը։

Միասկոոպները կլանելով Հայկոոպի ապրանքային ֆոն... խոշոր տոկոսը՝ վերադարձրել են նրան մթերքներով հազիվ ... տոկոս, իսկ դրամով ավելի քան աննշան չափով. Հետևյալ ա... յուսակը կպատկերացնի Հայկոոպի և միասկոոպների հաշիվնե... դրությունն առ հոկտեմբերի 1-ը 1923 թ.

	Դեբետ	Կրեդիտ	Մնացորդ
...պերատիվներ			
...ևանի միասկոոպ .	46.593—46	28.806—01	17.787—45
...արվի »	1.476—67	758—05	718—62
...իածնի »	15.420—56	5.072—76	10.347—80
...քյուրի »	24.089—70	8.314—89	15.771—81
...րաքիլիսայի »	21.695—23	15.139—31	8.565—92
...ալոզիի »	2.777—29	764—29	2.013——
...ր Բայազետի »	23.281—10	6.284—22	16.086—88
...իշքենդի »	11.210—52	2.624—13	8.586—29
...որիի »	19.046—02	820—75	19.122—28
...իջանի »	11.420—73	3.079—85	8.340—98
...լահվերդիի »	1.092—55	—	1.092—55
...ր.-Ախտայի »	8.099—48	3.108—92	4.990—56
...տարակի »	3.762—88	390—57	3.363—31
...րիսի »	10.388—77	3.302—18	7.086—59
	201.251—87	76.477—93	124.773—94

Այսպիսով՝ միասկոոպները վերադարձրել են ինն ամսվա ...թացքում Հայկոոպի պարտքի միայն 38 տոկոսը։ Նույն ժամ-... ...տին միասկոոպի պարտքը Հայկոոպին հավասար էր 124.773 ր. ... կ., մինչդեռ նույն միասկոոպների միջոցները հասնում է ...ղիվ 20-25,000 ր., ուրիշ խոսքով Հայկոոպի տված վարկը մի-...ասկոոպներին ապահովված է հազիվ 20 տոկոսով, իսկ մնացած ...0 տոկոսը վոչնչով չի ապահովված։ Այս երևույթը վորոշում է ...եր միասկոոպների վարկունակության աստիճանը։ Պասիվում ...ակասում է հիմնական դրամագլուխը 28,06 տոկոսով և 1922 թ. ...ղումը—12,75 տոկոսով, այս հանգամանքը բացատրվում է այն ...անով, վոր Հայկոոպի և կենտրանկոոպի հին հաշիվների լիկվի-...ացիան կատարվել է ի հաշիվ հիմնական դրամագլխի և 1922 թ. ...գուտի։

Հայկոոպի ապպարատի միջոցով ապրանք բաշխվել է—իր ան-...ական ձեռնարկներին 6,6 տոկոս, կոոպերատիվներին—60,5 տոկ.,

պետական հիմնարկներին—6,3 տոկոս, Ցենտրոսոյուզին—8,9 տո-
կոս, Պետառին—7,0 տոկ., Բամբակկոմին—1,7 տոկոս, մասն
վորներին 9,0 տոկոս. իսկ ապրանքներ ստացվել է—իր սեփ
կան ձեռնարկներից—38,2 տոկ., կոոպերատիվներից—10,0 տոկ
պետական հիմնարկներից 8,4 տոկ., Ցենտրոսոյուզից 29,7 տոկ
Բամբակկոմից—0,4 տոկ., մասնավոր առևտրականներից 13,3 տ
կոս։ Ապրանքների հայթհայթման գործում, ինչպես տեսնում են
առաջնակարգ դեր խաղում են Հայկոոպի սեփական ձեռնարկն
րը։ Նրանք մատակարարել են ապրանք 38,2 տոկ.։ Ցերկրո
տեղը բռնում է Ցենտրոսոյուզը, վորը 1923 թ. հայթհայթ
Հայկոոպին—փոքրիկ բացառությամբ մանուֆակտուրա, մի ա
րանք, վորի կարիքն այնքան մեծ է այժմ. մեր սպառող ազգ
բնակչության համար։ Ապրանքների հայթհայթման գործում յե
րորդ տեղը բռնում են մասնավոր առևտրականները, մի տար
վորը վոչ միայն խորթ, այլ անհանդուրժելի պիտի լինի կոոպ
րացիայի համար, սակայն վորի ներկայությունը դեռ ես հն
րավոր չի լինում բացասել։

Չորրորդ տեղը բռնում են շրջանային կոոպերատիվներ
այսինքն այն կազմակերպված սպառողների կոնտինգենտը, վոր
իսկապես պիտի հանդիսանար իսկական հայթհայթողն, իր կե
տրոնի ապրանքային և առանձնապես մթերային հայթհայթող
Մինչդեռ նա հայթհայթել է ընդհանուր ապրանքի միմիայն 1
տոկոսը։

Կոոպերացիան իր գործունեության յեռամյակում հիմն
վորվում է մեր յերկրի արտադրողական հարաբերություններ
աշխատավորական զանգվածների ինքնագործ ու նախաձեռն
գործելակերպով.

Հայաստանի կոոպերացիան, ունենալով իր տնտեսական գո
ծունեությունը նոր ուղիներով՝ կարող կլինի խորհրդայնացմ
չորրորդ տարեդարձին կազմակերպել իր շուրջը բանվորա-գյու
ղացիական վողջ մասսաներին։

ՀԱՎԵԼՎԱԾ

ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԴԵԿՐԵՏԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Ցենտրոսոյուզի վարչությունը Ժողկոմխորհի հաստատման
ներկայացրել սպառկոոպերացիայի դեկրետի նախագիծը։ Նը-
տի առնելով այս նախագծի առանձին կարևորությունը և
ատակ ունենալով՝ դնել այն լայն մասսաների քննության,
ու՝ ստորև զետեղում ենք նախագծի բնագիրն ամբողջու-
ամբ։

Ժողկոմխորհի 1921 թ., ապրիլ 7-ին սպառկոոպերացիայի
սին հրատարակած դեկրետը՝ նոր տնտեսական քաղաքակա-
ւթյան անցման շրջանում, բոլոր քաղաքացիներին պարտավո-
ցնում էր անդամագրվել մի վորևէ միասնական սպառողական
կերության։

Այժմ, նոր տնտեսական քաղաքականության պայմանների
տեսանքով սպառկոոպերացիային տրված նշանակությունն և
ա հետագա զարգացման աջակցելու նպատակով՝ Ռուսաստանի
նտգործկոմը և Ժողկոմխորհը՝ ի փոփոխումն 1921 թ. ապրիլ
ի դեկրետի (С. У. Р. С. Ф. С. Р. 1921 թ. № 26, ст 150)։
րոշում է։

1) Ռուսաստանի բոլոր քաղաքացիներին իրենց սպառման
արդյունաբերական տնտեսական կարիքների համար իրավունք
տրվում կազմակերպելու սպառողական ընկերություններ։ Ըն-
երության գործունեության շրջանը, նրա կազմը, նույնպես և
անց պատասխանատվության չափ հանդեպ ընկերության գոր-
երի սահմանվում է կանոնադրությամբ։

2) Սպառողական ընկերության անդամագրվելը և նրանից
եռանալ կամավոր է։

3) Անդամների նվազագույն թիվը, վորի հիման վրա կա-
ող է բացվել և գործել սպառողական ընկերությունը՝ սահ-
անում է շրջանային կամ նահանգական (կամ նրան համապա-

տասխանող) սպառողական ընկերության միության՝ ըստ
շրջանի առանձնահատկությունների և կենցաղի և համաձ
Ցենտրոսոյուզի հրատարակած հատուկ հրահանգների:

4) Սպառողական ընկերության իրավունք է տրված
ձեռք բերել և արտահանել (սաման ու ծախման միջոցով, փ
խանակությամբ և այլն) գյուղատնտեսության, անասնապահ
թյան և գործարանային արդյունաբերության ապրանքներն
մթերանները. բ) կոմիսիոն սկզբունքներով ազգաբնակչությ
մեջ տարածել պետարդյունաբերության ապրանքները. գ) կ
մակերպել ֆիրմաներ, ցուցադրական կայաններ և նման հի
նարկներ. դ) հավաքել և վերամշակել հում նյութեր. ե) ղեկ
վարել գյուղատնտեսության, անասնապահության և գործար
նային ապրանքների արտադրությունը. զ) կատարել առևտր
միջնորդական և կոմիսիոն գործունեություններ իր անդամն
աշխատած մթերքների արտահանման և հայթհայթել նրանց ա
տեսության համար պահանջվող գործիքները, մեքենաները
նյութերը, է) բանալ պահեստներ իր անդամների մթերքն
պահելու և նրանց տալ արդյունաբերության գործիքներ մա
նակավորապես օգտագործելու համար 5) կատարել վարկայ
գործողություններ, վորի համար սպառողական ընկերությ
ները և նրանց միությունները բաց են անում վարկային հ
տուկ բաժանմունքներ, վորոնք գործում են Նարկոմֆինի և Ցե
տրոսոյուզի համաձայնությամբ կազմված կանոններով, թ) տ
նել կրթական աշխատանքներ, ժողովրդականացնել կոոպե
ցիայի գաղափարները և նրա խնդիրները լայն մասսաների
դասախոսությունների և զրույցների միջոցով.

Ծանոթություն. Սպառկոոպերացիայի կրթական-լուս
վորական աշխատանքները, լուսժողկոմի աշխատանքն
հետ համաձայնեցնելու նպատակով, այդ աշխատանքն
պիտի տարվեն լուսժողկոմի վերահսկողության կողմից մշ
ված հրահանգներով:

5.) Սպառողական ընկերությունները կարող են և ծառա

չ անդամների համար, համաձայն ընդհանուր ժողովի վորոշած
մունքներով:

6) Սպառողական ընկերությունները, նույնպես և շրջանա-
ն ու նահանգական սպառողական կոոպերատիվների միություն-
րը առմարագրման որից ըստ § 10-ի և օգտվում են իրավական
նձի իրավունքով ու կարող են որենքների սահմանում կնքել
այմանագրեր, ընդունել պատասխանատվություն, դատարա-
նում հարց հարուցել և դատական կարգով և հաշտարար դատա-
րանի միջոցով հարցերին պատասխանել, նույնպես կատարել բո-
ր գործառությունները, վոր նախատեսված են կանոնադրությամբ:

7. Սպառողական ընկերությունների սեփական միջոցները
ազմվում են մուտքի ու փայավճարներից, նույնպես և մաքուր
ւթի հատկացումներից: Զբավոր ազգաբնակչության անդամա-
կցությունը հեշտացնելու նպատակով վորոշվում է մուտքի վճար-
ման և փայավճարի ամենաբարձր նորման՝ մուտքի համար 50
ոպեկ. և փայ 5ր. վոսկով: Մուտքի վճար մուծողը դառնում է ըն-
կերության անդամ: Մուտքի և փայի վճարման համար թույլա-
տրվում է մաս մաս մուծել, ինչպես և ընդհանուր ժողովների
վորոշման համաձայն՝ ապրանքապատման պրեմիաները կարելի յե
վերածել անդամավճարների:

Ծանոթություն. Փայերի քանակական ավելացումը ան-
դամին չի ընձեռում արտոնություններ՝ ընկերության գոր-
ծերի վարման և սեփական ծառայությունների համար:

8) Սպառողական ընկերության կառավարող մարմիններ հան-
դիսանում են՝ ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը) և վար-
չությունը: Ընդհանուր ժողովի վորոշմամբ կարող է կազմակերպ-
վել և խորհուրդ: Ստուգման մարմինն է քննիչ հանձնաժողովը:
Վարչական և քննիչ հանձնաժողովի կազմը և ընտրության կար-
գը նույնպես և ընկերության հաշվետվությունը և գործերի քըն-
նության ձևերը սահմանվում են կանոնադրությամբ:

Ծանոթություն.— Սպառողական ընկերություններին
և նրանց միություններին ակտիվ և պասսիվ ընտրողական
իրավունք ունեն այն քաղաքացիները, վորոնց հանրապե-
տության սահմանադրությամբ թույլատրված է ընտրելու
և ընտրվելու բանվորա-գյուղացիական Խորհուրդներում:

9. Սպառողական ընկերությունները միանում են շրջանա-
յին կամ նահանգական միություններին (կամ նրանց համապա-

տասխանող միությունների). միությունների կառավարող մարմինները ընտրվում են այն լիազորների ժողովում, վորոնք անդամ են միության և գործում են նրանց կանոնադրության համաձայն:

10) Սպառողական ընկերությունների (§ 1) և նրանց միությունների, հիշատակված § 9-ում կանոնադրությունները պետք և համապատասխանեն հաստատված որինակելի կանոնադրության, որենսդրական կարգով և տոմարագրվում են՝ առաջինները յենթակա ռայոնում կամ նահանգական սպառողական ընկերության միության մեջ—իսկ յերկրորդները—տվյալ հանրապետության ընդգրկող սպառկոոպերատիվների միության բացակայության դեպքում՝ Ցենտրոսոյուզում նրա գոյության դեպքում այն կարգով, վոր կսահմանվի Ցենտրոսոյուզի համաձայնությամբ:

Ծանոթություն.— 1. Մինչև սպառողական ընկերության և միության կանոնադրության հրատարակումը § 9-ում նշանակվածները, ղեկավարվում են Ցենտրոսոյուզի լիազորների ժողովում հաստատված կանոնադրությամբ:

Ծանոթություն.— 2. Շրջանային կամ նահանգական միությունը յերբ մերժում է սպառողական ընկերության տոմարագրումը, այդպիսի դեպքում ընկերությունը կարող է բողոքել հանրապետական մասշտաբով գործող միության յերկու շաբաթվա ընթացքում, իսկ այդպիսի միության բացակայության դեպքում Ցենտրոսոյուզին:

11. Հանրապետության միությունները կարող են միանալ ու հիմնել սպառողական կոոպերատիվների հանրապետական միություն: Այս միությունների կանոնադրությունները հաստատվում է Ցենտրոսոյուզի կանոնադրութ. հիման վրա (§ 12) և Ցենտրոսոյուզի վարչության յեզրակացությունը ստանալուց հետո

12. Սպառողական ընդհանուր կոոպերատիվների միությունն է համարվում Ցենտրոսոյուզը վորի կանոնադրությունը հաստատում է Сто С.С.Р.

13. Սույն դեկրետի կյանքի մեջ կիրառումը և այդ առթիվ համապատասխան հրահանգների հրատարակումը հանձնվում է Ցենտրոսոյուզին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք . . . . 3—4 յեր.
1. Կոոպերատիվ շինարարությունը Հայաստանում . . 5—8 »
2. Հայաստանի կոոպերացիայի ստրուկտուրան 9—17 »
   Ա. Հայկոոպը
   Բ. Բանվորա գյուղացիական միասնական կոոպերացիան—Միակոոպը.
   Գ. Կոոպերատիվ ազատ խմբավորումներ գյուղկոոպներ, բանկոոպներ և կամկոոպներ:
3. Հայաստանի կոոպերացիայի նոր ուղիները 18—23 »
4. Կոոպերացիայի ֆինանսները . . . . . 24—29 »
5. Կոոպերացիայի դերը յեվ անելիքները գյուղում 30—43 »
   Ա. Հայաստանը գերազանցորեն գյուղացիական յերկիր է.
   Բ. Առևտուրը.
   Գ. Յերկրագործություն.
   Դ. Անասնապահություն.
   Ե. Մեր թանկարժեք կուլտուրաները.
   Զ. Շերամապահություն.
   Է. Խաղողագործություն:
6. Գյուղական միակոոպի դերն յեվ անելիքները 44—46 »
7. Մանր վարկն յեվ միակոոպը . . . . . . 47—49 »
8. Գյուղական տնտեսությունն յեվ միակոոպը 49—51 »
9. Միասնական ուղիներով . . . . 52—55 »

10. Ծովեյններէ գէրն չէր անեիքը Հայաստանում 55—64 »
11. Հասունացած հարցեր . . . . . . 64—67 »
12. Լենին ու կոոպերացիան . . . . 67—73 »
13. Մեր կենցաղն չէ կոոպերացիան . . . 74—78 »
14. Բնակարանային կոոպերացիան . . . . 78—88 »
15. Կազմակերպչական նոր ձևեր . . . . 88—90 »
16. Կոոպերատիվ նոր մեթոդներ . . . . 91—94 »
1. Կազմակերպչական.
2. Գյուղատնտեսության մասին.
3. Ֆինանսական։
17. Գյուղատնտեսական կոոպերացիան 91—135 »
ա. Կոոպերացիայի դերը և ոլորտը.
բ. Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման եղանակները.
գ. Վարկային կոոպերացիան Անդրկովկասում.
դ. Գյուղատնտեսական կոոպերացիան Ռուսաստանում.
ե. Եզրափակումներ։
18. Կաթնատնտեսական կոոպերացիան 136—163 »
ա) Կազմակերպչական ուղիներ.
բ) Պատմական ակնարկ.
գ) Անանձնապահությունն Անդրկով.
դ) Կոոպերատիվ կաթնատնտեսություն.
ե) Ամփոփումներ։
19. Հայկոոպը խորհրդայնացման ժամանակում 164-178 »
ա) Ռազմական-կոմունիզմի ուղիներով.
բ) «ՆԷՊ»-ն և կոոպերացիան.
գ) Լիկվիդացիայի և վերակազմության շրջան։
20. Հավելված . . . . 179—182 »
Սպառկոոպերաց. ընկերութ. նախագիծը,